ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ (ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ)

Ծրագրի ղեկավար՝ Ա. Մանուկյան
Ծրագրի իրականացման համար պատասխանատու փորձագետ՝ Արմեն Քթոյան

ԵՐԵՎԱՆ
2018

Open Society Foundation
Armenia

Սույն զեկույցի պատրաստումը և տպագրությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ (դրամաշնորհ N19757): Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակի կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան Կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

ՀՏԴ 336.1:37
ԳՄԴ 65.261.3+74

Սույն հետազոտությունը նախատեսված է կրթության ոլորտում պետական բյուջեի ծախսերի արդյունավետության խնդիրներն ուսումնասիրող ԶԼՄ-ների, հետազոտական, կրթական հանրույթի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար:
Հրապարակման մեջ ամփոփված են ՀՀ կրթության ոլորտի հիմնական արդյունքային ցուցանիշների, կրթության բյուջետային ֆինանսավորման, ոլորտում իրականացված վարկային ծրագրերի և դրանց շրջանակներում կատարված գնումների հետազոտության և մոնիթորինգի արդյունքները, նաև՝ ներկայացված են կրթության տարբեր մակարդակներում կատարվող բյուջետային ծախսերի արդյունավետության համակարգային գնահատման մեթոդական մոտեցումներ, որոնք հիմնված են ծրագրանպատակային բյուջետավորման արդի սկզբունքների վրա:
Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել կրթության պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացման խնդիրների լուծման համար:

ISBN 978-9939-1-0864-3

NCPPR

Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ

Հասցե՝ք. Երևան, Մանուշյան փող, 101
www.policyobserver.am
www.facebook.com/PolicyObserver/

Բովանդակություն

Հապավումների ցանկ 4

ՆԱԽԱԲԱՆ 5

1. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 6
1.1. Ընդհանուր նկարագրություն. հիմնական վիճակագրական ցուցանիշները 6
1.2. Կրթության բյուջետային ֆինանսավորումը Հայաստանում....23

2. ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԸ 35
2.1. Կրթության ոլորտի վարկային ծրագրերը 35
2.2. Կրթության ծախսերի ֆինանսավորումը վարկային ծրագրերի շրջանակներում 37
2.3. Ամփոփում 43

3. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ: ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ 44
3.1. Ծրագրի նկարագիրը 44
3.2. Ծրագրի արդյունքների գնահատում....45
Բաղադրիչ 1. Հանրակրթության որակի բարելավում 45
Ենթաբաղադրիչ 1.1. Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում....45
Ենթաբաղադրիչ 1.2 Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը....49
Ենթաբաղադրիչ 1.3 Կրթության համակարգում տվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում....52
Ենթաբաղադրիչ 1.4 Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով 54
Բաղադրիչ 2. Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը 57
Բաղադրիչ 3. Ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում 59
3.3. Ամփոփում....60

4. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ §ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ: ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ 61
4.1. Ներածություն....61
4.2. Գնումների պլանը և դրա կատարման ընթացքն ըստ ծրագրի բաղադրիչների....61
Բաղադրիչ 1. Հանրակրթության որակի բարելավում 61
Ենթաբաղադրիչ 1.1. Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում....61
Բաղադրիչ 2. Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը 66
Բաղադրիչ 3. Ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում 71
4.3. Ամփոփում և եզրակացություն....71

5. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ 73
5.1. Ներածություն 73
5.2. Արդյունավետության գնահատման ընդհանուր խնդրադրումը և հիմնական գործիքները....73
5.2.1. Արդյունավետության գնահատման հայեցակարգային մոտեցումները....73
5.2.2. Արդյունավետության գնահատման համակարգը....75
5.2.3. Արդյունավետության ցուցիչների սահմանումը 76
5.2.4. Արդյունավետության ցուցիչների առավելությունները և թերությունները. 77
5.2.5. Արդյունավետության ցուցիչների բազմության ընտրությունը 78
5.2.6. Արդյունավետության հիմնական ցուցիչների սահմանումը....78
5.2.7. Արդյունավետության ցուցիչների օգտագործումը հանրային կառավարման ոլորտում....79
5.2.8. Արդյունավետության ցուցիչների կիրառությունը կրթության ոլորտում....80
5.2.9. Կրթության ոլորտում արդյունավետության ցուցիչների հիմնական տիպերը....80
5.3. ՀՀ կրթության ոլորտում արդյունավետության հիմնական ցուցիչների առաջարկվող համակարգը և դրա բաղադրիչները....81
5.3.1. ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում արդյունավետության գնահատման ցուցիչների առաջարկվող համակարգը....81
5.3.1.1. Կրթական և հետազոտական բնույթի գործառնություններ 81
5.3.1.2. Կրթական գործունեության արդյունավետության ցուցիչներ....83
5.3.1.3. Կառավարչական բնույթի գործառնություններ....84
5.3.2. Հանրակրթության ոլորտի արդյունավետության ցուցիչների առաջարկվող համակարգը....85
5.4. Արդյունավետության ցուցիչների ընդհանրացման մոտեցումները....87
5.4.1. Ցուցանիշների ինտեգրման անհրաժեշտությունը և ընդհանուր խնդրադրումը....87
5.4.2. Արդյունավետության գնահատումը համաթվային մոտեցմամբ....88
5.4.3 Արդյունավետության գնահատման էկոնոմետրիկական մեթոդները....89
5.4.4. Արդյունավետության ցուցիչների ընդհանրացումը գործոնային վերլուծության գործիքակազմի կիրառմամբ 89
5.5. Ամփոփում....90

6. ԱՄՓՈՓԻՉ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 91
6.1. Ամփոփիչ եզրակացություններ 91
6.2. ՀՀ կրթության ոլորտում առանձին խնդիրների լուծման մեր տեսլականը, նախաձեռնություններն ու առաջարկությունները....96

Հավելված. Ծրագրի իրագործման արդյունքային և միջանկյալ ցուցիչների թիրախային մակարդակներն ու դրանց փաստացի իրականացման աստիճանը 100

Հապավումների ցանկ

ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԵՊՀ	Երևանի պետական համալսարան
ԵՊԿ	Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա
ԾԻԳ	Ծրագրերի իրականացման գրասենյակ
ԿԱԵ	Կենտրոնական և Արևելյան Եվրոպա
ԿԲԾ	«Կրթության բարելավում» վարկային ծրագիր
ԿԾԿ	Կրթական ծրագրերի կենտրոն
ԿՈՀԾ	«Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագիր
ՎԶԳ	Վաղ զարգացման գործակից
ԿԲԾ	«Կրթության բարելավում» վարկային ծրագիր
ԿԳՆ	Կրթության և գիտության նախարարություն
ԿԾԿ	Կրթական ծրագրերի կենտրոն
ԿՏԱԿ	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն
ՀԱԱՀ	Հայաստանի ազգային ագրարային համալսարան
ՀԱՊՀ	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀՎԿ	Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե
ՀՊՄՀ	Հայաստանի պետական մանկավարժական համալսարան
ՀՖԿՍՊԻ	Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ
ՃՇՀԱՀ	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան
ՄԳՇ	Մոնիթորինգի և գնահատման շրջանակ
ՆԴՀ	Նախադպրոցական հաստատություն
ՆՄՀ	Նորարարությունների մրցակցային հիմնադրամ
ՇՊՀ	Շիրակի պետական համալսարան
ՊԿԱ	ՀՀ պետական կառավարման ակադեմիա
ՊՄԺԾԾ	Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն

ՆԱԽԱԲԱՆ

Հաշվետվությունում ամփոփված են ՀՀ-ում կրթության ոլորտի ընդհանուր նկարագրությունը՝ հիմնվելով պաշտոնական վիճակագրության աղբյուրներում պարունակվող տեղեկատվության վրա, հանրապետությունում պետական բյուջեից կրթության ֆինանսավորման ներկա պատկերն ու փոփոխման միտումները, նաև՝ ընդհանուր գծերով նկարագրված են ՀՀ-ում կրթության բյուջետային ֆինանսավորման արդյունավետության գնահատման գործընթացն ու սկզբունքները, մեթոդաբանության հիմնադրույթները, որոնցով նպատակահարմար է կատարել ՀՀ-ում կրթության բյուջետային ֆինանսավորման արդյունավետության համալիր գնահատում:

Հաշվետվությունը ներառում է նաև ՀՀ կրթության ոլորտում իրականացվող վարկային ծրագրերի ընթացքի դիտարկման արդյունքները, «Կրթության բարելավում» վարկային ծրագրով նախատեսված արդյունքների իրագործման աստիճանի գնահատումը, գնումների պլանի կատարման դիտարկումը:

Հաշվետվության կարևոր բաղադրիչ է կրթության արդյունավետության ցուցիչների համակարգը, որը մշակվել է ըստ հանրակրթության և բարձրագույն կրթության մակարդակների՝ հիմնվելով ոլորտում առկա օրինակելի փորձի վրա:

Հետազոտության մեթոդաբանությունը և տեղեկատվության աղբյուրները

Հետազոտության մեթոդաբանական հենքը կազմում են հետազոտության առարկայի, այն է՝ կրթության արդյունավետության իմաստավորման, ճանաչողության և գնահատման՝ միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող մեթոդները, սկզբունքներն ու կատեգորիաները: Մեթոդների շարքում դիտարկվել են արդյունավետության քանակական և որակական գնահատման, պարամետրական և ոչ պարամետրական մեթոդները, հետազոտվել են կրթության ոլորտում ծախսերի արդյունավետության գնահատման տնտեսամաթեմատիկական, վիճակագրական, էկոնոմետրիկական մոդելներ, ուսումնասիրվել է ՀՀ կրթության ոլորտում պետական բյուջեի ծախսերի արդյունավետության գնահատումներում դրանց կիրառման հնարավորությունների շրջանակը:

Կատարված հաշվարկներում և ուսումնասիրություններում օգտագործվել են ՀՀ կառավարության, ՀՀ վիճակագրական կոմիտեի, ֆինանսների նախարարության, այլ երկրների պետական վիճակագրության մարմինների և ֆինանսների նախարարությունների հրապարակումները, Համաշխարհային բանկի համաշխարհային զարգացման ցուցիչները (World Development Indicators), UNESCO-ի կրթության ոլորտին առնչվող վիճակագրական հրապարակումները, Համաշխարհային տնտեսական ֆորումի Գլոբալ մրցունակության զեկույցները, հայաստանյան և արտասահմանյան կազմակերպությունների ու փորձագետների՝ կրթության ոլորտում կատարված առանձին հետազոտությունները և հրապարակված զեկույցները, մասնավորապես՝ դրանցում օգտագործված առանձին տվյալներ ու ստացված գնահատականներ:

1. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1.1. Ընդհանուր նկարագրություն. հիմնական վիճակագրական ցուցանիշները

Կրթական ծառայություններ

2017թ. ՀՀ-ում մատուցված կրթական ծառայությունների ընդհանուր ծավալը[1] կազմել է 52.9 մլրդ դրամ (ծառայությունների ընդհանուր կառուցվածքում կրթական ծառայությունների տեսակարար կշիռը կազմել է 3.6%): 2007թ. կրթական ծառայությունների ծավալը կազմել է 33.1 մլրդ դրամ կամ ընդհանուր ծառայությունների 5.5% (գծանկար 1.1):



Գծանկար 1.1. Կրթական ծառայությունների ծավալը ՀՀ-ում[2]

Կրթական ծառայությունների ծավալը ՀՀ-ում աճի միտում է ցուցաբերում, սակայն միաժամանակ նվազում է ծառայությունների ընդհանուր հատվածում կրթական ծառայությունների մասնաբաժինը:



Գծանկար 1.2. Երևանի մասնաբաժինը ծառայությունների հատվածում

1 Ներառում է կրթական ծառայությունների հետևյալ բաղադրիչները. նախադպրոցական, տարրական, միջնակարգ, նախնական, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական, այլ կրթություն՝ մարմնամարզության, սպորտի, մշակույթի բնագավառում, հաշվապահական, օտար լեզուների, համակարգչային և այլ դասընթացներ:

2 Սույն բաժնում գծանկարների և աղյուսակների տվյալների աղբյուրները ՀՀՎԿ հրապարակումներն են (համապատասխան տարիների Հայաստանի վիճակագրական տարեգրքերը, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը ամսական զեկույցները, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը տարեկան հրապարակումները), ՀՀ պետական բյուջեի մասին օրենքները և բյուջետային բացատրագրերը:

Կրթական ծառայությունների տարածքային համակենտրոնացման մակարդակը ՀՀ-ում խիստ բարձր է, ըստ որում՝ ավելի բարձր, քան ծառայությունների հատվածում ընդհանրապես: Երևանի մասնաբաժինը կրթական ծառայությունների կառուցվածքում կազմում է 86.8%, այն դեպքում, երբ ծառայությունների հատվածում մայրաքաղաքի մասնաբաժինը 80.6% է (գծանկար 2.2): Ավելին, կրթական ծառայությունների ոլորտում Երևանի մասնաբաժինը 2015-ից աճի միտում է ցուցաբերում: Ըստ այդմ, պետք է փաստել, որ տարածքային համաչափ զարգացման քաղաքականության ուղենիշերը, առնվազն՝ կրթության մասով, չեն իրագործվել:



Գծանկար 1.3. Կրթական ծախսերը սպառողական ծախսերի կառուցվածքում

ՀՀ տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքում կրթական ծախսերի մասնաբաժինը կազմում է ընդամենը 1.5%, ինչը շատ ավելի ցածր է՝ նախորդ տարիների համեմատությամբ (գծանկար 1.3): Մյուս կողմից, ցուցանիշի այս մակարդակը փոքր-ինչ ավելի բարձր է, քան, օրինակ, Ուկրաինայի և Մոլդովայի համապատասխան ցուցանիշը, սակայն ցածր է Վրաստանի մակարդակից (գծանկար 1.4):



Գծանկար 4. Կրթական ծախսերը սպառողական ծախսերի կառուցվածքում, ըստ առանձին երկրների (2016թ.), %

Այնուհանդերձ, չնայած համադրելի երկրներում իրավիճակը հիմնականում ավելի բարվոք չէ, սակայն կրթության ոլորտում տնային տնտեսությունների ներդրումների խիստ ցածր մակարդակը, մի կողմից պայմանավորված լինելով օբյեկտիվ իրողություններով (մասնավորապես՝ սպառողական ծախսերի կառուցվածքում պարենային ծախսերի առաջնահերթությամբ), մյուս կողմից՝ մարդկային կապիտալի զարգացման գերակայության թուլացման և հեռանկարում՝ ինովացիոն հենքի վրա տնտեսության մրցունակության բարձրացման մոդելին անցման անհնարինության հետ կապված լրջագույն մտահոգություններ է առաջ բերում:
Առավել բարձր եկամտային խմբում (քվանտիլում) գտնվող տնային տնտեսությունները կրթական ծախսերին ուղղում են ընդհանուր ծախսերի 2.0 տոկոսը, այն դեպքում, երբ առավել ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների խումբը՝ ընդամենը 0.2% (գծանկար 1.5): Ընթացիկ տասնամյակում տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքում կրթության ծախսերի մասնաբաժինը որակապես ցածր է նախորդ տասնամյակի մակարդակներից:



Գծանկար 1.5. Կրթական ծախսերը սպառողական ծախսերի կառուցվածքում, ըստ ՀՀ տնային տնտեսությունների առանձին եկամտային քվանտիլների, %

Եզրակացություն #1. ՀՀ-ում կրթական ծառայությունների աճի տեմպն ավելի ցածր է, քան ծառայությունների ընդհանուր հատվածի աճը: Ծառայությունների ընդհանուր հատվածում կրթական ծառայությունների մասնաբաժինը տարեցտարի նվազում է:

Եզրակացություն #2. Կրթական ծառայությունների տարածքային համակենտրոնացման մակարդակը ՀՀ-ում խիստ բարձր է, ըստ որում՝ ավելի բարձր, քան ծառայությունների հատվածում ընդհանրապես: Տարածքային համաչափ զարգացման քաղաքականության ուղենիշերը կրթության ոլորտում չեն իրագործվել:

Եզրակացություն #3. ՀՀ տնային տնտեսությունները կրթական ծառայություններին ուղղում են իրենց ծախսերի շատ փոքր մասը՝ ընդամենը 1.5%-ը, ինչը նախորդ տարիների համեմատ 2-3 անգամ պակաս է: Սա կարելի է համարել մարդկային կապիտալի զարգացման գերակայության թուլացման վկայություն, ինչը մտահոգություններ է առաջացնում երկարաժամկետ հատվածում մրցունակ տնտեսություն կառուցելու հնարավորությունների մասով:

Եզրակացություն #4. Ցածր եկամտային խմբում գտնվող տնային տնտեսությունները կրթությունում 10 անգամ պակաս ներդրում են կատարում, քան բարձր եկամտային խումբը ներկայացնող տնային տնտեսությունները: Սա նշանակում է, որ ցածր եկամտային խմբում մարդկային կապիտալի զարգացման հնարավորությունները խիստ սահմանափակ են, նաև՝ սահմանափակ են աղքատությունն ինքնուրույն հաղթահարելու հնարավորությունները:

Նախադպրոցական կրթություն

2017թ. Հայաստանում գործել է 868 նախադպրոցական հաստատություն (808-ը համայնքային ենթակայության, 10-ը՝ գերատեսչական և 50-ը՝ ոչ պետական), որտեղ հաճախել է 76.4 հազար երեխա: Վերջին 10 տարիների ընթացքում նախադպրոցական հաստատությունների թիվն ավելացել է մոտ 150 միավորով, իսկ հաճախող երեխաների թվաքանակը՝ 26 հազարով (2000թ. համեմատությամբ աճը կազմել է 65%): Միաժամանակ, 2000-ի համեմատ մոտ 14 տոկոսային կետով ավելացել է նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների ընդգրկվածության հարաբերական ցուցանիշը (տոկոս՝ համապատասխան տարիքի երեխաների թվաքանակի նկատմամբ) և 2017թ. կազմել է շուրջ 31 տոկոս (գծանկար 1.6):



Գծանկար 1.6. Երեխաների թվաքանակը նախադպրոցական հաստատություններում

Սակայն մտահոգիչ է, որ գյուղական բնակայրերում երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում շատ ավելի ցածր է, քան քաղաքներում (գծանկար 1.7): Դրանով հանդերձ, լավատեսական է դիտարկման վերջին տարվա ընթացքում գյուղական բնակավայրերում ՆԴՀ-ներում երեխաների ընդգրկվածության առաջանցիկ աճը:



Գծանկար 1.7. Երեխաների թիվը նախադպրոցական հաստատություններում՝ տոկոս համապատասխան տարիքի երեխաների թվաքանակից

Միջազգային փորձը վկայում է, որ երեխաների նախադպրոցական կրթությունը հետագա տարիների ուսումնառության արդյունավետությունը պայմանավորող նշանակալի գործոն է հանդիսանում: Ի մասնավորի, ըստ առանձին երկրներում կատարված ուսումնասիրությունների, հանրակրթական դպրոցի ամփոփիչ քննությունների գնահատականները նախադպրոցական կրթություն ստացած աշակերտների մոտ ավելի բարձր են: Ուստի, նախադպրոցական կրթության հասանելիության ապահովումը և նախակրթարաններում երեխաների ընդգրկվածության աստիճանի բարձրացումը պետք է դիտարկել որպես կրթական համակարգի արդյունավետությունը պայմանավորող նշանակալի գործոն:

Նախադպրոցական հաստատությունների, նաև՝ դրանցում հաճախող երեխաների տարածքային բաշխվածությունը խիստ անհամաչափ է: Այսպես, միայն Երևանին բաժին է ընկնում հանրապետությունում գործող ՆԴՀ-ների 25%-ից ավելին, իսկ դրանցում հաճախող երեխաները կազմում են հանրապետության բոլոր ՆԴՀ-ներ հաճախող երեխաների 43%-ը (գծանկար 1.8): Ավելին, ՆԴՀ-ների շուրջ 50%-ը գործում է Երևանում, Շիրակի և Արմավիրի մարզերում,

իսկ ՆԴՀ-ներ հաճախող երեխաների թվաքանակի մեծությամբ Երևանին հաջորդում են Արարատի և Կոտայքի մարզերը, որտեղ ՆԴՀ հաճախող երեխաների գումարային թվաքանակը 45.6 հազար է կամ հանրապետությունում ՆԴՀ հաճախող երեխաների ընդհանուր թվի 60%:



Գծանկար 1.8. Երևանի մասնաբաժինը նախադպրոցական կրթության հիմնական ցուցանիշներում, 2017թ., %

Դիտարկվող ժամանակահատվածում աճել է ՆԴՀ մեկ խմբում ընդգրկված երեխաների թվաքանակը (գծանկար 1.9): 2017-ին այն կազմել է 26, այն դեպքում, երբ 2006-ին 21 էր: ՆԴՀ խմբերի խոշորացումը, մեր մոտեցմամբ, չի կարող նպաստել երեխաների նախադպրոցական կրթության արդյունավետության բարձրացմանը[3]: Նկարագրվածն արտացոլումն է այն իրողության, որ մեզանում ՆԴՀ-ները ոչ այնքան նախադպրոցական կրթության և դաստիարակության հաստատություններ են, որքան պարզապես մանկահասակ երեխային թողնելու ապահով վայր: Համենայն դեպս, ծնողների շրջանում առավելապես գերիշխողն է այս մտայնությունը:



Գծանկար 1.9. Երեխաների միջին թվաքանակը ՆԴՀ մեկ խմբում, ըստ առանձին տարիների

ՆԴՀ-ներում մեկ մանկավարժի հաշվով երեխաների թվաքանակի ցուցանիշը վերջին տարիներին էական փոփոխությունների չի արձանագրել: Երևանում այն 16 է, իսկ մարզերում՝ 12.7 (գծանկար 1.10):

3 Առանձին երկրներում տարբեր ժամանակաշրջաններում սահմանվել են ՆԴՀ մեկ խմբում երեխաների առավելագույն թույլատրելի կամ օպտիմալ թվաքանակի նորմատիվներ: Օրինակ, ՌԴ-ում մինչև 2010թ. ՆԴՀ գործունեության կարգավորման սանիտարական նորմերով սահմանվել են ՆԴՀ մեկ խմբում երեխաների առավելագույն թվաքանակի հետևյալ սահմանաչափերը. մինչև 1տ. երեխաների խմբում՝ 10 երեխա, մինչև 3տ. խմբում՝ 15 երեխա, 3-7տ. խմբում՝ մինչև 20 երեխա (օպտիմալը՝ 15 երեխա): Հետագայում այս պահանջը վերացվեց ՆԴՀ-ներում տեղերի խիստ դեֆիցիտով պայմանավորված և սահմանվեցին նոր չափորոշիչներ, որոնք խմբում երեխաների թույլատրելի առավելագույն թվաքանակը կապում են խմբասենյակի մակերեսի հետ (1 երեխայի հաշվով՝ 2.5մ2): Սույն խնդրի առավել համակողմանի ուսումնասիրությունը կրթության ոլորտի՝ մեր կողմից կատարվող հետազոտության հետագա փուլերի թիրախներից է:



Գծանկար 1.10. Նախադպրոցական համայնքային և գերապեսչական հաստատություններում երեխաների թվաքանակը մեկ մանկավարժի հաշվով

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի կողմից իրականացված տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների, ՆԴՀ երեխաների չհաճախելու գլխավոր պատճառը երեխայի մոր չաշխատելն է (64%): Մնացած պատճառները խիստ հազվադեպ են նշվել: Օրինակ, մանկապարտեզի բացակայությունը միայն 4% դեպքերում է հանդիսանում ՆԴՀ չհաճախելու պատճառ, ցածր որակը՝ միայն 0.5% դեպքերում (տես գծանկար 1.11):



Գծանկար 1.11. Մանկապարտեզ չհաճախելու հիմնական պատճառները, ըստ ՀՀՎԿ տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների, % , 2016թ.

Նկատենք, որ ոչ պաշտոնական գնահատականներն ու հետազոտությունները արդյունքները նկատելիորեն տարբերվում են վերը ներկայացված պատկերից: Այսպես, մասնավոր հատվածը ներկայացնող կազմակերպության կողմից կատարված հետազոտության արդյունքների համաձայն, նախադպրոցական տարիքի, ՆԴՀ-ներում չընդգրկված երեխաներ ունեցող տնային տնտեսությունների առնվազն 1/3-ի դեպքում փորձեր ձեռնարկվել են՝ երեխաներին ՆԴՀ ընդունելու ուղղությամբ, որոնք, սակայն, հաջողությամբ չեն պսակվել: Արդ, ՆԴՀ-ներից դուրս մնալը ոչ թե այս տնային տնտեսությունների ցանկալի ընտրությունն է, այլ առկա իրողությունների հետևանք: Դրա հիմնական պատճառներն են համայնքում կամ ընտանիքի համար մատչելի գոտում մանկապարտեզի բացակայությունը, ծնողների պահանջներին ՆԴՀ չհամապատասխանելը կամ էլ պարզապես երեխային ՆԴՀ չընդունելը, առավել հաճախ՝ ՆԴՀ գերծանրաբեռնված աշխատելու և ազատ տեղերի բացակայության պատճառաբանություններով[4]:

Նախադպրոցական հաստատություններում համախառն ընդգրկվածությունը տարբերվում է ըստ աղքատության մակարդակի: Ոչ աղքատ տնային տնտեսություններում այն կազմել է 34%, աղքատ տնային տնտեսություններում (առանց ծայրահեղ աղքատների)՝ 29%, ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններում՝ 27% (գծանկար 1.12):

4 Աղբյուրը՝ Assessment on Access of Cildren to Pre-School Education Services in Armenia. Analytical Report//Media Model; Save the Children. Yerevan, 2017. - 78p.



Գծանկար 1.12. ՆԴՀ-ում ընդգրկվածությունը, ըստ տնային տնտեսությունների աղքատության մակարդակի, %, 2016թ.

Եզրակացություն #1. տարեցտարի ավելանում է նախադպրոցական հաստատությունների թիվը և այդտեղ հաճախող երեխաների թվաքանակը:

Եզրակացություն #2. առկա է նախադպրոցական հաստատությունների տարածքային համակենտրոնացման բարձր մակարդակ:

Եզրակացություն #3. ՆԴՀ-ներում երեխաների ընդգրկվածությունը ցածր մակարդակի վրա է: Համապատասխան տարիքի երեխաների 69%-ը ՆԴՀ չի հաճախում, ընդ որում, գյուղական համայնքներում ՆԴՀ չի հաճախում երեխաների շուրջ 80%-ը: ՆԴՀ-ներում երեխաների ընդգրկվածությունը էականորեն տարբեր է նաև ըստ տնային տնտեսությունների աղքատության մակարդակի:

Հանրակրթություն

Դիտարկվող ժամանակահատվածում նվազել է հանրակրթական դպրոցների, նաև՝ դրանցում սովորողների թվաքանակը (գծանկար 1.13): Այսպես, 2007-2017թթ. սովորողների թվաքանակը կրճատվել է մոտ 16%-ով, իսկ եթե հաշվարկի մեկնակետ ընդունենք 2000թ., երբ հանրակրթական դպրոցներ հաճախող աշակերտների թվաքանակը կազմում էր 542 հազար, ապա անկումը կկազմի արդեն 32%:



Գծանկար 1.13. Դպրոցների քանակը և դրանցում սովորողները

Հանրակրթական դպրոցների գերակշիռ մասը պետական են: 2017/2018թթ. ուստարում հանրապետությունում գործել է հանրակրթական ծրագրեր իրականացնող 47 ոչ պետական ուսումնական հաստատություն (որից 39-ը՝ Երևանում): 2006/2007 ուստարում ՀՀ-ում գործում էր 41 ոչ պետական հանրակրթական հաստատություն:

Զուգահեռաբար նվազել է նաև ուսուցիչների թվաքանակը, ընդ որում՝ 2011թ-ից՝ աշակերտների թվաքանակի նվազման տեմպը գերազանցող արագությամբ: Դիտարկվող ժամանակահատվածում նկատելիորեն նվազել է նաև աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը և չնայած վերջին մի քանի տարիների որոշակի աճին, ներկայումս այն գտնվում է խիստ ցածր մակարդակի վրա (գծանկար 1.14): Նման պայմաններում, հաշվի առնելով հանրակրթության ֆինանսավորման ծավալների ուղղակի կապակցումը սովորողների թվի հետ, ուսուցչական անձնակազմի աշխատանքի վարձատրության բարձրացման հեռանկարը դառնում է էլ ավելի մշուշոտ:



Գծանկար 1.14. Ուսուցիչների թվաքանակը (հազար մարդ) և աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը

Աշակերտների ընդգրկվածության հարաբերական ցուցանիշը (համախառն ընդգրկվածությունը), ըստ հանրակրթության մակարդակների, նվազագույնը ավագ դպրոցում[5] է՝ ընդամենը 65.5%, ինչը շատ ավելի ցածր է, քան տարրական և հիմնական դպրոցում (գծանկար 1.15):



Գծանկար 1.15. Աշակերտների ընդգրկվածությունը, 2017թ., %

Հատկանշական է, որ նախորդ մի քանի տարիներին ավագ դպրոցում համախառն ընդգրկվածության ցուցանիշը շատ ավելի բարձր է եղել (գծանկար 1.16): Այսինքն՝ ցուցանիշի անկման կտրուկ բնույթը առավել քան ակնառու է:

5 Այստեղ և այսուհետ, եթե այլ նշում չկա, «ավագ դպրոց» հասկացությունը բնութագրում է հանրակրթության երրորդ աստիճանը՝ 10-12 դասարանները:



Գծանկար 1.16. Աշակերտների ընդգրկվածությունը ավագ դպրոցում

Ի հավելումն վերը նշվածի, ավագ դպրոցն աչքի է ընկնում նաև ընդգծված սեռային անհավասարությամբ (գծանկար 1.17)



Գծանկար 1.17. Սեռային անհավասարության ցուցանիշը հանրակրթության համակարգում սովորողների շրջանում[6], 2017թ.

Ավագ դպրոցում սովորելը բավականին ծախսատար է, ընդ որում՝ շատ ավելի ծախսատար, քան հանրակրթության առաջին երկու մակարդակներում: Այսպես, ավագ դպրոցում աշակերտ ունեցող տնային տնտեսությունները մեկ սովորողի հաշվով, 2016թ. տնային տնտեսությունների հետազոտության արդյունքներով, ծախսել են ամսական միջինում 6000 դրամ: Ընդ որում, 2012թ. համեմատությամբ, ցուցանիշը աճել է ավելի քան 37 տոկոսով, իսկ 1-4 և 5-9 դասարաններում աշակերտ ունեցող տնային տնտեսությունների ծախսը մեկ աշակերտի հաշվով ավելացել է համապատասխանաբար 59 և 34 տոկոսով: Հետաքրքրական է, որ հիմնական դպրոցում աշակերտ ունեցող տնային տնտեսությունների ծախսը մոտ երկու անգամ պակաս է՝ ավագ դպրոցում աշակերտ ունեցող տնային տնտեսությունների ծախսի համեմատությամբ (գծանկար 1.18):

6 Տղաների համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ աղջիկների համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը:



Գծանկար 1.18. Տնային տնտեսությունների միջին ամսական ծախսը 1 աշակերտի հաշվով, դրամ

Սա կարելի է համարել ավագ դպրոցում ընդգրկվածության ցուցանիշի՝ ըստ տնային տնտեսության աղքատության մակարդակի էական տարբերության պատճառներից մեկը (գծանկար 1.19): Աղքատ տնային տնտեսությունների պարագայում ավագ դպրոցում ընդգրկվածությունը 10 տոկոսային կետով ցածր է, քան միջինն ըստ բոլոր տնային տնտեսությունների (2012թ.՝ 1 տոկոսային կետով), իսկ ոչ աղքատ տնային տնտեսությունների համապատասխան ցուցանիշից տարբերությունը կազմում է 15 տոկոսային կետ (2012-ին՝ ընդամենը 3 տոկոսային կետ):



Գծանկար 1.19. Ավագ դպրոցներում համախառն ընդգրկվածությունը, ըստ տնային տնտեսության աղքատության մակարդակի

Ավագ դպրոցում սովորող ունեցող ոչ աղքատ տնային տնտեսությունները մեկ սովորողի հաշվով ամսական միջինում ծախսում են 7400 դրամ, կամ աղքատ և ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների համեմատությամբ համապատասխանաբար 2.5 և 3.7 անգամ շատ (գծանկար 1.20): 2012թ. այս տարբերությունները շատ ավելի փոքր էին: Ընդ որում՝ 2012-2016թթ ժամանակահատվածում ցուցանիշի նկատելի աճ է արձանագրվել միայն ոչ աղքատ տնային տնտեսությունների պարագայում, իսկ օրինակ, ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների միջին ամսական ծախսը այս տարիներին նույնիսկ փոքր-ինչ նվազել է:



Գծանկար 1.20. Ավագ դպրոցում սովորող ունեցող տնային տնտեսությունների միջին ամսական ծախսը, մեկ սովորողի հաշվով, ըստ տնային տնտեսության աղքատության մակարդակի, դրամ

Ավագ դպրոցում սովորող ունեցող ոչ աղքատ ընտանիքների կողմից սովորողի վրա կատարվող ծախսի կառուցվածքում գերակշռում է մասնավոր դասերի վրա կատարվող ծախսը (48%): Աղքատ ընտանիքների կողմից մասնավոր դասերի վրա ծախսվում է 12%, ծայրահեղ աղքատ ընտանիքների կողմից՝ 8% (գծանկար 1.21):



Գծանկար 1.21. Մասնավոր դասերի վրա կատարվող ծախսերի մասնաբաժինը ավագ դպրոցում սովորողի համար կատարվող ընդհանուր ծախսերի կառուցվածքում, %

Կարելի է պնդել, որ ոչ աղքատ ընտանիքները նպատակահարմար են գտնում նշանակալի միջոցներ ծախսել ավագ դպրոցում սովորող աշակերտի մասնավոր դասերի համար, ինչը, հավանաբար, անխուսափելի է համարվում կրթական համակարգի հաջորդ մակարդակ աշակերտի սահուն անցումն ապահովելու համար: Այս հանգամանքը, սակայն, հակասում է ավագ դպրոցի առանցքային գաղափարին, հերքում է ավագ դպրոցի ողջ կոնցեպտուալ հենքը, նաև՝ ի ցույց է դնում կրթական այս փուլում մատուցվող ծառայությունների ոչ բավարար արդյունավետության փաստը: Սա ծանրակշիռ վկայություն է այն ակնհայտ իրողության, որ կրթության ոլորտում հապճեպ, նախապես ոչ բավարար հիմնավորում ստացած, հանրային լիարժեք հավանության չարժանացած բարեփոխումները դատապարտված են ձախողման և այսուհետ պարզապես պետք է բացառվեն:

Վերը նկարագրվածի համատեքստում, որպես կատարված վերլուծության տրամաբանական շարունակություն, ներկայացված տվյալների հիման վրա ստացվում է հետևյալը՝ ավագ դպրոցում աշակերտ ունեցող աղքատ տնային տնտեսությունները չեն կարող վճարել մասնավոր դասերի համար, միայն ավագ դպրոցի գիտելիքները բավարար չեն բուհ ընդունվելու համար, արդյունքում՝ բուհական համակարգում ուսանողների ընդգրկվածությունն ըստ տնային տնտեսության աղքատության մակարդակի նկատելիորեն տարբերվում է (գծանկար 1.22): Մյուս կողմից, հուսադրող է աղքատ տնային տնտեսությունների համար ցուցանիշի առաջանցիկ աճը (2012-ի համեմատությամբ), ինչը, թերևս, ԲՈՒՀ-երում ընդունելության պայմանների հեշտացման արդյունք է:



Գծանկար 1.22. Բարձրագույն կրթական հաստատություններում համախառն ընդգրկվածությունը

Եզրակացություն #1. Հայաստանի հանրակրթության համակարգում ավագ դպրոցը լիարժեքորեն չի կատարում իր առաքելությունը, չի ապահովում հիմնական դպրոցի և կրթական համակարգի՝ հանրակրթական դպրոցին հաջորդող մակարդակի միջև կապը, չի նպաստում աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը, հիմնական դպրոցի համեմատությամբ չի ապահովում գիտելիքի ավելի բարձր մակարդակ:

Եզրակացություն #2. Ավագ դպրոցում սովորելը հատկապես աղքատ ընտանիքների համար նշանակալի ֆինանսական բեռ է ենթադրում:

Եզրակացություն #3. Տարեցտարի նվազում է ավագ դպրոցում ընդգրկվածության մակարդակը:

Եզրակացություն #4. Հիմնական դպրոցն ավարտելուց հետո հանրակրթության համակարգից դուրս եկող պատանիներն ու աղջիկները, որպես կանոն, դադարում են զբաղվել իրենց կրթությամբ:

Նախնական և միջին մասնագիտական կրթություն

Վերջին 10 տարիների ընթացքում հանրապետությունում շուրջ 50 տոկոսով ավելացել է նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների թիվը, նույն չափով աճել է նաև դրանցում սովորողների թվաքանակը (գծանկար 1.23):



Գծանկար 1.23. Նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունները ՀՀ-ում

Այսպես, 2017/2018 ուսումնական տարում հանրապետությունում գործել են նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագիր իրականացնող 44 պետական ուսումնական հաստատություններ, որոնցից 25-ը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և 19-ը՝ միջին մասնագիտական: Ուսումնառությունն իրականացվել է հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա: Ուսանողների թվաքանակը կազմել է ավելի քան 6.5 հազար, որոնց գերակշիռ մեծամասնությունը (72%) տղամարդիկ են: Ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 8.6% (կանանց՝ 5.4%, տղամարդկանց՝ 10.4%), սեռային հավասարության ցուցանիշը (տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը)՝ 0.48: Ուսանողների գերակշիռ մեծամասնությունը (97.6%) սովորել է անվճար ուսուցման համակարգում:

Ի տարբերություն նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների թիվը վերջին տասնամյակում նկատելիորեն նվազել է, կրճատվել է նաև դրանցում սովորողների թվաքանակը: Ընդ որում, վերջին մի քանի տարիներին այս միտումներն առավել ընդգծված բնույթ են ստացել (գծանկար 1.24): Նկարագրված պատկերը մտահոգիչ է տարբեր առումներով: Նախ, ՀՀ կրթական համակարգի սույն բաղադրիչը ևս աչքի է ընկնում ինստիտուցիոնալ թույլ կարողություններով, արդյունավետ կրթական գործընթացների կազմակերպման համար անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության ցածր մակարդակով, դասավանդողների ոչ պատշաճ մասնագիտական մակարդակով, արդյունավետ կադրային քաղաքականության իրականացման լուրջ սահմանափակումներով: Բացի այդ, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները պետք է կրթական երկրորդ և երրորդ մակարդակները կապող օղակ հանդիսանան և դրանց ամրությունը կարևոր նշանակություն ունի կրթական ամբողջ շղթայի կայունության և կենսունակության ապահովման համար: Մինչդեռ, ներկայումս այն չի կատարում իր այս առաքելությունը, ավելին՝ հանրության կողմից լիարժեքորեն չի ընկալվում դրա կարևորությունը:



Գծանկար 1.24. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները Հայաստանում

Եզրակացություն #1. Նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների ներգրավվածությունը շարունակում է մնալ խիստ ցածր, ինչը այդ հաստատությունների ինստիտուցիոնալ ցածր կարողությունների, կողմից մատուցվող կրթական ծառայությունների անբավարար մակարդակի արդյունքն է:

Եզրակացություն #2. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանցում սովորողների թիվը կրճատվում է: ՀՀ-ում այս հաստատությունները ունեն ինստիտուցիոնալ թույլ կարողություններ, չեն ապահովում կրթական ծառայությունների բարձր որակ:

Վերջին 10 տարիների ընթացքում ՀՀ-ում ծավալային կրճատումներ են արձանագրվում նաև բարձրագույն կրթության ոլորտում: Այսպես, ԲՈՒՀ-երի և դրանցում սովորողների թվաքանակը կրճատվել է մոտ 30%-ով (գծանկար 1.25):



Գծանկար 1.25. ԲՈՒՀ-երի թվաքանակը և դրանցում սովորողները

ԲՈՒՀ-երի մեծ մասը (49 ԲՈՒՀ) գտնվում է Երևանում, դրանցում սովորում է 67 հազար ուսանող (ուսանողների ընդհանուր թվի 84.6%): Իսկ Երևանի, Լոռու և Շիրակի մարզի բուհերին բաժին է ընկնում ուսանողների ընդհանուր թվի մոտ 94%-ը (գծանկար 1.26):



Գծանկար 1.26. ԲՈՒՀ-երի ուսանողների տարածքային բաշխվածությունը, 2017/18 ուստարի, հազար ուսանող

Ուսանողների թվի կրճատումը, հանրակրթական դպրոցների շրջանավարտների թվաքանակի տարեցտարի կրճատման, արտագաղթով պայմանավորված ժողովրդագրական վիճակի փոփոխության, կրթական համակարգի երրորդ մակարդակում կրթական ծառայությունների հասանելիության մակարդակի սահուն նվազման հետևանք հանդիսանալով հանդերձ, չնայած հանրապետության բուհերի առողջացման նախադրյալներ է պարունակով (ԲՈՒՀ-երի միջև ուժեղացող մրցակցությունը ստիպում է լրջագույն բարեփոխումներ նախաձեռնել և իրականացնել, բարձրացնել կրթական ծառայությունների որակը, ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրներ որոնել, մշակել արտահանելի կրթական ծառայություններ և այլն), սակայն ցավալիորեն իրողությունն այլ է: Հայրենական ԲՈՒՀ-երի մեծամասնությունը, կրթական ծառայությունների շուկայում իրենց մրցակցային դիրքերը նախընտրում են բարելավել ոչ թե մատուցվող ծառայությունների որակի բարձրացման, այլ ընդունելության կանոնների էլ ավելի պարզեցման, ուսումնական գործընթացում գիտելիքի ստուգման ընթացակարգերի ոչ ֆորմալ հեշտացման, դիմորդների ամենալայն (հաճախ՝ նախնական պատրաստվածության խիստ անբավարար մակարդակով օժտված) շրջանակի համար մատուցվող ծառայությունները հասանելի դարձնելու եղանակով: Արդյունքում համակարգում առկա լճացման դրսևորումները կայուն բնույթ են ստանում, խարխլվում են ԲՈՒՀ-աշխատաշուկա կապերը, ուսումնական ծրագրերը դառնում են պարզունակ, անհետաքրքիր, գործատուների պահանջներին չհամապատասխանող, խափանվում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի սերնդափոխությունը, ուսանողների մոտ վերանում է սովորելու մոտիվացիան, ընկնում է կրթական ծառայությունների ներքին և արտաքին մրցունակության մակարդակը:

Ասվածի վառ վկայություն է հանդիսանում ՀՀ ԲՈՒՀ-երի կողմից մատուցվող ծառայությունների արտաքին մրցունակության համեմատաբար ցածր մակարդակը: Այսպես, օտարերկրյա ուսանողների թվաքանակը ՀՀ ԲՈՒՀ-երում վերջին մի քանի տարիներին աճի աննշան միտումներ է ցուցաբերում, սակայն ուսանողների ընդհանուր կառուցվածքում օտարերկրյա ուսանողների տեսակարար կշիռը դիտարկվող ողջ ժամանակահատվածի ընթացքում չի գերազանցել 5.0% մակարդակը (գծանկար 1.27):



Գծանկար 1.27. Օտարերկրյա ուսանողները ՀՀ բուհերում

Օտարերկրյա ուսանողների ընդհանուր թվի 81%-ը ապահովվում է միայն 4 երկրներից (ՌԴ, Վրաստան, Սիրիա, Հնդկաստան) ժամանած ուսանողների հաշվին (գծանկար 1.28), որոնց մեծ մասը պարզապես օտարերկրյա քաղաքացիություն ունեցող մեր հայրենակիցներն են:



Գծանկար 1.28. ՌԴ-ի, Վրաստանի, Սիրիայի, Հնդկաստանի քաղաքացիների տեսակարար կշիռը ՀՀ բուհերի օտարերկրյա ուսանողների թվաքանակում, %

Բարձրագույն կրթության մրցունակության հետազոտություններում և հատկապես՝ միջերկրային համադրություններում լայն կիրառություն ունի համաշխարհային տնտեսական համաժողովի (World Economic Forum) գլոբալ մրցունակության ինդեքսի[7] կրթական բաղադրիչը (5-րդ հենասյուն, Բարձրագույն կրթություն և ուսուցում):



Գծանկար 1.29. Բարձրագույն կրթության մրցունակության գնահատականն ըստ առանձին երկրների (1-7 սանդղակ)

Գլոբալ մրցունակության 2017թ. զեկույցում բարձրագույն կրթության մրցունակության ցուցանիշով Հայաստանը 137 երկրների շարքում 69-րդն էր և չնայած զիջում էր, օրինակ, Ուկրաինային և ՌԴ-ին, սակայն որոշակորեն ավելի բարձր գնահատականի է արժանացել, քան, օրինակ, Մոլդովան կամ Վրաստանը (գծանկար 1.29):
Գլոբալ մրցունակության 2018թ. զեկույցում[8] մրցունակության գնահատումն արվել է ըստ նոր մեթոդաբանության, որում կրթական բաղադրիչի ընդհանրական ցուցիչ է դիտվում արդեն 6-րդ հենասյան (Հմտություններ) գնահատականը: Այս ցուցիչով Հայաստանը 67.6 միավորով վարկանիշային աղյուսակում 55-րդն է: Ընդ որում, սա մեզ համար ավելի բարձր մակարդակ է, քան ՀՀ գնահատականը մրցունակության մի շարք այլ բնութագրիչներով (մակրոտնտեսական կայունություն՝ 89-րդ տեղ, ֆինանսական համակարգ՝ 87-րդ տեղ, ենթակառուցվածքներ՝ 74-րդ տեղ, ինստիտուտներ՝ 67-րդ տեղ): Այնուհանդերձ, հմտությունների մակարդակով Հայաստանը զգալիորեն հետ է մնում մեծ թվով զարգացող երկրներից, նաև՝ Վրաստանից, ՌԴ-ից և Ադրբեջանից (գծանկար 1.30):

7 Մինչև 2017թ. կիրառված հաշվարկի մեթոդաբանությամբ:
8 The Global Competitiveness Report 2018. World Economic Forum. Մեթոդաբանության համար՝ Chapter 3: Benchmarking Competitiveness in the Fourth Industrial Revolution: Introducing the Global Competitiveness Index 4.0.



Գծանկար 1.30. Գլոբալ մրցունակության ինդեքսի Հմտություններ բաղադրիչով առանձին երկրների գնահատականներն ու վարկանիշը (2018թ.)

2018թ. գլոբալ մրցունակության ինդեքսի բաղադրիչներից կրթական համակարգի գնահատման տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում նաև 6-րդ հենասյան 4-րդ բաղադրիչը, որը նկարագրում է երկրի կրթական հաստատությունների շրջանավարտների գործնական գիտելիքներն ու կարողությունները: Ըստ այդմ, այս ցուցանիշով Հայաստանը շատ ավելի հետ է, քան հմտությունների ընդհանրական գնահատականով և նույն երկրների շարքում 89-րդն է (գծանկար 1.31):



Գծանկար 1.31. Գլոբալ մրցունակության ինդեքսի Շրջանավարտների կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչով առանձին երկրների գնահատականներն ու վարկանիշը (2018թ.)

Մյուս կողմից, համեմատաբար բարվոք է վիճակը ապագա աշխատանքային ռեսուրսների գնահատականի պարագայում (գծանկար 1.32): Այս վերջին ցուցանիշը, ըստ էության, բնութագրում է որակյալ աշխատանքային ռեսուրսներ ունենալու՝ տվյալ երկրի ներուժը:



Գծանկար 1.32. Գլոբալ մրցունակության ինդեքսի Ապագա աշխատուժի ենթաբաղադրիչով առանձին երկրների գնահատականներն ու վարկանիշը (2018թ.)

Եզրակացություն #1. Հայաստանում գործող ԲՈՒՀ-երի մեծամասնությունը, կրթական ծառայությունների շուկայում իրենց մրցակցային դիրքերը նախընտրում են բարելավել ոչ թե մատուցվող ծառայությունների որակի բարձրացման, այլ ընդունելության կանոնների և ուսումնառության պահանջների թեթևացման եղանակով:

Եզրակացություն #2. բուհական կրթական ծառայությունները հատկապես ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների համար դառնում են գրեթե անհասանելի. ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների անդամների՝ ԲՈՒՀ-երում ընդգրկվածությունը 17% է կամ ոչ աղքատ տնային տնտեսությունների համեմատությամբ՝ 3 անգամ ցածր:

Եզրակացություն #3. Հայաստանի ԲՈՒՀ-երում օտարերկրյա ուսանողների թիվը տարիներին աճի աննշան միտումներ է ցուցաբերում, սակայն ուսանողների ընդհանուր կառուցվածքում օտարերկրյա ուսանողների տեսակարար կշիռը վերջին տարիներին չի գերազանցել 5.0% մակարդակը:

Եզրակացություն #4. Գլոբալ մրցունակության ինդեքսի Հմտություններ բաղադրիչով Հայաստանը 67.6 միավորով աշխարհում 55-րդն է: Հմտությունների մակարդակով Հայաստանը զգալիորեն հետ է մնում մեծ թվով զարգացող երկրներից, նաև՝ Վրաստանից, ՌԴ-ից և Ադրբեջանից:

Եզրակացություն #5. ԲՈՒՀ-երի շրջանավարտների գործնական գիտելիքներն ու կարողությունները բնութագրող ցուցանիշով Հայաստանը ավելի ցածր տեղերում է՝ ընդամենը 89-րդն է: Աշխատանքային ռեսուրսի ներուժային համեմատաբար բարձր մակարդակի առկայության պայմաններում կրթական համակարգն ի վիճակի չէ տալ համապատասխան արդյունք՝ պահանջվող հմտություն և կարողություններ ունեցող շրջանավարտների տեսքով:

1.2. Կրթության բյուջետային ֆինանսավորումը Հայաստանում

Արդի պայմաններում երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը պայմանավորող առանցքային գործոններից է կրթության համակողմանի զարգացումը: Այս ուղենիշը պետք է դառնա Հայաստանի կայուն զարգացման գլխավոր թիրախներից մեկը: Այս սկզբունքային մոտեցումը ամրագրված է նաև պետական քաղաքականության հիմնարար փաստաթղթերում, իրավական ակտերում, սակայն դրա կենսագործման ուղղությամբ գործադրվող ջանքերը ցանկալի արդյունավետություն չեն ապահովում, նաև զուրկ են պատշաճ ռեսուրսային հենքից, ինչի կարևոր դրսևորումներից մեկը կրթության ոլորտի պետական ֆինանսավորման անբավարար մակարդակն է:

Պետական բյուջեից կրթությանն ուղղվող ֆինանսավորումը վերջին 20 տարիների ընթացքում աճել է ավելի քան 6 անգամ: Ըստ որում, ցուցանիշը առավելագույն աճերն արձանագրվել են մինչճգնաժամային շրջանում, որին հաջորդող մի քանի տարիներին կրթության բյուջետային ֆինանսավորման բացարձակ ցուցանիշը տատանվում էր 100 մլրդ դրամի շրջակայքում և միայն 2015-ից հետո կարողացավ հաղթահարել 120 մլրդ դրամի շեմը (գծանկար 1.33): Պետական բյուջեի ընդամենը ծախսերի կառուցվածքում կրթության մասնաբաժնի առավելագույն մակարդակն արձանագրվել է 2006-2007թթ.՝ 14.3%, որից հետո ցուցանիշը տարեցտարի անշեղորեն նվազելով, ի վերջո հանգրվանեց 8-9% տիրույթում: 2019թ. պետական բյուջեի մասին օրենքում նախատեսված մակարդակը ևս այս միջակայքում է՝ 8.6%:



Գծանկար 1.33. Կրթության բյուջետային ֆինանսավորումը ՀՀ-ում

Կրթության բյուջետային ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ նկատմամբ վերջին տարիներին ևս նվազման ընդգծված միտում է ցուցաբերում: Վերջին 20 տարիների ընթացքում միայն 2009-ին է ցուցանիշը գերազանցել 3 տոկոսի շեմը, որից հետո անշեղորեն նվազելով, 2014-2016թթ. արժեքներ է ընդունել 2.4%-ի շրջակայքում, որից հետո անկումը շարունակվել է, իսկ 2019թ. պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված է 2.1% չափով (գծանկար 1.34):



Գծանկար 1.34. Կրթության բյուջետային ֆինանսավորում/ՀՆԱ, %

Նկատենք, որ ՀՀ 2014-25թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով[9] սույն ցուցանիշի համար 2017թ. նվազագույն թիրախ էր սահմանված 2.8% մակարդակը, 2021թ.՝ 3.3%, 2025թ.՝ 3.7%: Մինչդեռ արդեն իսկ 2017թ. թիրախային մակարդակը թերակատարվել է (փաստացի կազմել է 2.4%), իսկ 2019թ. բյուջետային ցուցանիշներով պլանավորված է ավելի ցածր մակարդակ՝ 2.1%:

9 Հաստատվել է ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի N442-Ն որոշմամբ:

Աղյուսակներ 1.1-1.4-ում ներկայացված են կրթության բյուջետային ֆինանսավորման փաստացի և ծրագրային (ՊՄԺԾԾ-ներով սահմանված) մակարդակները: Ներկայացված թվերի համեմատությունը հնարավորություն է տալիս գնահատել նախորդ տարիներին կրթության ոլորտի համար հոչակված գերակայություններից բխող ֆինանսավորման ծրագրային ցուցանիշների կատարման աստիճանը:

Այսպես, կրթության բյուջետային ֆինանսավորում / ՀՆԱ հարաբերակցության մասով նախորդ տարիներին սահմանված ծրագրային ցուցանիշները հիմնականում չեն կատարվել: Թերակատարումը զգալի է հատկապես հետճգնաժամային առաջին երկու տարիների ընթացքում, երբ դիտարկվող ցուցանիշը ծրագրվել է 3.0 տոկոսը գերազանցող մակարդակով, սակայն փաստացի մակարդակը գտնվել է 2.65 տոկոսի տիրույթում: 2012-ից սկսած ցուցանիշի ծրագրային մակարդակները էականորեն նվազեցվել ու այդ կերպ, ըստ էության, մոտեցվել են իրականությանը, սակայն վերստին, նույնիսկ համեստ հավակնությունները փաստացի չեն իրագործվել (տես աղյուսակ 1.1, 2012-2016թթ. համար սահմանված ծրագրային ցուցանիշները): Այդ պատճառով վերջին տարիների (2017 և 2018թթ.) համար սահմանված ծրագրային ցուցանիշները յուրաքանչյուր հաջորդ ՊՄԺԾԾ-ում աստիճանաբար վերանայվել են՝ նվազման ուղղությամբ: Այս հանգամանքը, մի կողմից մեծացնելով ծրագրային ցուցանիշների իրատեսականությունը, մյուս կողմից, սակայն, կրթության ոլորտում պետական ծախսային քաղաքականությունը դարձնում է պակաս հավակնոտ և իներցիոն:

Աղյուսակ 1.1. Կրթության բյուջետային ֆինանսավորման փաստացի և ծրագրային (ըստ ՊՄԺԾԾ-ների) մակարդակները, % ՀՆԱ նկատմամբ

	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Փաստ	2.70	2.72	3.21	2.65	2.63	2.41	2.26	2.40	2.42	2.41	2.36	2.17	2.10
ՊՄԺԾԾ													
2019-2021													2.12
2018-2020												2.18	1.99
2017-2019											2.4	2.32	2.28
2016-2018										2.63	2.54	2.45	
2015-2017									2.51	2.55	2.63		
2014-2016								2.56	2.5	2.53			
2013-2015							2.32	2.23	2.34				
2012-2014						2.55	2.45	2.37					
2011-2013					3.03	2.78	2.7						
2009-2011			3.03	3.12	3.21								
2008-2010		2.92	3.36	3.43									
2007-2009	3.01	2.91	2.84										
2006-2008	2.99	3.29											
2005-2007	2.92												

Աղյուսակներ 1.2-1.4-ում ներկայացված են կրթության տարբեր մակարդակների ֆինանսավորման ծրագրային (ըստ ՊՄԺԾԾ-ների) և փաստացի ցուցանիշները:

Աղյուսակ 1.2-ից բխում է, որ 2009-2011թթ-ից սկսած, բոլոր եռամյա հատվածների համար նախադպրոցական, տարրական և միջնակարգ ընդհանուր կրթության ֆինանսավորման մասով սահմանված ծրագրային մակարդակները թերակատարվել են: Վերջին 10 տարիների ընթացքում կրթական նշված մակարդակներում ֆինանսավորման փաստացի ծավալն ավելացել է ընդամենը 15 տոկոսով: Ընդ որում, 2018թ. պետական բյուջեով նախատեսված ֆինանսավորումն ավելի ցածր է, քան նախորդ տարիների ՊՄԺԾԾ-ների մեծ մասով (օրինակ՝ 2014-2016թթ., 2015-2017թթ., 2016-2018թթ. ծրագրերը) եռամյա ժամանակահատվածի վերջի համար ծրագրված մակարդակը: Նույնը կարելի է ասել նաև նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրերի ֆինանսավորման (աղյուսակ 1.3), որոշակիորեն՝ նաև բարձրագույն կրթության բյուջետային ֆինանսավորման (աղյուսակ 1.4) ծրագրման մասով:

Աղյուսակ 1.2. Նախադպրոցական, տարրական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթության բյուջետային ֆինանսավորման փաստացի և ծրագրային (ըստ ՊՄԺԾԾ-ների) մակարդակները, մլրդ դրամներով

	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Փաստ	71.6	69.1	70	71.2	71.9	77.1	81.3	84.6	84.5	82.6	
ՊՄԺԾԾ											
2019-2021											87.1
2018-2020										79.3	78.6
2017-2019									86.7	89.1	91.4
2016-2018								85	87.3	90	
2015-2017							82.8	90.1	102.7		
2014-2016						84.1	91.8	103.1			
2013-2015					72.3	74.4	87.2				
2012-2014				74.7	79.4	82.3					
2011-2013			73.4	77	81						
2009-2011	76.4	95.5	120								

Աղյուսակ 1.3. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության բյուջետային ֆինանսավորման փաստացի և ծրագրային (ըստ ՊՄԺԾԾ-ների) մակարդակները, մլրդ դրամներով

	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Փաստ	4.7	4.7	5.1	5.4	6.2	7.5	8.9	9	9.8	10.6	
ՊՄԺԾԾ											
2019-2021											11.4
2018-2020										10.3	10.3
2017-2019									11.2	12.1	13.1
2016-2018								11.4	13	14.3	
2015-2017							11.3	13.6	16.9		
2014-2016						9.4	12.2	15.4			
2013-2015					6.3	7.2	8.6				
2012-2014				5.3	6.3	7.2					
2011-2013			5	5	5.3						
2009-2011	5	5.9	6.7								

Աղյուսակ 1.4. Բարձրագույն կրթության բյուջետային ֆինանսավորման փաստացի և ծրագրային (ըստ ՊՄԺԾԾ-ների) մակարդակները, մլրդ դրամներով

	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Փաստ	7.5	7.4	7.7	7.6	7.9	9.4	11	11.5	11.9	12.1	
ՊՄԺԾԾ											
2019-2021											12.2
2018-2020										11.9	11.9
2017-2019									12.2	12.2	12.3
2016-2018								12.6	12.9	13	
2015-2017							11.3	12.5	13.4		
2014-2016						9.9	10.8	11.9			
2013-2015					7.7	8.5	9.7				

2012-2014				7.4	7.4	8.3					
2011-2013			7.7	7.7	8.1						
2009-2011	7.7	8.7	9.2								

Վերը նկարագրվածը վկայում է այն մասին, որ կրթության ոլորտում ծախսային գերակայությունների հռչակումը և դրանց կենսագործման նպատակով ծրագրվող գործողությունները որևէ աղերս չունեն փաստացի իրականության հետ: Ավելին, մեր դիտարկմամբ, առնվազն կրթության ոլորտում ծախսերի եռամյա ծրագրումը ոչ թե ոլորտի զարգացման գերակայություններին համապատասխան ֆինանսական հենքի ձևավորման, այլ շահառուների առանձին խմբերին և հասարակությանն ընդհանրապես լավատեսական ազդակներ հաղորդելու նպատակ է հետապնդել: Խնդիրն այն է, որ հետագայում այդ ազդակները ոչ թե առարկայական ամրագրում են ստացել, այլ փոխարինվել են նոր լավատեսական ազդակներով: Դրանով իսկ ձևավորվել է նախապես սահմանված թիրախների իրագործման նկատմամբ ոչ բավարար պատասխանատվության, ծրագրային նպատակների թերակատարումը արտաքին գործոնների վրա բարեհաջող կերպով բարդելու գործելաոճ:

Կրթությանն ուղղվող բյուջետային ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությամբ Հայաստանը գտնվում է խիստ ցածր մակարդակի վրա՝ ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող տնտեսությունների զգալի մասի համեմատությամբ (գծանկար 1.35):



Գծանկար 1.35. Համախմբված բյուջեի կրթական ծախսերը, 2010-2015թթ. միջինը, % ՀՆԱ նկատմամբ[10]

Նույն պատկերն է նաև համախմբված բյուջեի ծախսերի կառուցվածքում կրթական ծախսերի հարաբերակցության պարագայում (գծանկար 1.36):

10 Ցուցանիշների աղբյուրը՝ World Bank, World Development Indicators



Գծանկար 1.36. Համախմբված բյուջեի կրթական ծախսերը, 2010-2015թթ. միջինը, % ընդամենը ծախսերի նկատմամբ[11]

Հետաքրքրական է դիտվում կրթության բյուջետային ֆինանսավորման համեմատությունն այլ հոդվածներով կատարված հատկացումների հետ: Օրինակ, պետական բյուջեից կրթությանն ուղղվող ֆինանսավորման ծավալները նախաճգնաժամային տարիներին հիմնականում գերազանցել են ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին ուղղվող ֆինանսավորմանը (գծանկար 1.37): 2008-ից իրավիճակը տրամագծորեն փոխվել է. հանրային ծառայությունների ֆինանսավորումը կրթության ֆինանսավորման համեմատությամբ տարեցտարի առաջանցիկ աճ է արձանագրել: Վերջին մի քանի տարիներին կրթության բյուջետային ֆինանսավորման հարաբերակցությունը հանրային ծառայությունների հոդվածով կատարվող ծախսերին կազմել է 40-50%, իսկ 2019թ. ծրագրային ցուցանիշներով սույն հարաբերակցությունը 45.4% է:



Գծանկար 1.37. Կրթության բյուջետային ծախսերի հարաբերակցությունը այլ հոդվածների նկատմամբ

11 Ցուցանիշների աղբյուրը՝ World Bank, World Development Indicators.

Պետական բյուջեի սոցիալական ծախսերի (սոցիալական պաշտպանություն, առողջապահություն և կրթություն) կառուցվածքում կրթական ծախսերի մասնաբաժինը ևս համեմատաբար մեծ չէ, վերջին տասնամյակում միջինում կազմել է 24%, իսկ 2019թ. ծրագրային ցուցանիշներով չի գերազանցում 21%-ը:
Կարելի է արձանագրել, որ ՀՀ-ում տարեցտարի նկատելի է կրթության ոլորտի բյուջետային գերակայության աստիճանական թուլացման միտումը (առնվազն՝ մի շարք այլ բյուջետային ուղղությունների համեմատությամբ):
Հետաքրքրական է պետական բյուջեի հարկային եկամուտներ – կրթության ոլորտի ծախսեր հարաբերակցության դիտարկումը: Այսպես, Հայաստանում 100 միավոր հարկային եկամուտներից կրթության ֆինանսավորմանն է ուղղվում 11.3 միավորը, Վրաստանում՝ 13.2 միավորը, Մոլդովայում՝ 29.3 միավորը (գծանկար 1.38):



Գծանկար 1.38. Պետական բյուջեի 100 միավոր հարկային եկամուտներից կրթության ոլորտին ուղղվող մասը

ՀՀ բյուջեի կրթական ծախսերի կառուցվածքում գերակշռում են միջնակարգ ընդհանուր կրթությանն ուղղվող ծախսերը: 2019թ. բյուջեով այս բաղադրիչի համար նախատեսված է կրթության բյուջետային հատկացումների 40%, ընդ որում, այս ցուցանիշի մասով 2008-ի համեմատ էական փոփոխություն չի արձանագրվել (գծանկար 1.39): 2018-ի համեմատությամբ, 2019թ. պետական բյուջեի ծրագրային ցուցանիշներով կրթության ծախսերի կառուցվածքում միջնակարգ ընդհանուր կրթության և տարրական կրթության մասնաբաժինների որոշակի նվազում է նախատեսված: Փոխարենը նկատելի աճ է նախատեսվում կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների տեսակարար կշռի պարագայում:



Գծանկար 1.39. Պետական բյուջեի կրթական ծախսերի կառուցվածքը, %

Հետաքրքրական է, որ ՀՀ հանրակրթական դպրոցների ֆինանսավորման մեծության հաշվարկման բանաձևում բազային համարվող նորմատիվը՝ մեկ սովորողի հաշվով տարեկան գումարը, 2010-2018թթ. ընթացքում նշանակալիորեն փոխվել է միայն 2012-2014թթ.՝ 106 հազար դրամից հասնելով 121 համար դրամի (գծանկար 1.39):



Գծանկար 1.40. Հանրակրթական դպրոցի մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը, հազար դրամ

Հանրակրթական դպրոցների բյուջետային ֆինանսավորման չափի հաշվարկներում օգտագործվող լրացուցիչ գործակիցներից դիտարկվող ժամանակահատվածում նկատելի փոփոխությունների է ենթարկվել միայն ավագ դպրոցների համար կիրառվող լրացուցիչ գործակիցը: Ընդ որում, հետաքրքրական է դրա վայրիվերումների ուղղվածությունը. 2016-ին թռիչքային աճ՝ 1.14-ից մինչև 1.61, իսկ 2018թ. բյուջեով նախատեսված է նույնքան կտրուկ անկում (աղյուսակ 1.5): Եթե 2016-2017թթ. ավագ դպրոցների համար բարձր լրացուցիչ գործակիցների կիրառումը համարենք դրանց կայացման խթանմանն ուղղված լրացուցիչ լիցքի հաղորդում, ապա ստացվում է, որ 2018-ից սկսած այդ խթանի կարիքն արդեն չկա: Իսկ դա էլ, իր հերթին, կարող է նշանակել, որ կամ ավագ դպրոցները լրացուցիչ խթանման կարիք չունեն, քանի որ արդեն լիարժեքորեն կայացել են, կամ էլ՝ նույնիսկ այսօրինակ խթանը չի կարող օգնել դրանց կայացմանը, հետևաբար՝ ավելորդ բյուջետային միջոցներ վատնելու անհրաժեշտությունը բացակայում է:

Աղյուսակ 1.5[12]. Հանրակրթական դպրոցների բյուջետային ֆինանսավորման ծավալի հաշվարկներում կիրառվող լրացուցիչ գործակիցները

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
բարձր լեռնային բնակավայրերի դպրոցների համար	1,2	1,2	1,2	1,2	1,21	1,13	1,13	1,13	1,13
լեռնային բնակավայրերի դպրոցների համար	1,02	1,02	1,02	1,02	1,03	1,04	1,04	1,04	1,04
միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցների համար	1,2	1,2	1,2	1,2	1,2	1,2	1,2	1,2	1,2
ավագ դպրոցների համար	1,1	1,15	1,15	1,15	1,11	1,14	1,61	1,65	1,14

Վերջին 10 տարվա կտրվածքով կրթության բյուջետային ծախսերի կառուցվածքում նշանակալի փոփոխություններից հարկ է առանձնացնել տարրական կրթության բյուջետային ֆինանսավորման մասնաբաժնի ավելացումը, ինչպես նաև կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների տեսակարար կշռի նվազումը (գրեթե՝ 3 անգամ): Բարձրագույն մասնագիտական կրթության բյուջետային ֆինանսավորման մասնաբաժինը չնայած դիտարկվող ժամանակահատվածում որոշակիորեն ավելացել է, սակայն դեռևս շարունակում է մնալ համեմատաբար ցածր մակարդակի վրա: Հատկանշական է նաև կրթության բյուջետային ծախսերի կառուցվածքում հետբուհական մասնագիտական կրթության, ինչպես նաև՝ լրացուցիչ կրթության խիստ ցածր մասնաբաժինը:

Վերը նշվածի համատեքստում, հետաքրքրական կարող է դիտվել կրթական առանձին մակարդակների բյուջետային ֆինանսավորման հարաբերական ցուցանիշների համեմատությունն ըստ տարբեր երկրների[13]: Համապատասխան

12 Աղբյուրը՝ համապատասխան տարիների ՀՀ պետական բյուջեի մասին օրենքն ու բյուջետային ուղերձը:
13 Այստեղ հիմք է ընդունվում կրթական մակարդակների դասակարգումն ըստ UNESCO-ի Կրթության միջազգային ստանդարտ դասակարգումը (International Standard Classification of Education, ISCED-2011), ըստ որի կրթական առաջին մակարդակը համապատասխանում է տարրական կրթությանը, երկրորդ

տվյալները ներկայացված են ստորև, գծանկարներ 1.41-1.43-ում: Տվյալների աղբյուրը Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող Համաշխարհային զարգացման ցուցիչներն են (world development indicators): Վիճակագրական տվյալներն ընդգրկում են 2014-15թթ. ժամանակահատվածը: Գծանկարների նույնիսկ հպանցիկ դիտարկումն ի ցույց է դնում այն հանգամանքը, որ Հայաստանում կրթական բոլոր երեք մակարդակներում մեկ սովորողի հաշվով բյուջետային ծախսերը՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ նկատմամբ, անհամեմատ ավելի ցածր են, քան զարգացած տնտեսություններում, նաև՝ որոշակիորեն ցածր են դիտարկված զարգացող տնտեսությունների համապատասխան մակարդակներից: Ընդ որում, ֆինանսավորման տարբերություններն առավել ակնառու են կրթական առաջին և երրորդ մակարդակներում (ընդհուպ մինչև 3-4 անգամ), իսկ կրթական երկրորդ մակարդակում Հայաստանի հարաբերական ցուցանիշը ԿԱԵ և ԵՄ երկրների համապատասխան մակարդակից ցածր է միայն 40-50 տոկոսով:



Գծանկար 1.41. Կրթական առաջին մակարդակում մեկ սովորողի հաշվով բյուջետային ծախսերը, % մեկ շնչի հաշվով ՀՆԱ նկատմամբ



Գծանկար 1.42. Կրթական երկրորդ մակարդակում մեկ սովորողի հաշվով բյուջետային ծախսերը, % մեկ շնչի հաշվով ՀՆԱ նկատմամբ

մակարդակը՝ միջնակարգ կրթությանը, երրորդ մակարդակը ընդգրկում է բարձրագույն կրթության համակարգ (http://uis.unesco.org/sites/default/files/documents/international-standard-classification-of-education-isced-2011-en.pdf):



Գծանկար 1.43. Կրթական երրորդ մակարդակում մեկ սովորողի հաշվով բյուջետային ծախսերը, % մեկ շնչի հաշվով ՀՆԱ նկատմամբ

ՀՀ կրթության ոլորտում միջին ամսական անվանական աշխատավարձը 2017թ. կազմել է 122.7 հազար դրամ, դրա հարաբերակցությունը հանրապետությունում միջին անվանական աշխատավարձի մեծության նկատմամբ 0.64 է: Հետաքրքրական կարող է դիտվել այն իրողությունը, որ այս վերջին հարաբերական ցուցանիշը շոշափելի աճ է արձանագրել 2003-2009թթ.՝ 0.55-ից հասնելով 0.78-ի, որից հետո սահուն նվազում է գրանցել՝ 2012-ից իջնելով 0.7 շեմից ներքև և կայուն կերպով հաստատվելով այդ մակարդակում (գծանկար 1.44): Ավելին, կրթության ոլորտում միջին անվանական աշխատավարձը կազմում է պետական կառավարում հատվածում նույն ցուցանիշի 52%-ը, իսկ ֆինանսական և ապահովագրական գործունեության հատվածում միջին աշխատավարձի համեմատությամբ այն, բնականաբար, էլ ավելի ցածր է՝ ընդամենը 29%:



Գծանկար 1.44. Կրթության ոլորտում միջին հարաբերական աշխատավարձի դինամիկան

Այս վերլուծության համատեքստում թույլ մխիթարանք կարելի է համարել աղքատության ընդհանուր գծի նկատմամբ կրթության ոլորտի միջին աշխատավարձի հարաբերակցության կայուն աճի միտումը (գծանկար 1.45): 2017թ. կրթության ոլորտում միջին աշխատավարձը աղքատության ընդհանուր գծին համապատասխանող եկամտի սահմանային մեծությունը գերազանցել է մոտ 3 անգամ:



Գծանկար 1.45. Կրթության ոլորտում միջին աշխատավարձի հարաբերակցությունն աղքատության ընդհանուր գծի նկատմամբ

Հետաքրքրական կարող է դիտվել ՀՀ կրթության ոլորտում աշխատավարձի համեմատությունը առանձին երկրների նույն ցուցանիշի հետ: Այսպես, մեր հանրապետությունում կրթության ոլորտում միջին ամսական անվանական աշխատավարձը, ԱՄՆ դոլարով արտահայտված, գրեթե նույնքան է, ինչ Վրաստանում և նկատելիորեն բարձր է Մոլդովայի և Ուկրաինայի նույն ցուցանիշից: Երկրում միջին անվանական աշխատավարձի համեմատությամբ կրթության ոլորտում աշխատանքի վարձատրությունը Հայաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում նշանակալիորեն չի տարբերվում, իսկ Վրաստանում շատ ավելի ցածր է (գծանկար 1.46):



Գծանկար 1.46.Կրթության ոլորտում ամսական անվանական աշխատավարձի մեծությունը (ԱՄՆ դոլար) և դրա հարաբերությունը երկրում միջին ամսական անվանական աշխատավարձի նկատմամբ (2016թ. դեկտեմբեր)

Եզրակացություն #1. Բյուջետային ծախսերի կառուցվածքում կրթության մասնաբաժինը 2006-ից սկսած կայուն տեմպով նվազում է և վերջին տարիներին գտնվում է 8-9 տոկոսի շրջակայքում, ինչը շատ ավելի ցածր է, քան զարգացած և նույնիսկ՝ զարգացող տնտեսությունների մեծամասնությունում:

Եզրակացություն #2. 2009-2011թթ-ից սկսած, բոլոր եռամյա հատվածների համար նախադպրոցական, տարրական և միջնակարգ ընդհանուր կրթության ֆինանսավորման մասով սահմանված ծրագրային մակարդակները թերակատարվել են: Մեր դիտարկմամբ, կրթության ոլորտում ծախսերի եռամյա ծրագրումը ոչ ոչ այնքան ոլորտի զարգացման գերակայություններին համապատասխան ֆինանսական հենքի ձևավորման, որքան շահառուների առանձին խմբերին և հասարակությանն ընդհանրապես լավատեսական ազդակներ հաղորդելու նպատակ է հետապնդել:

Եզրակացություն #3. Բյուջետային ծախսերի կառուցվածքում գերակայությունները աստիճանաբար փոխվել են՝ ի վնաս կրթության ֆինանսավորման:

Եզրակացություն #4. Հայաստանում կրթական բոլոր երեք մակարդակներում մեկ սովորողի հաշվով բյուջետային ծախսերը՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ նկատմամբ, անհամեմատ ավելի ցածր են, քան զարգացած տնտեսություններում, նաև՝ որոշակիորեն ցածր են դիտարկված զարգացող տնտեսությունների համապատասխան մակարդակներից: Ֆինանսավորման տարբերություններն առավել ակնառու են կրթական առաջին և երրորդ մակարդակներում (ընդհուպ մինչև 3-4 անգամ):

Եզրակացություն #5. ՀՀ կրթության ոլորտում միջին ամսական անվանական աշխատավարձը վերջին տարիներին աճում է ավելի դանդաղ տեմպով, քան տնտեսությունում միջին աշխատավարձը: Արդյունքում, կրթության ոլորտում միջին աշխատավարձը հավասար է տնտեսությունում միջին աշխատավարձի 64%-ին, պետական կառավարում հատվածում միջին աշխատավարձի 52%-ին, ֆինանսական և ապահովագրական գործունեության հատվածում աշխատավարձի 29%-ին:

Եզրակացություն #6. Հետճգնաժամային ժամանակահատվածում՝ 2009թ. հետո, շոշափելի են կրթության ոլորտում անբարենպաստ զարգացումները, որոնք տարեցտարի միայն խորանում են: Կրթության բյուջետային ֆինանսավորման հարաբերական ցուցանիշները որակապես չեն բարելավվել: Կրթությունը լիարժեքորեն չի կատարում իր հիմնական առաքելությունը՝ մարդկային կապիտալի զարգացում, դրա արդյունավետ օգտագործում՝ բնակչության կյանքի որակի բարձրացման և մարդկային կայուն զարգացման նպատակով:

2. ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԸ

2.1. Կրթության ոլորտի վարկային ծրագրերը

Ներկայումս ՀՀ կրթության ոլորտում իրականացվում է երկու վարկային ծրագիր՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ՝ Կրթության բարելավման ծրագիրը և Ասիական զարգացման բանկի աջակցությամբ՝ Դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագիրը: Արդեն ավարտված ծրագրերից են Համաշխարհային բանկի կրթության որակի և համապատասխանության առաջին և երկրորդ ծրագրերը: Բացի այդ, կրթության ոլորտում զգալի ծախսերի բաղադրիչ էր պարունակում նաև ՀԲ աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագիրը: Հաջորդիվ ներկայացված են հիշատակված ծրագրերի բաղադրիչներն ու դրանց շրջանակներում իրականացվելիք կամ արդեն իսկ իրականացված միջոցառումները և աշխատանքները:

1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության բարելավման ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2014-2019թթ.):

Ծրագրի նպատակներն են հանրակրթության ոլորտի հետագա բարելավումը և մասնագիտական կրթության ուղղությամբ նորարարությունների խթանումը:

Ծրագիրը կազմված է հետևյալ բաղադրիչներից.

Առաջին բաղադրիչ - «Հանրակրթության որակի բարելավում», որը կազմված է չորս ենթաբաղադրիչներից.

1. Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում:
2. Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը:
3. Հիմնական կրթական կազմակերպությունների կարողությունների հզորացումը՝ ապահովելով սովորողների ուսման և կրթական վերջնարդյունքի մշտադիտարկումը:
4. Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով:

Երկրորդ բաղադրիչ - Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը:

Երրորդ բաղադրիչ - Ծրագրի կառավարում, մշտադիտարկում և գնահատում:

2. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագիր:

Ծրագիրը միտված է Աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության իրականացման օժանդակությանը: Ծրագրի նպատակներն են.

1. Դպրոցների շենքերի սեյսմակայունության բարձրացում:
2. Սեյսմիկ աղետների պատրաստվածության և արձագանքման կարողությունների հզորացում:
3. Սեյսմիկ ռիսկերի կառավարման և նվազեցման օժանդակող քաղաքականությունների և համակարգերի բարելավում:
4. Սեյսմիկ անվտանգության ներդրումային ծրագրի գործադիր և իրականացնող մարմինների կարողությունների զարգացում:

3. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացված Կրթության որակի և համապատասխանության երկրորդ վարկային ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2009-2016թթ.)

Ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի կրթական համակարգի զարգացման ուղղորդումն է գիտելիքահեն տնտեսության պահանջները՝ ապահովելով հասարակության սոցիալ-տնտեսական պահանջներին համապատասխան հանրակրթության և բարձրագույն մասնագիտական կրթության որակի աճ: Ծրագրով իրականացվող բարեփոխումները նպատակաուղղված են մի կողմից կրթության որակի շարունակական բարձրացման միջոցով հանրակրթության բնագավառում առկա ձեռքբերումների պահպանմանն ու զարգացմանը՝

ներառելով նաև նախադպրոցական կրթության հիմնախնդիրները, մյուս կողմից՝ աջակցելու բարձրագույն կրթության մատչելիության, որակի և համապատասխանության ապահովման խնդիրների լուծմանը:

Ծրագիրը ներառում է հետևյալ աշխատանքները՝

ա) դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացման և կրթու-թյան հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովման ուղղությամբ՝ ՀՀ Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի համայնքներում մոտ 70 միկրոծրագրերի իրականացում, դրանց գծով 140 դաստիարակների վերապատրաստում, մարզային խորհրդատուների աջակցությամբ 70 միկրոծրագրերի տեխնիկական օժանդակության կազմակերպում, միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի հետազոտության իրականացում, ուսուցիչ վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների ցանկում ընդգրկված կազմակերպությունների միջև անցկացվող մրցույթի արդյունքում հաղթած կազմակերպություններին 10 դրամաշնորհների տրամադրում, դրամաշնորհների միջոցով ուսուցիչ վերապատրաստող կազմակերպությունների կողմից հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստումների իրականացում, մրցույթով անցած և նոր ընտրված կամ վերընտրված դպրոցների տնօրեններից շուրջ 400 տնօրենի վերապատրաստում, ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրերին աջակցություն 12 տեղական խորհրդատուների կողմից, դպրոցական ցանցի ընդլայնում «Հարմոնիա» հիմնադրամի հետ 2011թ. կնքված պայմանագրի շրջանակներում (Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցում շուրջ 460 նոր դպրոցների ներառում, որոնք հիմնականում տեղակայված են երկրի դժվար հասանելի և հեռավոր գյուղական վայրերում), դպրոցի վարչակառավարման համար համակարգչային սարքավորումների տրամադրում (ՀՀ պետական հանրակրթական 1360 դպրոցների համակարգչային սարքավորումներով ապահովում՝ դպրոցի վարչակառավարչական գործառույթների իրականացման համար), ՏՀՏ ներդրման ծրագրի միջնաժամկետ ուսումնասիրություն (ծրագրի միջնաժամկետ գնահատում՝ հասկանալու համար արդեն կատարված աշխատանքների արդյունավետությունը, հետագա աշխատանքների մեջ հնարավոր փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, ծրագրի առաջընթացը՝ ՏՀՏ ներդրման ուղղությամբ:

Հետագայում ծրագրի միջնաժամկետ արդյունքները կհամադրվեն ծրագրի վերջնական գնահատման արդյունքների հետ և թույլ կտան տեսնել ծրագրի իրականացման և ազդեցության դինամիկան):

բ) Որակի ապահովման ազգային համակարգի ստեղծման և ամրապնդման ուղղությամբ՝ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի համար գույքի և համակարգչային սարքավորումների ձեռքբերում, որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման նպատակով՝ 5 ոչ պետական և մոտ 13 պետական բուհերի հետ պայմանագրերի կնքում և իրականացում, որակի ապահովման գործընթացների վերաբերյալ լուսաբանման ծրագրի իրականացում, որակի ապահովման չափանիշների, հավատարմագրման գործընթացների վերաբերյալ բուկլետների տպագրություն, մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման մոտ 150 մասնագետների վերապատրաստում՝ որակի ներքին ապահովման համակարգի ներդրման, ընթացակարգերի և մեխանիզմների վերաբերյալ:

4. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացված Կրթության որակի և համապատասխանության ծրագրի առանցքային նպատակն էր՝ ուղղորդել Հայաստանի կրթական համակարգի զարգացումը դեպի գլոբալացման արդի պայմաններում «գիտելիքների տնտեսության» պահանջները:

5. Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագիր (Համաշխարհային բանկ)

Ծրագրի նպատակը՝ աջակցել ՀՀ կառավարության քաղաքականությանը՝ բարձ-րացնելու աղքատների և խոցելի խմբերի կենսամակարդակը, բարելավելով որակն ու մատչելիությունը և մեծացնել համայնքային ենթակառուցվածքների և ծառայությունների տարածվածությունը աղքատության առավել բարձր աստիճան ունեցող համայնքներում և ամենախոցելի խմբերի համար: Ծրագրի առնչությունը կրթության ոլորտին հանգում էր կրթական հաստատությունների շենքերի և շինությունների շինարարությանը և կապիտալ վերանորոգմանը:

2.2. Կրթության ծախսերի ֆինանսավորումը վարկային ծրագրերի շրջանակներում

2018թ. պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվում է կրթության ոլորտում վարկային ծրագրերի շրջանակներում իրականացնել շուրջ 6.0 մլրդ դրամի ծախս, ինչը կազմում է կրթության բյուջետային ֆինանսավորման ընդհանուր ծավալի 4.7%-ը: Գծանկար 2.1-ում բերված է ցուցանիշի դինամիկան 2008-2018թթ: Կարելի է նկատել, որ հատկապես վերջին հինգ տարիների ընթացքում զգալի է վարկային ծրագրերի շրջանակներում կրթության ֆինանսավորման ծավալների կտրուկ աճի միտումը, ինչը, թերևս, կրթության ոլորտում անհետաձգելի լուծում պահանջող խնդիրների կարևորության լիարժեք իմաստավորման, և ընդհանրապես՝ կրթության՝ որպես կայուն մարդկային զարգացման գերակայության գիտակցման վկայություն է հանդիսանում:



Գծանկար 2.1. Վարկային ծրագրերի շրջանակներում ընդամենը ֆինանսավորումը, կրթության ոլորտ, 2008-2018թթ., մլրդ դրամներով[14]

Ընդ որում, վարկային ծրագրերի շրջանակներում բյուջետային ֆինանսավորումը տարեցտարի աճում է ոչ միայն բացարձակ, այլ նաև հարաբերական առումներով: Այսպես, վարկային ծրագրերի մասնաբաժինը կրթության բյուջետային ֆինանսավորման կառուցվածքում, օրինակ՝ 2008-ին կազմել է 2.1%, 2013-ին՝ 1.7%, իսկ 2017-2018թթ. ծրագրային մակարդակները կազմում են 3.8-4.7 տոկոս (գծանկար 2.2):



Գծանկար 2.2. Վարկային ծրագրերի մասնաբաժինը կրթության բյուջետային ծախսերի կառուցվածքում, տոկոս[15]

Վարկային ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցառումների ֆինանսավորումը հիմնականում իրականացվել է վարկային միջոցների հաշվին, իսկ ՀՀ համաֆինանսավորման մասնաբաժինը վերջին տարիներին չի գերազանցում 20% սահմանաչափը (գծանկար 2.3):

14 Տվյալների աղբյուրները՝ 2008-2016թթ. ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները, ՀՀ պետական բյուջեի մասին 2017 և 2018թթ. օրենքները:

15 Տվյալների աղբյուրները՝2008-2016թթ. ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները, ՀՀ պետական բյուջեի մասին 2017 և 2018թթ. օրենքները:



Գծանկար 2.3. Կրթության վարկային ծրագրերում ՀՀ համաֆինանսավորման մասնաբաժինը (տոկոս ընդամենի նկատմամբ)[16]



Գծանկար 2.4. Վարկային միջոցները կրթության ոլորտում, ըստ տարիների, մլրդ դրամներով[17]

Դիտարկվող ժամանակահատվածում կրթության ոլորտում վարկային միջոցներով կատարվող ծախսերը աչքի են ընկել զգալի տատանողականությամբ: 2008-ից ցուցանիշն կարճաժամկետ անկում է գրանցել՝ կրճատվելով շուրջ երկու անգամ, որին հաջորդել է նույնպիսի աճ՝ ևս կարճաժամկետում: 2015-ին վարկային միջոցներով կրթության ոլորտում ֆինանսավորվել է արդեն 2.66 մլրդ դրամի ծախս, և չնայած դրան հաջորդող տարում վարկային միջոցների ներգրավումը նվազել է մինչև 2.0 մլրդ դրամի սահմանագիծը, սակայն հետագա տարիների համար նախատեսված են շատ ավելի բարձր մակարդակներ՝ 2018-ի պետական բյուջեի մասին օրենքով՝ ընդհուպ մինչև 5.0 մլրդ դրամ: 2019-2021թթ. ՊՄԺԾԾ-ով նախատեսվում է կրթության ոլորտում վարկային ծրագրերով ֆինանսավորել 12.0-ից մինչև 13.3 մլրդ դրամի ծախս, որից 9.5 մլրդ դրամը՝ ԱԶԲ աջակցությամբ իրականացվող Դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի, իսկ մնացած մասը՝ ՀԲ աջակցությամբ իրականացվող Կրթության բարելավման ծրագրի շրջանակներում (աղյուսակ 2.1): Կրթության բյուջետային ֆինանսավորման կառուցվածքում վարկային ծրագրերի մասնաբաժինը 2019թ. կկազմի 9.5%, 2020-ին՝ 8.3%, 2021թ.՝ 6.8%:

Աղյուսակ 2.1. Կրթության ոլորտում վարկային ծրագրերով նախատեսվող ֆինանսավորումը 2019-2021թթ.

	2019թ.	**2020թ.**	**2021թ.**
Ընդամենը ֆինանսավորումը, մլրդ դրամ	13.3	13.3	12.0
այդ թվում՝			
Դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագիր	9.5	9.5	9.5
Կրթության բարելավման ծրագիր	3.8	3.8	2.5
Մասնաբաժինը կրթության բյուջետային ծախսերի կառուցվածքում, %	9.5	8.3	6.8

16 Տվյալների աղբյուրները՝ 2008-2016թթ. ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները, ՀՀ պետական բյուջեի մասին 2017 և 2018թթ. օրենքները:

17 Տվյալների աղբյուրները՝2008-2016թթ. ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները, ՀՀ պետական բյուջեի մասին 2017 և 2018թթ. օրենքները:

Վարկային միջոցների կառուցվածքում ընթացիկ ծախսերը 2018-ին նախատեսված են 0.74 մլրդ դրամի չափով, ընդ որում, ընթացիկ ծախսերի բացարձակ մեծությունը 2014-ից սկսած տարեցտարի կրճատվում է, ի տարբերություն դրան նախորդող ժամանակահատվածի, երբ ընթացիկ ծախսերի հոդվածներով կատարված միջոցառումների ֆինանսավորման ծավալները աճեցին շուրջ երկու անգամ (գծանկար 5): Հատկանշական է, որ վարկային միջոցների կառուցվածքում ընթացիկ ծախսերի տեսակարար կշիռը շատ ավելի կտրուկ վայրիվերումներ է արձանագրել՝ դիտարկվող ժամանակահատվածի առաջին կեսում (2008-2013թթ.) 33.1 տոկոսից աճելով մինչև 80.5 տոկոսը, որից հետո, երկրորդ կեսում նույնպիսի սրընթաց վայրեջք գրանցելով (մինչև 15.1%):



Գծանկար 2.5. Ընթացիկ ծախսերը կրթության ոլորտում ներգրավված վարկային միջոցների կառուցվածքում[18]

Հիմնական միջոցների մասով, բնականաբար, միտումներն ու իրավիճակը, վերը նշվածի համեմատությամբ, տրամագծորեն հակադիր են: Այսպես, 2013-ից սկսած աճում են կրթության ոլորտում վարկային միջոցներով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը, որոնց առանցքային հոդվածով՝ հիմնական միջոցների գծով ծախսերը 2013-2016թթ. աճել են ուրջ 4 անգամ, իսկ 2018թ. պետական բյուջեով նախատեսվում է 4.2 մլրդ դրամի ֆինանսավորում (գծանկար 2.6):



Գծանկար 2.6. Հիմնական միջոցների գծով ծախսերը կրթության ոլորտի վարկային միջոցների կառուցվածքում[19]

Ոչ ֆինանսական ակտիվների գծով վարկային միջոցների շրջանակներում նախատեսված ծախսերի կառուցվածքում վերջին տարիներին գերակշռում են շենքերի և շինությունների շինարարության կամ վերանորոգման ծախսերը (2016-ին՝ 0.78 մլրդ դրամ, 2017-ին՝ 2.26 մլրդ դրամ, 2018-ին՝ մոտ 4.0 մլրդ դրամ), իսկ մինչև 2015թ. զգալի էր մեքենաների և սարքավորումների մասնաբաժինը (գծանկար 2.7):

18 Տվյալների աղբյուրները՝ 2008-2016թթ. ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները, ՀՀ պետական բյուջեի մասին 2017 և 2018թթ. օրենքները:
19 Տվյալների աղբյուրները՝2008-2016թթ. ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները, ՀՀ պետական բյուջեի մասին 2017 և 2018թթ. օրենքները:



Գծանկար 2.7. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կրթության ոլորտում ներգրավված վարկային միջոցներով, մլրդ դրամներով[20]

Հատկանշական է, որ կրթության ոլորտում շենքերի և շինությունների գծով վարկային միջոցների զգալի ծախսումներ նախատեսվել և կատարվել են միայն 2016-ից հետո, իսկ դրան նախորդող քառամյա ժամանակահատվածում դիտարկվող հոդվածով ֆինանսավորումը գտնվել է զրոյական մակարդակի վրա (գծանկար 2.8): 2016-ից վարկային ծրագրերում գերակայությունը փոխվել է կրթական հաստատությունների շենքային պայմանների բարելավման ուղղությամբ: ՀԲ աջակցությամբ իրականացվող Կրթության բարելավման, ինչպես նաև Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Դպրոցների սեյսմիկ պաշտպանության վարկային ծրագրերի գործարկմամբ շենքերի և շինությունների շինարարության և վերանորոգման հոդվածներով ծախսերը կտրուկ ավելացան, 2017-ին գերազանցելով 1.0 մլրդ դրամի սահմանագիծը (ըստ բաղադրիչներից յուրաքանչյուրի), իսկ 2018թ. բյուջեով նախատեսված մակարդակը, կրթության ոլորտում շենքերի և շինությունների շինարարության ու կապիտալ վերանորոգման համար կազմում է համապատասխանաբար 2.5 և 1.45 մլրդ դրամ:



Գծանկար 2.8. Շենքերի և շինությունների գծով ծախսերը կրթության ոլորտում ներգրավված վարկային միջոցներով, մլրդ դրամներով[21]

Մեքենաների և սարքավորումների գծով ծախսերը զգալի են եղել 2011-2015թթ., ընդ որում, դրանց կառուցվածքում գերակշռել են վարչական սարքավորումների ձեռքբերման ծախսերը (գծանկար 2.9):

20 Տվյալների աղբյուրները՝2008-2016թթ. ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները, ՀՀ պետական բյուջեի մասին 2017 և 2018թթ. օրենքները:
21 Տվյալների աղբյուրները՝2008-2016թթ. ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները, ՀՀ պետական բյուջեի մասին 2017 և 2018թթ. օրենքները:



Գծանկար 2.9. Վարչական սարքավորումների ծախսերը կրթության ոլորտում ներգրավված վարկային միջոցներով, մլրդ դրամ[22]

Ընդհանուր առմամբ, 2008-2016թթ. ՀՀ կրթության ոլորտում վարկային ծրագրերի շրջանակներում կատարված և 2017-2018թթ. համար պլանավորված աշխատանքների ծավալը կազմում է 30.83 մլրդ դրամ, որից 25.34 մլրդ դրամը (82.2%) վարկային միջոցներն են, իսկ մնացած շուրջ 5.5 մլրդ դրամը՝ ՀՀ համաֆինանսավորումը: Վարկային միջոցների բաշխումն ըստ ընթացիկ ծախսերի և հիմնական միջոցների ձեռքբերման ծախսերի ներկայացված է գծանկար 2.10-ում: Ընթացիկ ծախսերի մասնաբաժինը վարկային միջոցների կառուցվածքում 37.5% է, իսկ հիմնական միջոցների ձեռքբերման ծախսերինը՝ համապատասխանաբար 62.5%:



Գծանկար 2.10. Վարկային միջոցների բաշխումն ըստ ընթացիկ ծախսերի և հիմնական միջոցների ձեռքբերման ծախսերի, մլրդ դրամ[23]

Կրթության ոլորտում վարկային միջոցներով կատարված և 2018-ին նախատեսվող ծախսերի կառուցվածքում, ընթացիկ ծախսերին հաջորդում է վարչական սարքավորումների ձեռքբերումը (5.27 մլրդ դրամ կամ ընդհանուրի 21%-ը), շենքերի և շինությունների շինարարությունը (4.63 մլրդ դրամ կամ 18%), շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգումը (3.72 մլրդ դրամ կամ 15%) (գծանկարներ 2.11 և 2.12):

22 Տվյալների աղբյուրները՝ 2008-2016թթ. ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները, ՀՀ պետական բյուջեի մասին 2017 և 2018թթ. օրենքները:
23 Տվյալների աղբյուրները՝ 2008-2016թթ. ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները, ՀՀ պետական բյուջեի մասին 2017 և 2018թթ. օրենքները:



Գծանկար 2.11. Կրթության ոլորտում վարկային միջոցներով 2008-2016թթ փաստացի կատարված և 2017-2018թթ. ծրագրված ծախսերի կառուցվածքն ըստ հիմնական հոդվածների, մլրդ դրամներով[24]



Գծանկար 2.12. Կրթության ոլորտում վարկային միջոցներով 2008-2016թթ փաստացի կատարված և 2017-2018թթ. ծրագրված ծախսերի կառուցվածքն ըստ հիմնական հոդվածների, տոկոսներով[25]

Ընդհանուր առմամբ, կրթության ոլորտում 2008-2018թթ. վարկային միջոցներով փաստացի կատարված ծախսերի մեծությամբ առաջատարը Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացված Կրթության որակի և համապատասխանության երկրորդ ծրագիրն է: Դրա շրջանակներում ծախսվել է 10.23 մլրդ դրամի վարկային միջոց, որից 5.23 մլրդ դրամն ուղղվել է ընթացիկ ծախսերին, իսկ մոտ 5.0 մլրդ դրամ՝ վարչական սարքավորումների ձեռքբերմանը (աղյուսակ 2.2):

24 Տվյալների աղբյուրները՝2008-2016թթ. ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները, ՀՀ պետական բյուջեի մասին 2017 և 2018թթ. օրենքները:
25 Տվյալների աղբյուրները՝2008-2016թթ. ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները, ՀՀ պետական բյուջեի մասին 2017 և 2018թթ. օրենքները:

Աղյուսակ 2.2. Կրթության ոլորտում վարկային միջոցներով 2008-2016թթ. փաստացի կատարված և 2017-2018թթ. ծրագրված ծախսերի կառուցվածքն ըստ առանձին ծրագրերի, մլրդ դրամներով[26]

Ծրագիրը	**Ընդամենը**	Ընթացիկ ծախսեր	Շենքերի և շինությունների շինարարություն	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	Վարչական սարքավորումներ	Տրանսպորտային սարքավորումներ	Նախագծահետազոտական ծախսեր	Այլ մեքենաներ և սարքավորումներ
Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կրթության բարելավման ծրագիր	**6.50**	2.68		3.31	0.31	0.04	0.17	
Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականավող Դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագիր	**4.75**	0.20	3.68				0.84	
Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության որակի և համապատասխանության երկրորդ ծրագիր	**10.23**	5.23			4.96			
Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության որակի և համապատասխանության ծրագիր	**2.51**	1.40						1.10
Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագիր	**1.36**		0.95	0.40				

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության բարելավման ծրագրով 2015-2018թթ. վարկային միջոցներով փաստացի կատարված և պլանավորված ծախսերը 6.5 մլրդ դրամ են, որից 3.3 մլրդ դրամը՝ շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում հոդվածով:
ՀՀ կրթության ոլորտում վարկային միջոցների երկրորդ խոշորագույն դոնորը Ասիական զարգացման բանկն է, որի աջակցությամբ իրականացվող Դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի շրջանակներում 2016-2018թթ. փաստացի և պլանավորված ծախսերը (վարկային միջոցներով՝ առանց ՀՀ համաֆինանսավորման) կազմում են 4.75 մլրդ դրամ, որից շուրջ 3.7 մլրդ դրամը՝ շենքերի և շինությունների շինարարություն հոդվածով:

2.3. Ամփոփում

Եզրակացություն #1. ՀՀ կրթության ոլորտում վարկային ծրագրերի շրջանակներում բյուջետային ֆինանսավորումն աճի միտումներ է գրանցում: Կրթության բյուջետային ֆինանսավորման կառուցվածքում վարկային միջոցների մասնաբաժինը 2008-2018թթ ավելացել է երկու անգամ՝ հասնելով 4.7 տոկոսի:

Եզրակացություն #2. Վերջին տարիներին նկատելի է վարկային միջոցներով կատարվող ծախսերի կառուցվածքում ընթացիկ ծախսերի կրճատման և հիմնական միջոցների վրա ծախսերի ավելացման միտումը: Կապիտալ բնույթի ծախսերի կառուցվածքում աստիճանաբար գերակշռում են շենքերի և շինությունների շինարարության և կապիտալ վերանորոգման ծախսերը:

26 Տվյալների աղբյուրները՝2008-2016թթ. ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները, ՀՀ պետական բյուջեի մասին 2017 և 2018թթ. օրենքները:

3. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ; ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

3.1. Ծրագրի նկարագիրը

«Կրթության բարելավում» վարկային ծրագիրը բխում է կառավարության կողմից կրթության ոլորտի ռազմավարական զարգացման առանձին խնդիրների լուծման և կրթության ոլորտում ՀԲ ֆինանսավորմամբ նախկինում իրականացված վարկային ծրագրերի արդյունքների ամրապնդման և շարունակականության ապահովման անհրաժեշտությունից: Ի մասնավորի, կրթական բարեփոխումների առանցքային ուղղություն է դիտվում կրթության որակի բարձրացումը, ինչը, ՀՀ նախորդ կառավարությունների մոտեցմամբ, անհրաժեշտ է իրագործել կրթական բոլոր մակարդակներում ծառայությունների որակի բարելավման, կրթական գործընթացներում նորագույն տեխնոլոգիաների ակտիվ ներդրման, նորարարությունների և նախաձեռնողականության խթանման, կրթական հաստատությունների ինքնավարության խորացման, դրանց կառավարման գործընթացներում շահառուների լայն խմբերի ներգրավման, կրթության ֆինանսավորման ինստիտուցիոնալ համակարգի կատարելագործման շնորհիվ: Ավելի մանրամասնելով և կոնկրետացնելով, կրթության որակի բարելավման՝ նախորդ կառավարությունների տեսլականը կարելի է առարկայացնել հետևյալ խնդիրների լուծման տիրույթում.

- Նախակրթարաններում 5-6 տարեկան երեխաների ընդգրկվածության բարձրացում, նախադպրոցական կրթության որակի բարելավում և յուրաքանչյուր երեխայի շարունակական զարգացում՝ հաշվի առնելով երեխայի անհատական կարիքներն ու կարողությունները,
- Միջնակարգ կրթության որակի բարելավում՝ կատարելագործելով կրթակարգն ու ուսումնական ծրագրերը,
- Տեղեկատվական տեխնոլոգիաները հանրակրթության ոլորտում ինտեգրման քաղաքականության շարունակում, ՏՀ տեխնոլոգիաները՝որպես ադյունավետ ուսուցման և դասավանդման գործիքի կիրառման խթանում,
- Կրթության որակի և համապատասխանության բարելավում՝ ավագ դպրոցների ցանցում,
- Բարձրագույն կրթության որակի, համապատասխանության, նորարարության և մատչելիության բարձրացում:

Այս խնդիրների լուծումը խթանելու անհրաժեշտությամբ էր պայմանավորված կրթության ոլորտում Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» առաջին և երկրորդ վարկային ծրագրերի իրականացումը, ինչպես նաև՝ «Կրթության բարելավում» նոր վարկային ծրագրի նախաձեռնումը:

«Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ ծրագիրն իրականացվել է 2009-2015թթ. ժամանակահատվածում: Դրա շրջանակներում արձանագրված հիմնական արդյունքներն են.

1) 6500 5-6 տարեկան երեխաների ընդգրումը նախադպրոցական հաստատություններում և Հայաստանի տարբեր մարզերում 265 նախադպրոցական հաստատությունների բարեկարգումը,
2) ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրի նախաձեռնումը, ուսուցիչների վերապատրաստման ծրագրերի մշակումը և ատեստավորման նպատակով շուրջ 12,000 ուսուցիչների վերապատրաստումը,
3) 1,420 միջնակարգ դպրոցների միացումը Համացանցին,
4) ավագ դպրոցների ցանցի ստեղծումը և այդ դպրոցներում ռեսուրս կենտրոնների ստեղծումը, սարքավորումներով ու կրթական նյութերով համալրումը,
5) Հանրակրթության և բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծումը և շահագործումը,
6) բարձրագույն կրթության կայուն ֆինանսավորման ռազմավարության մշակումը, 15 հայաստանյան բուհերի փորձնական ինստիտուցիոնալ հավաստագրումը և 10 բուհերում նորարարական ծրագրերի ներդրումը:

Այս արդյունքների վրա հիմնվելով, նաև՝ առանձին ուղղություններով կրթության որակի բարձրացման նպատակադրումից ելնելով էլ նախաձեռնվեց ՀԲ «Կրթության բարելավում» ծրագիրը, որն, ըստ էության, ունի երկու հիմնական նպատակ.

1. հանրակրթության հետագա բարելավում՝ ապահովելով տարրական դպրոց մուտք գործող երեխաների պատրաստվածությունը և բարելավելով ավագ դպրոցներում ֆիզիկական պայմաններն ու կրթական ռեսուրսների առկայությունը

2. աջակցել բարձրագույն կրթական հաստատություններին՝ ապահովելով կրթության որակն ու համապատասխանությունը:

Ծրագրի իրագործման վարկային պայմանագիրը ՀՀ կառավարության (ի դեմս՝ ֆինանսների նախարարության) և Համաշխարհային բանկի միջև կնքվել է 2013թ. մայիսին, իսկ բուն գործողությունները սկսել է իրականացվել 2015թ.-ից: Ծրագրի տևողությունը 5 տարի է, այն նախատեսվում է ավարտել 2019թ.: Ֆինանսավորման նախատեսվող ծավալը 37.5 մլն ԱՄՆ դոլար է, որի 20%-ը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ:

Ծրագիրը կազմված է երեք բաղադրիչներից.

Առաջին բաղադրիչ՝ «Հանրակրթության որակի բարելավում», (ընդ.՝ 27,5 մլն ԱՄՆ դոլար), որի ենթաբաղադրիչներն են.

1.1. Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում (ընդ.՝ 1,875 մլն. ԱՄՆ դոլար):

1.2. Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը (ընդ.՝ 22,5 մլն ԱՄՆ դոլար):

1.3. Կրթության համակարգում տվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում (ընդ.՝ 2,5 մլն. ԱՄՆ դոլար):

1.4. Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով (ընդ.՝ 0,625 մլն. ԱՄՆ դոլար):

Երկրորդ բաղադրիչ՝ «Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը» (ընդ.՝6,25 մլն. ԱՄՆ դոլար):

Երրորդ բաղադրիչ՝ «Ծրագրի կառավարում, մշտադիտարկում և գնահատում» (ընդ՝. 3,75 մլն. ԱՄՆ դոլար):

3.2. Ծրագրի արդյունքների գնահատում

Բաղադրիչ 1. Հանրակրթության որակի բարելավում

Ենթաբաղադրիչ 1.1. Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում

Նախադպրոցական կրթությունը կարևոր դերակատարում ունի երկրի կրթական համակարգում: Դրա որակի բարելավումը էականորեն նպաստում է հանրակրթության ոլորտում ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացմանը, կրթական համակարգի հիմքերի ամրապնդմանն ու ամբողջականության ապահովմանը: Նախադպրոցական կրթության բարելավման անհրաժեշտությամբ և խնդիրների լուծման հրատապությամբ պայմանավորված դեռևս 2008թ. ՀՀ կառավարության կողմից ընդունվեց 2008-2015թթ. նախադպրոցական կրթության բարեփոխումների ռազմավարական և փորձնական ծրագրերի փաթեթը[27], որի համաձայն ոլորտում իրականացվելիք քաղաքականության հիմնական նպատակ սահմանվեց նախադպրոցական ծառայությունների որակի և մատչելիության բարելավումը: Այս համատեքստում, առանձնակի կարևորություն ունի նախադպրոցական ավագ տարիքային խմբի՝ չորսից վեց տարեկան երեխաներին տարրական դպրոցին նախապատրաստելու խնդիրը, որի լուծումը թույլ կտա մեկնարկային պայմաններ ապահովել տարրական դպրոցում ուսումը շարունակելու համար, կնպաստի ուսման մեջ առաջընթաց ունենալուն, ինչպես նաև կայուն հիմքեր կստեղծի նրանց անձնային ու սոցիալական հմտությունների զարգացման և ձևավորման համար:

Ի հավելումն վերը նշվածի, ՀՀ կառավարության կողմից 2012թ. ընդունված 2012-2017թթ. նախադպրոցական կրթության բարեփոխման ծրագրում ևս առանցքային ռազմավարական թիրախ է հանդիսանում նախադպրոցական հաստատություններում երեխաների ընդգրկվածության բարձրացումը: Մյուս կողմից, նախադպրոցական կրթության ոլորտում ծառայությունների մատուցման գործառույթը վերապահված է գլխավորապես ՏԻՄ-երին, և

27 2008թ. մարտի 13-ի N10-Ա որոշում:

նախադպրոցական կրթության որակի բարելավման ֆինանսական կողմը առաջին հերթին պետք է ապահովվի ՏԻՄ բյուջեների հաշվին, ինչը, սակայն, մեր իրողությունների պայմաններում, երբ համայնքների սեփական եկամուտները ապահովում են համայնքների բյուջեի եկամուտների միայն կեսը, իսկ շատ համայնքներում՝ 20 տոկոսից ոչ ավելին, նախադպրոցական կրթության որակյալ ծառայությունների մատուցումը մեծ թվով համայնքների համար անհամաչափ ֆինանսական բեռ է ենթադրում:

Այս խնդրի լուծման շրջանակներում «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային առաջին և երկրորդ ծրագրերի շրջանակներում 2008-2014 թվականների ընթացքում իրականացվել են նախակրթարանների հիմնման միկրոծրագրեր, որի արդյունքում ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում ստեղծվել են 302 նախակրթարաններ: Նախակրթարաններից 220-ը ստեղծվել են դպրոցների հենքի վրա, իսկ 82-ը՝ մանկապարտեզների: Նորաստեղծ նախակրթարաններում ընդգրկվել են ավագ տարիքային խմբի մոտ 20.000 երեխա: Ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են 250 դաստիարակներ:

2011-2015թթ. «Բեյքեր Թիլլի Արմենիա» ընկերությունը կատարել է նախադպրոցական կրթական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի և դրա վրա ազդող գործոնների վերլուծություն: Մոտ 1000 երեխաների հարցման և թեսթավորման արդյունքները ցույց են տվել, որ նախադպրոցական հաստատություն հաճախող երեխաները ստացել են ՎԶԳ ավելի բարձր միավորներ, քան չհաճախողները: Ընդ որում, երեխաների առաջին խմբի մոտ նախադպրոցական հաստատություն հաճախելու ժամանակահատվածում արձանագրվել է զարգացման ընկատելի առաջընթաց՝ հատկապես տարրական մաթեմատիկայի, գիտելիքների, տրամաբանության և մտածողության, բանավոր խոսքի զարգացման, վաղ գրաճանաչության ուղղություններով[28]:

ԿՈՀ առաջին և երկրորդ ծրագրերի շրջանակներում նախակրթարանների ստեղծման հաջողված մոդելը, նաև՝ դրա ընդգրկման շրջանակների ընդլայնման, նախորդ ծրագրերից դուրս մնացած միկրոծրագրերի ֆինանսավորման հայտերի բավարարման անհրաժեշտությամբ պայմանավորված էլ «Կրթության բարելավում» ծրագրում ներառվեց «Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում» ենթաբաղադրիչը:

Ենթաբաղադրիչի նպատակներն են.

- երեխաներին նախապատրաստել դպրոց մուտք գործելուն՝ ապահովելով հավասար մեկնարկային հնարավորություններ,
- մեծացնել նախադպրոցական կրթության ծրագրերում երեխաների ընդգրկվածությունը՝ ներառելով սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին*:*

Այս նպատակների իրականացումը հնարավոր է դիտվում հետևյալ խնդիրների լուծման արդյունքում.

- նպաստել և աջակցել երեխաների նախադպրոցական կրթության իրականացման նոր՝ ոչ ծախսատար ծառայությունների ներդրմանը, որոնք մատչելի կլինեն բնակչության առավել անապահով խավերին, ինչպես նաև կնպաստեն գործող հաստատություններում երեխաների ընդգրկման աճին,
- խրախուսել համայնքների նախաձեռնությունները ուղղված նախադպրոցական կրթական մատչելի և շարունակական ծառայությունների մատուցմանը,
- վերապատրաստել նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների մանկավարժներին, վարչական անձնակազմին:

Ենթաբաղադրիչի շրջանակներում իրականացվող հիմնական գործողություններն են.

- բացահայտել այն սոցիալապես անապահով համայնքները, և այն հաստատությունները, որոնք կարող են տրամադրել նախադպրոցական կրթական ծառայություններ,
- կազմակերպել խթանման աշխատանքներ թիրախային համայնքներում, ծանոթացնել համայնքի ղեկավարությանը, ծնողներին և հաստատությունների վարչական կազմին նախադպրոցական կրթության բարեփոխումներին, նոր ոչ ծախսատար ծառայությունների ներդրման հնարավորություններին և դրամաշնորհային ծրագրի ընթացակարգերին,
- կազմակերպել դրամաշնորհային միկրոծրագրեր իրականացնող հաստատությունների ընտրությունը հայտ ներկայացրած հաստատություններից՝ գնահատելով ներկայացված առաջարկները համաձայն սահմանված չափանիշների,
- օժանդակել հաստատություններին՝ կահույքի, գրենական պիտույքների և այլ գույք սարքավորումների գնման գործընթացների կազմակերպմանը,
- փոխհատուցել կազմակերպության որոշ ծախսերը՝ կոմունալ ծախսեր և աշխատավարձերի վճարում, որպես համայքի/ծնողների ներդրում համաձայն սահմանված բյուջեի,

28 Բեյքեր Թիլլի Արմենիա, 2011-2015 Նախադպրոցական կրթական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի և դրա վրա ազդող գործոնների հետազոտություն, 2015:

- կազմակերպել վերապատրաստում դրամաշնորհային միկոծրագրեր իրականացնող հաստատությունների ուսուցիչների/տնօրենների համար,
- ցուցաբերել տեխնիկական աջակցություն դրամաշնորհների իրականացման ընթացքում,
- մշտադիտարկել և կազմակերպել միկրոծրագրերի ազդեցության գնահատումը:

Դրամաշնորհային միկրոծրագրերի իրականացման համար կիրառվում են հետևյալ մոդելները[29].

1. Դպրոցներում մեկ տարվա կամ եռամսյա նախադպրոցական ծրագրերի իրականացում 4-ից մինչև 6 տարեկան երեխաների համար՝ ապահովելով ազատ և համակողմանի զարգացման միջավայր և կիրառելով ուսուցման երեխայակենտրոն մեթոդներ: Դպրոցներում 3.5-4 ժամյա տևողությամբ նախադպրոցական կրթական ծառայությունների կազմակերպում (առանց տաք սննդի և քնելու կազմակերպման, նախաճաշը երեխաները կարող են բերել իրենց հետ):

2. Արդեն գործող նախադպրոցական հաստատություն/մանկապարտեզ հաճախող երեխաների թվի ավելացում՝ քիչ ծախսատար ծառայությունների ներդրման միջոցով.

ա/ առաջին հերթին անապահով ընտանիքների երեխաների ընդգրկմամբ՝ նոր խմբերի բացման կամ թերկոմպլեկտավորված խմբերի լրացման միջոցով,

բ/ նախադպրոցական հաստատություններում 3.5-4 ժամ տևողությամբ նախադպրոցական կրթական ծառայությունների կազմակերպում (առանց տաք սննդի, կամ երեխաները սնունդը բերում են իրենց հետ):

3.Նախադպրոցական կրթական ծառայությունների կազմակերպում տարբեր կրթամշակույթային հաստատությունների հիմքի վրա:

Առաջարկվող միկրոծրագիրը պետք է արտահայտի համայնքում առկա նախադպրոցական կրթության հիմնախնդիրները և կրթական կարիքները: Առաջարկվող միկրոծրագիրը պետք է հստակ առաջադրի նպատակները, խնդիրները և նկարագրի ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքները: Բացի այդ, առաջարկվող միկրոծրագրերը ոչ միայն պետք է բարձրացնեն երեխաների պատրաստվածությունը դպրոցին, այլ նաև 4-6 տարեկան երեխաների համար ապահովեն նախադպրոցական կրթական չափորոշիչներով սահմանված նվազագույն պահանջները:

Միկրոծրագրերի ընտրության կարևոր չափանիշ է դրանց շարունակականությունը: Առաջարկվող միկրոծրագրում պետք է հստակ նկարագրվեն միկրոծրագրի հետագա շարունակականության ապահովման հնարավորությունները, երաշխիքները, ֆինանսավորման աղբյուրներն ու մեխանիզմները: Համայնքի և ծնողների ներգրավումը միկրոծրագրի նախագծման, իրականացման ու վերահսկման աշխատանքներում միկրոծրագրի կենսունակության գլխավոր պայմաններից մեկն է: Միկրոծրագրի շարունակելիությունը ենթադրում է նրա գործունեության ապահովում առնվազն հետագա 3 տարիներին ապահովելով՝

- կայուն հիմքեր և նախապայմաններ ծրագրի իրականացման ավարտից հետո նախադպրոցական կրթական ծառայություններում ձեռքբերումների շարունակման ուղղությամբ,
- իրատեսական նախադրյալներ ծրագրի իրականացման ավարտից հետո հետագա ֆինանսատնտեսական գործունեությունը ծավալելու ուղղությամբ,
- անհրաժեշտ նախադրյալներ ծրագրի իրականացման ավարտից հետո հաստատությունում անկախ ֆինանսատնտեսական գործունեություն ծավալելու ուղղությամբ:

Դրամաշնորհի առավելագույն չափը կարող է կազմել 22000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Ընդհանուր արժեքի 75 տոկոսը պետք է կազմի դրամաշնորհի գումարը, իսկ մնացած 25 տոկոսը՝ համայնքի/ ծնողական ներդրումները:

Վարկային միջոցները հիմնականում պետք է ուղղվեն տարածքի բարեկարգմանը, գույքով և սարքավորումներով համալրման աշխատանքների իրականացմանը, դաստիարակների և վարչական կազմի վերապատրաստմանը, ուսումնական ու ուսուցողական նյութերի (գրքեր, խաղալիքներ, ուսուցողական նյութեր, ռեբուսներ, մեծ խաղալիքներ դերային խաղերի համար և այլն) ձեռքբերմանը:

Համայնքի և ծնողական ներդրումները պետք է օգտագործվեն աշխատողների աշխատավարձերը վճարելու և այլ ծախսերի համար (էլեկտրականություն, վառելիք, ջեռուցում, ջուր/կոյուղի, հաղորդակցման ծառայություններ, սնունդ և այլն.): Ընդ որում, համայնքի և ծնողների մասնակցության ձևերը միկրոծրագրերում կարող են լինել ինչպես դրամական (ծնողներից, համայնքի անդամներից, տեղական իշխանություններից, այլ աղբյուրներից), այնպես էլ ոչ դրամական (գույք, սարքավորումներ կամ աշխատուժ) ձևով: Խրախուսվում է նաև երեխաների ծնողների ներգրավվումը միկրոծրագրի իրականացմանը որպես խոհարարներ, դայակներ, ինչպես նաև նրանց

29 Դրամաշնորհներ նախադպրոցական կրթության միկրոծրագրերի իրականացման համար: Ղեկավար ձեռնարկ: ՀՀ Կրթության բարելավում ծրագրի գործառնական ձեռնարկի հավելված 6Ա, 2016թ.:

անվարձահատույց մասնակցությունը հաստատության վերանորոգման աշխատանքների իրականացմանը:
Ակնկալվող արդյունքները

ԿԲԾ ենթաբաղադրիչ 1.1-ի իրագործման ակնկալվող արդյունքներն են (մինչև ծրագրի գործողության ավարտը՝ 2019թ.)՝

1. Մատչելի և կայուն 120 նախակրթական հաստատությունների հիմնում ընտրված համայնքներում:
2. Համայնքների և ծնողների մասնակցության աճ նախադպրոցական կրթության կազմակերպման գործում:
3. Նախադպրոցական կրթության ծրագրերում մոտ 2400 4-6 տարեկան երեխաների ընդգրկվածության աճ[30]:

Արդյունքների կատարողականը

Ծրագրի շրջանակներում իրականացվող նախադպրոցական կրթության միկրոծրագրերի արդյունավետությունն ապահովելու նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարի 10.03.2015 թվականի թիվ 142-Ա/Ք հրամանի համաձայն ստեղծվել է կառավարման մարմին՝ հանձնաժողով, որը հաստատել է նախակրթարանների ստեղծման ժամանակացույց ըստ մարզերի: 2015-2016թթ. ծրագրեր են իրականացվել Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, 2016-2017թթ.՝ Տավուշի, Լոռու և Արմավիրի մարզերում; 2017-2018թթ. Սյունիքի, Արարատի և Արագածոտնի մարզերում, իսկ 2018-2019թթ. նախատեսվում է ծրագրեր իրականացնել Երևանում, Վայոց Ձորի մարզում և այլ մարզերում՝ ըստ անհրաժեշտության:
ԿԲԾ ենթաբաղադրիչ 1.1-ի շրջանակներում ստացված միջանկյալ արդյունքները ամփոփ ներկայացված են աղյուսակ 3.1-ում:

Աղյուսակ 3.1. Ենթաբաղադրիչ 1.1-ի միջանկյալ արդյունքները

	2015	**2016-17**	**2017-18**	**Ընդամենը**
Միկրոծրագրեր	33	24	23	80
Հաճախող երեխաներ	1170	700	560	2430
Վերապատրաստված դաստիարակներ	79	55	46	180
Մարզեր	Կոտայք (13) Շիրակ (12) Գեղարքունիք (8)	Արմավիր (12) Տավուշ (6) Լոռի (6)	Արարատ (9) Արագածոտն (8) Սյունիք (3) Գեղարքունիք (3)	

2015-2017թթ. ընթացքում հանրապետության 10 մարզերում ստեղծվել են 80 նախակրթարաններ, որոնցից 72-ը՝ դպրոցների հենքի վրա, 8-ը՝ նախադպրոցական ուսումնական հաստատությունների: Դրանցում ընդգրկված են 2400-ից ավելի երեխաներ: Ծրագրի գործողության ամբողջ ժամանակահատվածի (մինչև 2019թ. սեպտեմբեր) համար սահմանված նպատակային ցուցանիշները նախադպրոցական հաստատությունների հիմնման մասով կատարվել են 66.7%-ով, իսկ նախադպրոցական կրթության ծրագրերում 4-6տ. երեխաների ընդգրկվածության աճի մասով՝ արդեն իսկ գերակատարվել են:

Մինչև ծրագրի ավարտը (2019թ. սեպտեմբեր) ՀՀ մարզերում և Երևան քաղաքում նախատեսվում է ստեղծել ևս 45-50 նախակրթարաններ, որտեղ կընդգրկվեն շուրջ 1000 նախադպրոցական տարիքի երեխաներ: Ծրագրի շրջանակներում կվերապատրաստվեն մոտ 100 դաստիարակներ:

Այսպես, միայն 2018թ. ընթացքում իրականացման համար ԿԾԿ ԾԻԳ են ներկայացվել ընդհանուր առմամբ 26 միկրոծրագրերի հայտեր Երևանից, Վայոց Ձորի, Լոռու, Արմավիրի, Գեղարքունիքի մարզերից, որոնցից, սահմանված ընթացակարգերով և չափանիշների հիման վրա կատարված գնահատումներից ելնելով, ընտրվել են 21-ը: Ըստ այդմ, 2018թ. նախատեսվում է միկրոծրագրեր իրականացնել Երևանի 11, Լոռու մարզի 5, Վայոց Ձորի մարզի 4, Գեղարքունիքի 1 կրթական հաստատություններում:

Ընդհանուր առմամբ, ծրագրի արդյունքում (2015-2019թթ.) ակնկալվում է հիմնել մոտ 130 նախակրթարան՝ որոնցում կընդգրկվեն շուրջ 3500 երեխաներ և մոտ 285 վերապատրաստված դաստիարակներ: Այս արդյունքային ցուցանիշները ավելին են, քան ծրագրի Ղեկավար ձեռնարկով ենթաբաղադրիչ 1.1-ի համար ակնկալվող արդյունքները: Հիմնվող նախակրթարանները թիվը կլինի նախատեսվածից 10-ով ավելի, իսկ դրանցում ընդգրկվելիք երեխաների թիվը՝ նախատեսվածից 1100-ով ավելի:
Ենթաբաղադրիչի շրջանակներում ստացված արդյունքների օբյեկտիվ ցուցիչ է սահմանված հիմնվող

30 «Կրթության բարելավում» ծրագիր, Գործառնական ձեռնարկ (նոր խմբագրությամբ), 2017թ. հունիս, էջ 25: Գործառնական ձեռնարկը հաստատվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017թ. հունիսի 2-ի N 649-Ա/2 հրամանով:

նախակրթարաններ հաճախող երեխաների՝ դպրոցին պատրաստվածության մակարդակի բարելավումը: Նշված արդյունքի իրագործման աստիճանը գնահատելու համար նախատեսված է պարբերաբար իրականացնել ընտրանքային հետազոտություններ, որոնց հիմնական խնդիրը հետևյալն է՝ ծրագրի շրջանակներում հիմնված նախակրթարանների հաճախող և չհաճախող երեխաներից կազմված երկու տարբեր ընտրանքներ (համապատասխանաբար՝ մասնակից և ստուգիչ խմբեր), և պարզել, թե արդյոք այդ խմբերի միջև ՎԶԳ գնահատականները տարբերվում են: Ըստ այդմ, ենթաբաղադրիչ 1.1-ի արդյունքների օբյեկտիվ ցուցիչի վերջնական թիրախը հետևյալն է՝ մասնակից խմբում ՎԶԳ միջին գնահատականը պետք է ավելի բարձր լինի, քան ստուգիչ խմբում, ընդ որում՝ այդ տարբերությունը պետք է լինի վիճակագրորեն նշանակալի: Վերջնական թիրախի կենսագործման ժամկետ է սահմանված 2019թ. երրորդ եռամսյակը:

Նշված հետազոտությունների իրականացման պայմանագրերը կնքվել են «Բեյքեր Թիլի Արմենիա» կազմակերպության հետ: ԿԲԾ շրջանակներում կատարված առաջին միջանկյալ հետազոտություն ամփոփում է ենթաբաղադրիչի 2016թ. արդյունքները: Ըստ այդմ, մասնակից խմբում ուսումնական տարվա վերջում ՎԶԳ գնահատականը 18 տոկոսով բարձր է ստացվել՝ ուսումնական տարվա սկզբի համեմատությամբ: Մինչդեռ ստուգիչ խմբում այս տարբերությունը կազմել է ընդամենը 4 տոկոս: Ընդ որում, ՎԶԳ գնահատականի բարելավման գենդերային առանձնահատկություններ չեն արձանագրվել[31]: 2017թ. արդյունքներով կատարված հետազոտությունը մասնակից և ստուգիչ խմբերի միջև ավելի զգալի տարբերություն է արձանագրել: Այսպես, մասնակից խմբում ուսումնական տարվա վերջում ստացված ՎԶԳ գնահատականը 21.5 տոկոսով բարձր է տարեսկզբի գնահատականից, իսկ ստուգիչ խմբում այս տարբերությունը կազմում է 9.15%[32]: Ավելին, այս անգամ ՎԶԳ գնահատականի բարելավումներում գենդերային որոշ առանձնահատկություններ են գրանցվել: Մասնակից խմբում տղաների ՎԶԳ գնահատականի բարելավումը կազմել է 11.9%, իսկ աղջիկների մոտ՝ 9.6%: Ստուգիչ խմբում այս ցուցանիշը կազմել է համապատասխանաբար 6.3% և 2.8%:

Ենթաբաղադրիչ 1.2 Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը

ՀՀ հանրակրթության ոլորտի վերջին տասնամյակի բարեփոխումների ռազմավարության կարևոր բաղադրիչներից մեկը հանդիսացավ ավագ դպրոցի կազմավորումը: Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիրը ՀՀ կառավարությունն ընդունեց 2008թ.: Համակարգի կազմավորման հիմնական նպատակը սովորողների համար նախընտրելի հոսքային ուղղության ընտրության հնարավորություն ապահովելն ու դպրոցի և մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև կապի խթանումն էր: Սկզբնապես նախատեսվում էր ստեղծել շուրջ 150 ավագ դպրոց[33], ավելի ուշ այս մոտեցումը վերանայվեց և որոշվեց հիմնել 109 ավագ դպրոց՝ հիմնականում քաղաքային համայնքներում:

2008-2009թթ. հանրապետության 10 հանրակրթական դպրոցներում ներդրվեցին ավագ դպրոցի փորձնական ծրագրերը, դրանց արդյունքները հաշվի առնելով 2009-2010թթ. ստեղծվեց կամ վերակազմավորվեց 38 ավագ դպրոց, 2010-2011թթ.՝ 43-ը, 2011-2012թթ.՝ 17-ը, ևս 1 ավագ դպրոց կազմավորվեց 2013-ին:

Ավագ դպրոցների կազմավորման առաջին իսկ տարիներից ի հայտ եկան լրջագույն խնդիրներ, որոնք կապված էին հանրակրթության համակարգում արմատական կառուցվածքային փոփոխություններով պայմանավորված սոցիալ-հոգեբանական, տնտեսական բնույթի ռիսկերի ծագմամբ, կրթական համակարգի այս բաղադրիչի նկատմամբ ոչ բավարար հանրային վստահության հետ, ավագ դպրոցների առաքելության և դրանց վերապահված գործառույթների պատշաճ կենսագործման համար անհրաժեշտ ռեսուրսների սակավությամբ և մի շարք այլ պատճառներով: Այս մարտահրավերների հաղթահարմանը միտված էին ՀԲ Կրթության որակ և համապատասխանության առաջին և երկրորդ վարկային ծրագրերի շրջանակներում ավագ դպրոցի ինստիտուցիոնալ հզորացմանն ուղղված միջոցառումները:

Դրանց շրջանակներում ավագ դպրոցներում ստեղծվել են ռեսուրս-կենտրոններ, որոնք համալրվել են նորագույն համակարգիչներով, կահույքով, էլեկտրոնային գրատախտակներով, կազմակերպվել է ավագ դպրոցների ուսուցիչների վերապատրաստում: Գրադարանների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշակվել է և ներդրվել գրադարանավարության համակարգչային ծրագիր: Իրականացվել է գրադարանավարների վերապատրաստում:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս միջոցառումները ապահովվել են վարկային ծրագրերով նախատեսված արդյունքները[34]: Ավագ դպրոցների սովորողները բավականին ակտիվորեն օգտվում են ռեսուրս-կենտրոններից, աշակերտները և ուսուցիչները բարձր են գնահատում դրանց դերը ավագ դպրոցում մատուցվող կրթական ծառայությունների արդյունավետության բարձրացման առումով: Մյուս կողմից, ավագ դպրոցում դեռևս շատ են չլուծված խնդիրները: Դրանցից են ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշման դժվարությունները, կրթական ծրագրերի անհամապատասխանությունը կրթության հաջորդ մակարդակի կամ աշխատաշուկայի պահանջներին, ավագ դպրոցների ենթակառուցվածքային թերզարգացվածությունը,

31 Բեյքեր Թիլի Արմենիա, Նախադպրոցական կրթական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի և դրա վրա ազդող գործոնների 2016թ. հետազոտության արդյունքներ:

32 Բեյքեր Թիլի Արմենիա, Նախադպրոցական կրթական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի և դրա վրա ազդող գործոնների 2017թ. հետազոտության արդյունքներ:

33 ՀՀ կառավարության 2008-2012թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը:

34 Վերջնական հաշվետվություն: «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի արդյունքների վերջնական գնահատման հետազոտություն: Ի-Վի Քոնսալթինգ, Երևան, 2015. - էջ 58:

ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ գույքի, սարքավորումների և ուսումնաօժանդակ նյութերի սակավությունը, հանրության շրջանում ավագ դպրոցների ցածր վարկանիշը:

Նշված խնդիրների մի մասի լուծմանն է միտված Կրթության բարելավման ծրագրի ենթաբաղադրիչ 1.2-ը:

Ենթաբաղադրիչի հիմնական ***նպատակն է՝*** բարձրացնել կրթության որակը և համապատասխանությունը ավագ դպրոցների համակարգում, իրականացնել սահմանված չափանիշներով ընտրված ավագ դպրոցների[35] կարողությունների հզորացում:

Ենթաբաղադրիչի հիմնական խնդիրներն են.

- սահմանված չափանիշներով ընտրված ավագ դպրոցների հիմնանորոգում,
- ավագ դպրոցներում բնագիտական առարկաների գծով՝ ժամանակակից ռեսուրսներով և կահավորված լաբորատորիաների հիմնում,
- միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի կրթություն իրականացնող դպրոցներին և քոլեջներին լաբորատոր սարքավորումների և անհրաժեշտ կահույքի տրամադրում,
- ծրագրի շրջանակներում հիմնանորոգված, ինչպես նաև Հայաստանում գործող մյուս ավագ դպրոցներում սովորողների հաճախումների բարելավմանը և առաջընթացին նպաստող հետազոտությունների իրականացում:
- ենթաբաղադրիչի գործողությունների մշտադիտարկում և գնահատում:

Ենթաբաղադրիչի շրջանակներում իրականացվող հիմնական գործողություններն են.

- ընտրված ավագ դպրոցներում հիմնանորոգման աշխատանքների իրականացում,
- ավագ դպրոցները բնագիտական առարկաների գծով ժամանակակից ռեսուրսներով կահավորված լաբորատորիաներով, իսկ միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի կրթություն իրականացնող դպրոցներին և քոլեջներին՝ լաբորատոր սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով ապահովում:

Ակնկալվող արդյունքները

ՀՀ կառավարության և ՀԲ մինչև կնքված վարկային պայմանագրի համաձայն, ենթաբաղադրիչ 1.2-ի համար ի սկզբանե ակնկալվել է ստանալ հետևյալ արդյունքները.

1. Վերանորոգված 17 ավագ դպրոցներ, համաձայն ՀՀ շինարարական և անվտանգության չափանիշների:
2. Նորագույն նյութատեխնիկական բազայով և կրթական ռեսուրսներով համալրված 107 ավագ դպրոցների ցանց:
3. Ավագ դպրոցներում սովորողների ընդգրկվածության աճ:

Արդյունքների կատարողականը

Ենթաբաղադրիչի շրջանակներում 2015թ.-ից Մեծամոր, Արարատ, Մարտունի, Հրազդան և Նոյեմբերյան քաղաքների՝ ընդհանուր թվով 5 ավագ դպրոցներում մեկնարկել են հիմնանորոգման աշխատանքները: 2018թ. մայիսի դրությամբ 5 դպրոցների հիմնանորոգման աշխատանքները կատարված են 86%-ով և նախատեսվում է, որ 2018թ. աշնանը դրանք բոլորը շահագործման կհանձնվեն:

Աղյուսակ 3.2-ում ներկայացված են ենթաբաղադրիչի շրջանակներում ակնկալվող արդյունքներից առաջինի վերջնական և միջանկյալ թիրախները:

35 Սկզբնապես ծրագրի շրջանակներում նախատեսվում էր ֆինանսավորել 17-20 ավագ դպրոցների կարողությունների բարելավման միջոցառումները, վարկային պայմանագրում որպես վերջնական թիրախ սահմանված է 17-ը, սակայն հետագայում հիմնանորոգման ենթակա դպրոցների թիվը կրճատվեց մինչև 12-ը:

Աղյուսակ 3.2. Վարկային պայմանագրով սահմանված ենթաբաղադրիչ 1.2-ի թիրախները (նախատեսվող արդյունք #1)

Ցուցիչի անվանումը	**Միջանկյալ թիրախները (կուտակային արժեքներ)**				**Վերջնական թիրախ**
	1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի	4-րդ տարի	
Վերանորոգված ավագ դպրոցներ, համաձայն ՀՀ շինարարական և անվտանգության չափանիշների	0	5	8	12	17

Վարկային ծրագրի պայմանագրով ենթաբաղադրիչ 1.2-ի համար սահմանված միջանկյալ թիրախները չեն իրագործվել: Այսպես, մինչև 2017թ. վերջին եռամսյակում պետք է արդեն իսկ շահագործման հանձնվեին հիմնանորոգված 8 ավագ դպրոցներ, իսկ մինչև 2018թ. վերջին եռամսյակ՝ ևս 4-ը: Մինչդեռ 2018թ. մայիսի դրությամբ ենթաբաղադրիչի շրջանակներում հիմնանորոգված որևէ ավագ դպրոց դեռ շահագործման չի հանձնվել:

2016թ. ընթացքում մշակվել են 12 ավագ դպրոցների հիմնանորոգման ինժեներական և ճարտարապետական նախագծերը, որոնք 2017թ. ընթացքում վերանայվել-ճշգրտվել են և բերվել են վերջնական տեսքի: Դրանցից երկրորդ փուլով կիրականացվեն 6-7 նախագծերը, որոնց ընտրությունը վերապահված է ՀՀ կառավարությանը, իսկ մրցութային գործընթացները նախատեսվում է սկսել 2018թ. ամռան ամիսների ընթացքում:

Ենթաբաղադրիչ 1.2-ի շրջանակներում ակնկալվող հաջորդ արդյունքը նորագույն նյութատեխնիկական բազայով և կրթական ռեսուրսներով համալրված 107 ավագ դպրոցների ցանցի ստեղծումն է (աղյուսակ 3.3): Ծրագրով նախատեսվում է բոլոր ավագ դպրոցներում հիմնել բնագիտական առարկաների (ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն և կենսաբանություն) լաբորատորիաներ: Ավագ դպրոցում ուսուցումը (հատկապես հոսքային ուսուցումը) ավելի արդյունավետ կազմակերպելու, կրթությունը գործնական գիտելիքներով զինելու, ինչպես նաև դպրոցներին լաբորատոր սարքավորումների տրամադրումը գերազանց միջոց է այն սովորողների համար, որոնք ուղղորդման, փորձի, գիտելիքների հարստացման կարիք ունեն:

Աղյուսակ 3.3. Վարկային պայմանագրով սահմանված ենթաբաղադրիչ 1.2-ի թիրախները (նախատեսվող արդյունք #2)

Ցուցիչի անվանումը	**Միջանկյալ թիրախները (կուտակային արժեքներ)**				**Վերջնական թիրախ**
	1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի	4-րդ տարի	
Նորագույն նյութատեխ-նիկական բազայով և կրթական ռեսուրսներով համալրված ավագ դպրոցների ցանցի ստեղծում	0	15	40	60	107

Վարկային պայմանագրով նախատեսված է ծրագրի գործողության երկրորդ տարում նորագույն նյութատեխնիկական բազայով և կրթական ռեսուրսներով համալրել 15 ավագ դպրոց, առաջին երեք տարիների ընթացքում դրանց թիվը հասցնել 40-ի, 4-րդ տարում ավելացնել ևս 20-ը, իսկ վերջնական թիրախը 107 ավագ դպրոցների ռեսուրսային համալրումն է:

Այս ուղղությամբ փաստացի կատարված աշխատանքները պլանավորվածից զգալիորեն հետ են մնում: Ենթաբաղադրիչի գործողության առաջին տարիների ընթացքում (ընդհուպ մինչև 2016թ.) պարզապես մշակվել է գնման ենթակա լաբորատոր սարքավորումների համակազմը՝ ներառյալ դրանց տեխնիկական հատկորոշիչները, մեկ լաբորատորիայի համար նախատեսված սարքավորումների քանակը, ինչպես նաև լաբորատորիաների կահավորման մոդելները (համապատասխան լաբորատորիաները գործարկելու նպատակով պահանջվող կահույք և հարմարանքներ): Իսկ 2017թ. ընթացքում մշակվել և հաստատվել է լաբորատոր սարքավորումների գնման մրցութային փաթեթը: Սակայն 2017 և 2018 թվականների ՀՀ պետական բյուջեներում համապատասխան միջոցներ չնախատեսելու հանգամանքով պայմանավորված գնումների կազմակերպման և ֆինանսավորման գործընթացը հետաձգվել է և նախատեսվում է իրականացնել ավելի ուշ:

Մեր մոտեցմամբ, սույն արդյունքի միջանկյալ թիրախների իրագործման զրոյական մակարդակը քիչ հավանական է դարձնում վերջնական արդյունքների իրականացումը: Առավել հավանական է դիտվում հնարավոր հաջորդ վարկային ծրագրերի շրջանակներում այս թիրախի իրագործումը տեղափոխելը:

Ծրագրի ենթաբաղադրիչ 1.2-ով նախատեսված վերջին արդյունքը ավագ դպրոցում սովորողների ընդգրկվածության աճն է: Այս արդյունքի համար վարկային պայմանագրով սահմանված միջանկյալ և վերջնական թիրախները

կոնկրետ թվային արտահայտություն չունեն: Փոխարենը նախատեսված էր տարեկան պարբերականությամբ կատարել հետազոտություններ՝ պարզելու համար, թե արդյո՞ք ծրագրի շրջանակներում աջակցություն ստացող ավագ դպրոցներում աշակերտների հաճախելիության մակարդակը նշանակալիորեն տարբերվում է մյուս ավագ դպրոցներում հաճախելիությունից:

Այս արդյունքի իրագործումը ծրագրի գործարկման առաջին երկու տարիների ընթացքում պարբերաբար հետաձգվում էր, միայն 2017-ին ընտրվեց այն ընկերությունը, որը պետք է կատարեր հետազոտությունը, սակայն թե 2017, և թե 2018թ. պետական բյուջեով համապատասխան միջոցներ չնախատեսելու հանգամանքով պայմանավորված նախատեսվող հետազոտությունները չիրականացվեցին:

Մյուս կողմից, այս իրավիճակը անտրամաբանական չի կարելի համարել, հատկապես եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ենթաբաղադրիչի թե առաջին և թե երկրորդ արդյունքների միջանկյալ թիրախները չեն իրագործվել: Այսինքն՝ եթե նախատեսված թվով ավագ դպրոցներ չեն հիմնանորոգվել և վերազինվել, ապա բնականաբար իմաստ չունի դրանցում հաճախելիության հետազոտություն կատարել: Ի վերջո, հաճախելիության որակական փոփոխությունները ակնկալվում էր արձանագրել հենց ավագ դպրոցների վերանորոգման և վերազինման արդյունքում:

Ըստ այդմ, ենթաբաղադրիչ 1.2-ի արդյունք #3-ը մնում է անբացահայտ:

Ենթաբաղադրիչ 1.3 Կրթության համակարգում տվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում

Արդի իրողությունների պայմաններում կրթության արդյունավետությունն ու նպատակայնությունը մեծապես պայմանավորված են կրթական համակարգում տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաների կիրառման ինտենսիվությամբ, ՏՀՏ հենքի վրա կրթական գործընթացների կազմակերպմամբ, սովորողների և ուսուցիչների ՏՀՏ օգտագործման կարողությունների զարգացմամբ: Այս ուղղությունը ՀԲ կրթության ոլորտում իրականացված վարկային ծրագրերի կարևոր ենթաբաղադրիչներից է հանդիսացել: Այսպես, Կրթության որակ և համապատասխանություն առաջին վարկային ծրագրի կարևոր արդյունքներից է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) ստեղծումը, որը պատասխանատու է Հայաստանում կրթության բնագավառում իրականացվող ՏՀՏ քաղաքականության, ծրագրերի համար: ԿՈՀ երկրորդ վարկային ծրագրի կարևոր թիրախներից մեկը մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծումն ու ներդրումն էր: Այս համակարգը միտված է կրթական հաստատություններից համադրելի և պարբերական տվյալների ստացմանը, որոնք կարող են օգտագործվել ինչպես ՀՀ ԿԳՆ, այնպես էլ կրթական հաստատությունների կողմից՝ կրթական ծառայությունների մատուցման արդյունքների վերլուծության, մշտադիտարկման, գնահատման և պլանավորման գործընթացներում: Ի հավելումն նշվածի ԿՈՀ երկրորդ վարկային ծրագրի իրագործման արդյունքում Հայաստանի բոլոր դպրոցները համալրվել են համակարգչային սարքավորումներով և ծրագրերով, 1,420 դպրոցներ ընդգրկվել են դպրոցական ցանցի մեջ և միացվել Համացանցին, Հայաստանի բոլոր դպրոցներից մոտ 1,400 ներկայացուցիչներ (դպրոցի տնօրեններ, ուսուցիչներ, գրադարանավարներ) վերապատրաստվել են դպրոցում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ:

Նախորդ երկու վարկային ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքների շարունակականության ապահովման, կրթության ոլորտում ՏՀՏ օգտագործման խորացման, ոլորտի տեղեկատվական ենթահամակարգերի ինստիտուցիոնալ հզորացման խնդիրների թիրախավորմամբ էլ «Կրթության բարելավում» վարկային ծրագրում ներառվեց ենթաբաղադրիչ 1.3-ը: Ըստ էության, դրա առանցքում ԿՏԱԿ ինստիտուցիոնալ հզորացումն է:

Ենթաբաղադրիչ 1.3-ի ***նպատակներն են.***

- բարձրացնել կրթական համակարգում հաղորդակցության արդյունավետությունը ՏՀՏ-ի միջոցով,
- աջակցել սովորողների գիտելիքների ձեռքբերումների մշտադիտարկմանը և գնահատմանը:

Ենթաբաղադրիչ 1.3-ի ***խնդիրներն են.***

- աջակցել ԿՏԱԿ-ի հզորացմանը՝ որպես կրթության վիճակագրության կենտրոն հանրակրթության, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության համար,
- բարելավել ԿՏԱԿ-ի կարողությունները՝ Հայաստանի կրթական ցանցի տնօրինման արդյունավետության բարձրացման նպատակով,
- բարձրացնել ԿՏԱԿ-ի դերը՝ հզորացնելով նրա կարողությունները կրթության ոլորտում իրականացնելու ՏՀՏ մոնիտորինգ և գնահատում,
- ՏՀՏ գործիքների օգտագործման ոլորտում թիրախային խմբերի (ուսուցիչներ, վարչական կազմ) հմտությունների բարելավում՝ ներառյալ էլեկտրոնային նյութերի օգտագործումն ու գոյություն ունեցող

տեղեկատվական համակարգերի կիրառումը,

- բարձրացնել ԿՏԱԿ-ի դերը որպես տեխնիկական աջակցություն մատուցող կենտրոն,
- բարելավել ԿՏԱԿ-ի կարողությունները՝ Հայաստանի կրթական ցանցի տնօրինման արդյունավետության բարձրացման նպատակով:

Ենթաբաղադրիչ 1.3-ի շրջանակներում իրականացվող ***հիմնական գործողություններն են.***

- ԿՏԱԿ-ի գրասենյակային տարածքի վերանորոգում, կարողությունների հզորացում՝ ներառյալ տեխնիկական վերազինումն ու նոր աշխատակազմի աշխատանքային պայմանների ստեղծումը:
- Հայաստանի կրթական համակարգի բոլոր մակարդակներում ՏՀՏ-ի կիրառման նպատակով համակարգչային սարքավորումների և ծրագրերի ձեռքբերում:
- Դպրոցներում սարքավորումների և ծրագրային ապահովման պահպանման նպատակով տեխնիկական աջակցության մեխանիզմի հիմնում:
- ԿՏԱԿ-ի աշխատակազմի վերապատրաստում կառավարման, պլանավորման, մշտադիտարկման և գնահատմանուղղությամբ:
- ԿՏԱԿ-ի համար կրթության բնագավառում ՏՀՏ–ի ռազմավարության մշակում:
- Դպրոցների, ուսումնարանների, համալսարանների և վերապատրաստող հաստատությունների ներկայացուցիչների համար վերապատրաստումների իրականացում ուղղված ուսուցման մեջ ՏՀՏ-ի ներդրմանը:
- Կրթական հաստատությունների ներկայացուցիչների վերապատրաստում ՏՀՏ օգտագործման, ներառյալ՝ էլեկտրոնային նյութերի կիրառման ուղղությամբ:

Ակնկալվող արդյունքները

Ենթաբաղադրիչ 1.3-ի շրջանակներում ծրագրի ավարտին (2019թ.) ակնկալվող արդյունքներն են՝

1. Անխափան գործող Դպրոցների ինտերնետային ցանց (Հայաստանի կրթական ցանց):
2. Անխափան գործող կրթության կառավարման տեղեկատվական համակարգեր:
3. Կայուն հիմքերի վրա դրված տեխսպասարկման և պահպանման կառուցվածք դպրոցների տեխնիկական և ծրագրային ապահովման համար:
4. Արդիական ՏՀՏ-ների կիրառման վրա հիմնված կրթական ռազմավարություն, որն ուղղորդում է այդ ոլորտի հետագա գործունեությունը:

Արդյունքների կատարողականը

Ենթաբաղադրիչ 1.3-ի շրջանակներում 2017թ. ընթացքում ԿՏԱԿ ՊՈԱԿ-ի հետ կնքված պայմանագրի շրջանակներում ավարտին են հասցվել նախկինում մշակված մասնագիտական և հանրակրթական կառավարման տեղեկատվական համակարգերի՝ մեկ միասնական համակարգի մեջ ինտեգրման աշխատանքները: Այժմ գործում է կրթության կառավարման տեղեկատվական մեկ միասնական համակարգ: ԿՏԱԿ-ը, ՀՀ կառավարության հետ համաձայնեցված ժամանակացույցով, իրականացնում է համակարգում անհրաժեշտ տվյալների մուտքագրման աշխատանքները:

Ենթաբաղադրիչի շրջանակներում ակնկալվող արդյունքներից երրորդի՝ դպրոցների տեխնիկական և ծրագրային ապահովման համար կայուն հիմքերի վրա դրված տեխսպասարկման և ծրագրային ապահովման կառուցվածքի (համակարգի) ձևավորման միջանկյալ թիրախները դեռևս չեն իրագործվել: Այսպես, վարկային պայմանագրով սահմանված ժամանակացույցով նախատեսված է երկրորդ տարում նախագծել համակարգը, երրորդ տարում՝ փորձարկել, իսկ չորրորդ տարում՝ այն կիրառել ՀՀ ողջ տարածքում (աղյուսակ 3.4):

Աղյուսակ 3.4. Վարկային պայմանագրով սահմանված ենթաբաղադրիչ 1.3-ի թիրախները (նախատեսվող արդյունք #3)

Ցուցիչի անվանումը	**Միջանկյալ թիրախները (կուտակային արժեքներ)**				**Վերջնական թիրախ**
	1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի	4-րդ տարի	
Դպրոցների տեխնիկական և ծրագրային ապահովման համար կայուն հիմքերի վրա դրված տեխսպասարկման և ծրագրային ապահովման կառուցվածք (համակարգ)	-	Համակարգը նախագծված է	Համակարգը փորձարկված է	Համակարգը լրիվությամբ աշխատունակ է և գործում է ՀՀ ողջ տարածքում	Համակարգը լրիվությամբ աշխատունակ է և գործում է ՀՀ ողջ տարածքում

Ծրագրի իրականացման ներկա փուլում այս միջանկյալ թիրախները իրագործված չեն: 2016թ. մշակվել է համակարգի ծրագրային ապահովման նախագծային տարբերակը, որի լիարժեք ներդրումը հետաձգվում է, քանի որ այդ գործընթացը կապակցված է ԿՏԱԿ վերազինման հետ: Ըստ այդմ, ԿՏԱԿ շենքի նախատեսվող հիմնանորոգումից և անհրաժեշտ սարքավորումային և ծրագրային վերազինումից հետո համակարգը կներդրվի (ԿՏԱԿ շենքի հիմնանորոգումը նախատեսվում է իրականացնել 2018թ.):

2017թ.-ի ընթացքում ՏՀՏ գործիքների կիրառման արդյունավետության բարձրացման նպատակով «Կրթության համակարգում տվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում» ենթաբաղադրիչի աշխատանքների համատեքստում իրականացվել են նաև ՏՀՏ վերապատրաստումների կարիքների գնահատման, մոդուլների մշակման և վերապատրաստողների վերապատրաստման աշխատանքներ: Մասնավորապես, մշակվել են ՏՀՏ վերապատրաստման 6 մոդուլներ, որոնք նախատեսված են դպրոցների մանկավարժական և վարչական աշխատակազմի՝ ՏՀՏ ուղղությամբ շարունակական վերապատրաստումներ իրականացնելու համար: Մոդուլները մշակվել են այս ոլորտում միջազգային մեծ հեղինակություն վայելող կանադական ընկերության կողմից՝ հաշիվ առնելով տեղի առանձնահատկությունները: Մշակված մոդուլների միջոցով երկու խմբով 5-օրյա աշխատակարգով իրականացվել է Երևանից և մարզերից ընտրված 30 վերապատրաստողների վերապատրաստում, որոնք հաջողությամբ հանձնել են ավարտական թեստը և ստացել համապատասխան հավաստագրերը: Հետագայում մշակված մոդուլների հիման վրա նախատեսվում է վերապատրաստել Երևանի և մարզերի դպրոցների շուրջ 4000 ուսուցիչների և վարչական աշխատողների:

Նշենք, որ կրթության կառավարման տեղեկատվական ինտեգրացված համակարգերի օգտագործման ուղղությամբ անհրաժեշտ կարողությունների ձեռքբերման նպատակով վերապատրաստում անցած դպրոցների ուսուցիչների և վարչական աշխատողների թվաքանակը ենթաբաղադրիչ 1.3-ի միջանկյալ արդյունքային ցուցիչներից է: Դրա վերջնական թիրախը դպրոցների 4000 ուսուցիչների և վարչական աշխատողների վերապատրաստումն է, իսկ միջանկյալ թիրախները սահմանված են (աղյուսակ 3.5) ծրագրի գործողության երկրորդից չորրորդ տարիների համար:

Աղյուսակ 3.5. Վարկային պայմանագրով սահմանված ենթաբաղադրիչ 1.3-ի թիրախները (միջանկյալ արդյունքային ցուցիչ՝ կրթության կառավարման տեղեկատվական ինտեգրացված համակարգերի օգտագործման ուղղությամբ անհրաժեշտ կարողությունների ձեռքբերման նպատակով վերապատրաստում անցած դպրոցների ուսուցիչների և վարչական աշխատողների թվաքանակը)

Ցուցիչի անվանումը	**Միջանկյալ թիրախները (կուտակային արժեքներ)**				**Վերջնական թիրախ**
	1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի	4-րդ տարի	
Վերապատրաստված աշխատողների թվաքանակը	0	1500	2500	3500	4000

2017թ. վերջին եռամսյակի դրությամբ առնվազն 2500 ուսուցիչ և վարչական աշխատող արդեն իսկ պետք է վերապատրաստված լիներ, մինչդեռ, ինչպես վերևում նշվեց, փաստացի հաջողվել է իրականացնել միայն թվով 30 վերապատրաստողների վերապատրաստումը: Այսինքն, ենթաբաղադրիչ 1.3-ի այս արդյունքային ցուցիչի միջանկյալ թիրախային մակարդակներից և ոչ մեկը չի ապահովվել:

Ենթաբաղադրիչ 1.4 Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով

Կայուն մարդկային զարգացման հիմնադրույթների կենսագործման արդի ժամանակաշրջանում կրթությունն ունի սկզբունքորեն նոր դեր և նշանակություն: Մարդու զարգացումը այլևս նպատակ է, և ոչ թե միջոց, իսկ այդ նպատակի իրագործումը անհնար է պատկերացնել առանց կրթության և մասնավորապես՝ արդի մարտահրավերներին համահունչ կրթական հայեցակարգերի և մոդելային կառուցակարգերի ներդրման: Այս համատեքստում կրթական

համակարգի կատարելագործումը, կրթության բովանդակության վերանայումն ու արդի զարգացումներին համապատասխանեցումը այլընտրանք չունեն:

Կրթության հայեցակարգային դրույթներն ամփոփ արտացոլում են գտնում պետական կրթակարգում և չափորոշիչներում, դրանց համապատասխան մշակվում են արդեն կրթական առանձին մակարդակների, առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը: Եվ այս ամբողջ կառուցվածքը, կազմելով կրթության բովանդակության առանցքը, պատասխանատու է դրա մրցունակության, նպատակայնության, ճկունության և արտաքին միջավայրի փոփոխություններին համարժեքորեն արձագանքելու կարողության համար: Այս ամենը, ըստ էության, պայմանավորում է կրթական համակարգի արդյունավետությունը, և պատահական չէ, որ կրթության բովանդակության բարելավումը եղել է ՀՀ կառավարության ռազմավարական գերակայությունների հիմքում, որոնց իրագործմանն նկատելի օժանդակություն է ցուցաբերվել նաև կրթության ոլորտում իրականացված և դեռևս ընթացքի մեջ գտնվող ՀԲ վարկային ծրագրերի շրջանակներում:

Այսպես, 2004թ. ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվել է Հանրակրթության պետական կրթակարգը[36], ինչպես նաև հաստատվել է Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը[37]: Կրթության բովանդակությունը սահմանող այս փաստաթղթերը մշակվել են «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում: 2009թ. ընդունվեց Հանրակրթության մասին ՀՀ օրենքը, որում ներառվեցին Կրթակարգի մի շարք բաժիններ և գաղափարներ, իսկ Կրթակարգում մնացին օրենքի ձևաչափով սահմանման ոչ ենթակա բաժինները, որոնք հայեցակարգային դրույթների տեսքով մնացել են Կրթակարգում և ենթակա են վերանայման: Ինչ վերաբերում է Միջնակարգ կրթության չափորոշչին, ապա դրա հիմքի վրա մշակվեց Հանրակրթության պետական չափորոշիչը, որը ՀՀ կառավարության կողմից հաստատվելով իրավական ակտի կարգավիճակ ստացավ 2010թ.-ին[38]:

«Հանրակրթության պետական չափորոշիչը» ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի՝ 1) ուսումնական բնագավառներն ու կրթության բովանդակության բաղադրիչները, 2) շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների և ուսումնական բնագավառների, 3) հենքային ուսումնական պլանը և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, 4) սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը: Ի տարբերություն նախկին պետական չափորոշչի, նոր չափորոշչի պահանջները պարտադիր են ոչ միայն ուսումնական հաստատությունների, այլև կրթական ծրագրերի համար: Միաժամանակ օրենքով սահմանված է, որ հանրակրթական հիմնական ծրագրերը ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի և դրանց համապատասխան ուսուցման կազմակերպման ձևերի, միջոցների ու մեթոդների ամբողջությունն է, որն ապահովում է հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված՝ շրջանավարտներին ներկայացվող նվազագույն որակական պահանջները՝ ըստ մակարդակների:

Նոր, միասնական պետական չափորոշչին համապատասխանեցնելու նպատակով 2011-2012 թվականներին որոշ չափով բեռնաթափվեցին հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչները և ծրագրերը, սակայն ավագ դպրոցի (10-12-րդ դասարաններ) առարկայական չափորոշիչները և ծրագրերը նույնպես վերանայման կարիք ունեն, քանի որ օրենսդրության համաձայն և մանկավարժության տեսակետից խնդիր է դրված ապահովել կրթության բովանդակության շարունակականությունը: Միաժամանակ, միայն ծանրաբեռնվածության նվազեցման միտումով կատարված հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչների վերանայումը չի լուծել կրթակարգով պահանջվող կրթության բովանդակության ներառարկայական և միջառարկայական ինտեգրման խնդիրը:

Առարկայական չափորոշիչների և ծրագրերի հիմնարար վերանայման անհրաժեշտության մասին է վկայում նաև այն փաստը, որ ներկայումս գործող, սակայն նոր սերնդի պետական չափորոշիչներին համապատասխանեցման, վերանայման ենթակա առարկայական չափորոշիչները և ծրագրերը մշակվել և ներդրվել են «Կրթության որակ և համապատասխանություն» առաջին վարկային ծրագրով 2005-2009 թվականներին:

Այսպիսով, կրթության և ի մասնավորի՝ հանրակրթության բովանդակության վերանայումն ու արդիականացումը շարունակում է կրթական համակարգի կատարելագործման գերակայություն հանդիսանալ: Արդ, Կրթության բարելավում վարկային ծրագրի «Հանրակրթության որակի բարելավում՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով» ենթաբաղադրիչը, հանդիսանալով ծրագրի կարևոր բաղկացուցիչ, ուղղված է նշված մարտահրավերների հաղթահարմանը:

Ծրագրի շրջանակներում կրթակարգի վերանայման ռազմավարական ուղղություններ են դիտվում.

- կրթակարգը նոր պետական չափորոշիչների հետ համապատասխանեցնելը,
- ժամանակակից աշակերտակենտրոն ինտերակտիվ ուսուցման մեթոդներն ընդգրկելը,
- տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաները (ՏՀՏ) դասավանդման և ուսուցման գործընթացում, որպես ժամանակակից ուսուցման գործիք կիրառելը,
- կրթակարգի պահանջների և գնահատման համակարգերի միջև կապն ապահովելը,
- ուսումնական պլանները կազմելու ընթացքում դպրոցներին առնվազն 10-15 տոկոս ընտրության հնարավորություն տալը:

36 ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 27-ի N20-Ա որոշում:
37 ՀՀ կառավարության 2004թ. հունիսի 17-ի N900 որոշում:
38 ՀՀ կառավարության 2010թ. ապրիլի 8-ի N 439-Ն որոշումը:

Ենթաբաղադրիչ 1.4-ի ***նպատակներն են.***

- բարելավել կրթության որակը կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով,
- ապահովել սովորողների գիտելիքների և հմտությունների բարելավումը համաձայն արդի պահանջների:

Նշված նպատակների հիման վրա սահմանվել են ենթաբաղադրիչ ***1.4-ի հետևյալ խնդիրները.***

- աջակցել հանրակրթական դպրոցի տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրերին համապատասխան՝ առարկայական չափորոշիչների ու ծրագրերի վերանայմանը,
- կարճատև վերապատրաստումների միջոցով ուսուցիչներին իրազեկել նոր առարկայական չափորոշիչներում և ծրագրերում կատարված փոփոխությունների մասին:

Ենթաբաղադրիչ 1.4-ի շրջանակներում իրականացման ենթակա հիմնական ***գործողություններն են՝***

- իրականացնել կարիքների գնահատման հետազոտություն կրթակարգի վերանայման ուղղությամբ,
- հանրակրթական առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման նպատակով ձևավորել աշխատանքային խումբ, որը կմշակի նոր հայեցակարգ,
- ստեղծել աշխատանքային խմբեր հանրակրթական ընդհանուր հիմնական ծրագրի առարկայական չափորոշիչների ու ծրագրերի վերանայման նպատակով,
- իրականացնել ուսուցիչների կարճատև տեղեկատվական բնույթի վերապատրաստումներ:
- կազմակերպել վերապատրաստման դասընթացներ դասագրքերի հրատարակիչների և նրանց կողմից ներկայացված հեղինակների հավանական կազմի համար:

Ակնկալվող արդյունքները

Ենթաբաղադրիչի իրագործման արդյունքում ակնկալվում է մինչև ծրագրի ավարտը ունենալ հանրակրթության նոր, միասնական պետական չափորոշչին համապատասխան վերանայված և լրամշակված առարկայական չափորոշիչներ ու ծրագրեր, ինչպես նաև՝ տեղեկացված ուսուցիչներ, որոնք տեղյակ են առարկայական չափորոշիչներում և ծրագրերում կատարված փոփոխությունների մասին:

Արդյունքների կատարողականը

Ենթաբաղադրիչ 1.4-ի միջանկյալ արդյունքային ցուցիչ է սահմանված հանրակրթության նոր, միասնական պետական չափորոշչին համապատասխան վերանայված և լրամշակված առարկայական չափորոշիչների ու ծրագրերի թիվը: Ցուցիչի համար վերջնական թիրախ է սահմանված 10-ը, իսկ միջանկյալ թիրախներն ըստ տարիների՝ 3; 6 և 8 (աղյուսակ 3.6):

Աղյուսակ 3.6. Վարկային պայմանագրով սահմանված ենթաբաղադրիչ 1.4-ի թիրախները (միջանկյալ արդյունքային ցուցիչ՝ հանրակրթության նոր, միասնական պետական չափորոշչին համապատասխան վերանայված և լրամշակված առարկայական չափորոշիչներ ու ծրագրեր)

Ցուցիչի անվանումը	**Միջանկյալ թիրախները (կուտակային արժեքներ)**				**Վերջնական թիրախ**
	1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի	4-րդ տարի	
Վերանայված և լրամշակված առարկայական չափորոշիչների ու ծրագրերի թիվը	0	3	6	8	10

Ծրագրի իրականացման 3-րդ տարվա համար սահմանված միջանկյալ թիրախը նշանակում է, որ 2017թ. վերջին եռամսյակի դրությամբ պետք է վերանայված և լրամշակված լիներ առնվազն 6 առարկայական չափորոշիչ և ծրագիր: Մինչդեռ փաստացի արդյունքները շատ ավելի համեստ են՝ 2017 թվականի ընթացքում տարվել են նախապատրաստական աշխատանքներ հանրակրթության առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման ուղղությամբ, իրականացվել են խորհրդաժողովներ, տարբեր ձևաչափով հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման տարբեր մոտեցումները, աշխատանքների կազմակերպման եղանակները և ձևերը: Քննարկումների հիման վրա որոշվել է, որ ամբողջական մոտեցման ապահովման նպատակով առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայումը անհրաժեշտ է

իրականացնել իբրև հանրակրթության պետական ծրագրի մաս: Ամփոփվել և վերջնականացվել է առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման տեխնիկական առաջադրանքը:

Այսպիսով, ակնհայտ է, որ ենթաբաղադրիչ 1.3-ի դիտարկվող արդյունքային ցուցիչի միջանկյալ թիրախները չեն իրագործվել, իսկ վերջնական թիրախի լիարժեք իրագործման հեռանկարը հստակ չէ:

Բաղադրիչ 2. Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը

ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումների կարևորագույն բաղադրիչներից մեկը բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի կատարելագործումն է: Այս ուղղությամբ ՀՀ ԿԳՆ, բարձրագույն ուսումնական հաստատությունների, հասարակական հատվածի և փորձագիտական հանրույթի ներկայացուցիչների, այլ պետական և մասնավոր կառույցների կողմից շրջանառության մեջ դրված և քննարկումների տարբեր հարթակներում ներկայացված հիմնական գաղափարները հանգում են բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցման, ուսման վարձավճարներից կախվածության թուլացման, գիտահետազոտական աշխատանքի արդյունքների առևտրայնացման, մատուցվող ծառայությունների արտաքին մրցունակության բարձրացման խնդիրների համար լուծումների առաջադրմանը: Աներկբա իրողություն է ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի բարելավման քաղաքականության արդյունքներից ողջ կրթական համակարգի արդյունավետության և կենսունակության կախվածությունը:

Բարձրագույն կրթության ֆինանսական կառավարման համակարգի բարեփոխման ուրույն նախաձեռնություն է Հայաստանում Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) ձևավորումը, որը բարձրագույն կրթության ոլորտում նորարարությունները խթանող քաղաքական մեխանիզմ է: ՆՄՀ իրականացումը մեկնարկել է «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում և միտված է խթանել բարձրագույն կրթության բարեփոխումները, նպաստել բարձրագույն կրթության համակարգում նորարարությունների և հետազոտական աշխատանքների խրախուսմանը:

ՆՄՀ գործարկման առանցքային գաղափարը բուհերին մրցակցային հիմունքներով դրամաշնորհների տրամադրումն է՝ ուղղված հետևյալ խնդիրների լուծմանը՝

- աջակցել ինչպես պետական այնպես էլ ոչ պետական բուհերին՝ մշակել և իրականացնել կրթական ծրագրերի և մանկավարժական մեթոդների բարելավմանն ուղղված նորարարական ծրագրեր;
- զարգացնել ֆինանսավորման այլ աղբյուրների ներգրավման կարողությունները,
- ստեղծել կապեր տնտեսության հետ,
- զարգացնել միջազգային համագործակցությունը,
- խթանել գիտական հետազոտությունները,
- մշակել բուհի ռազմավարական ծրագիր՝ ուսանողների ընդգրկմամբ,
- մշակել բուհերի գիտահետազոտական ենթակառուցվածքները՝ ապահովելով ժամանակակից սարքավորումների առկայությունը:

Ընդհանրապես, ՆՄՀ-ն աջակցում է բուհերի այն նորարարական ծրագրերին և գործողություններին, որոնք ուղղված են կրթության որակի, համապատասխանության և արդյունավետության բարձրացմանը: Այդ իսկ պատճառով ՆՄՀ-ի շրջանակներում աջակցություն են ստանում այն ծրագրերը, որոնք, օրինակ, նպաստում են գործատուների ներգրավմանը կրթական գործընթացներին (կրթական ծրագրերի մշակմանը մասնակցելու, ուսումնական պրակտիկայի կազմակերպման միջոցով), աշխատաշուկայի պահանջներին ծրագրերի համապատասխանեցմանը, աշխատաշուկայի ուսումնասիրության կենտրոնների զարգացմանը, ինչը ենթադրում է կարիերայի կենտրոնների ձևավորում, և այլն: Դրամաշնորհի տեսքով աջակցություն կարող են ակնկալել նաև այն ծրագրերը, որոնք միտված են բուհ-երի արդյունավետության բարձրացմանը՝ կառուցվածքային բարեփոխումների, բուհերի կառավարման և որակի ներքին ապահովման համակարգերի բարելավման, կառավարման տեղեկատվական համակարգերի ձևավորման և այլ քայլերի իրականացմամբ:

ՆՄՀ-ը խրախուսում է նաև այնպիսի ծրագրերը, որոնք հասարակության առավել լայն շրջանակներին հնարավորություն են տալիս ներգրավվել բարձրագույն կրթության համակարգում, մասնավորապես՝ ներառելով սոցիալ-տնտեսական ցածր կարգավիճակ ունեցող խմբերին, հեռահար և օժանդակ ծրագրերի ներդրմամբ և այլն: ՆՄՀ գործունեության սկիզբը դրվել է ԿՈՀ երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում՝ 10 փորձնական ծրագրերի իրականացմամբ:Կրթության բարելավման ծրագրի երկրորդ բաղադրիչը հիմնվում է այս ծրագրերի իրականացման փորձի վրա և մշակվել է դրա շարունակականության ապահովման նպատակադրումից ելնելով:

Բաղադրիչ 2-ի համար սահմանված է հետևյալ նպատակը՝ բարձրացնել բարձրագույն կրթության որակը,

համապատասխանությունը և մատչելիությունը, բարելավել և արդիականացնել կրթական և ենթակառուցվածքային կարողությունները:

Բաղադրիչ 2-ի ***հիմնական խնդիրներն են.***

- բուհերի համապատասխանության և արդիականության բարձրացման խթանումը,
- բուհերի արդյունավետության և հավասարության խթանումը,
- կապերի սերտացումը տնտեսության գերակա ոլորտներում՝ տնտեսական զարգացման նպատակով,
- նոր կրթական ծրագրերի հասանելիության բարձրացումը,
- համագործակցության խթանումը բուհերի, մասնավոր սեկտորի և հետազոտական ինստիտուտների միջև:

Նկատենք, որ 2011թ. ՀՀ կառավարության կողմից հաստատվել են ՆՄՀ հայեցակարգն ու Ղեկավար ձեռնարկը, որոնցում, ՆՄՀ խնդիրների շարքում, ի հավելումն վերը նշվածի, սահմանված է նաև բուհերի կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացումը: Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ-ի արդյունքային հաշվետվությունում սույն խնդիրը բաց է թողնված:

Ենթաբաղադրիչ 2-ի շրջանակներում իրականացվող հ***իմնական գործողություններն են.***

1. ՆՄՀ իրականացման ընթացակարգերի վերամշակում:
2. Բուհերին դրամաշնորհների տրամադրում (նախատեսված է իրականացնել հայտերի ընդունման երկու փուլ):
3. ՆՄՀ իրականացման գործընթացի մոնիթորինգ՝ ներառյալ ՆՄՀ արդյունավետության վերաբերյալ հարցումները ՆՄՀ դրամաշնորհային ծրագրեր իրականացնողների և պոտենցիալ հայտատուների շրջանում:
4. Համագործակցություն մասնավոր սեկտորի և պոտենցիալ դոնորների հետ՝ ՆՄՀ շարունակականության ապահովման նպատակով լրացուցիչ ֆինանսավորման ներգրավման համար:
5. Բուհերի վարչական և այլ համապատասխան աշխատակազմի ներկայացուցիչների համար վերապատրաստումների անցկացում՝ ծրագրերի մշակման, ղեկավարման, մշտադիտարկման և գնահատման, ինչպես նաև գնումների իրականացման ընթացակարգերի ուղղությամբ:

Ակնկալվող արդյունքները

Վարկային ծրագրի երկրորդ բաղադրիչի շրջանակներում ակնկալվող արդյունքներն են՝

- Պետական-մասնավոր համագործակցության բարելավում բարձրագույն կրթության ոլորտում՝ կոնսորցիում ծրագրերի թիվը հասցնելով 4-ի:

- Բուհերի կարողությունների բարելավում՝ ծրագրերի մշակման, մշտադիտարկման, գնահատման, գնումների ուղղությամբ վերապատրաստումների անցկացման միջոցով:

- ՆՄՀ ծրագրերի շուրջ 10 շահառու բուհեր:

Արդյունքների կատարողականը

Ծրագրի երկրորդ բաղադրիչի գործարկման 2017թ. արդյունքներով Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) շրջանակներում տասներկու դրամաշնորհառու բուհեր շարունակել են նորարարական զարգացման ծրագրերի իրականացումը: Տասներկու բուհերի թվում են հինգ կոնսորցիում ծրագրեր, այդ թվում՝ չորսը բիզնես-գործընկերների հետ համագործակցությամբ, երկու ոչ պետական բուհերի ծրագրեր, ինչպես նաև մեկ մարզային բուհի ծրագիր: Դրամաշնորհառու բուհերն են՝

1. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան,
2. Երևանի պետական բժշկական համալսարան,
3. Երևանի պետական համալսարան,
4. Հայաստանի ազգային ագրարային համալսարան,
5. ՀՀ պետական կառավարման ակադեմիա,
6. Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան,
7. Գլաձոր համալսարան,
8. Հյուսիսային համալսարան,
9. Շիրակի պետական համալսարան,

10. Երևանի պետական կոնսերվատորիա,
11. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի Հայկական պետական ինստիտուտ,
12. Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան:

Իրականացվող ծրագրերի արդյունքում բուհերը հագեցվում են արդիական լաբորատոր սարքավորումներով և տեխնիկայով, ներդնում կրթության ժամանակակից ձևեր և մեթոդներ, հնարավորություն ստանում ուսումնասիրել և փոխառնել միջազգային հաջողված փորձը, բարձրացնել հետագա զարգացման կարողությունները, ստեղծել պայմաններ այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրների գոյացման, ինչպես նաև բուհերում ստեղծվող գիտելիքի առևտրայնացման համար:

Այսպիսով, 2017թ. դրությամբ բաղադրիչի միջանկյալ արդյունքների ցուցիչների վերջնական թիրախները իրագործվել են՝

- ՆՄՀ ծրագրերի շահառու բուհերը 12-ն են (վերջնական թիրախը՝ 10),
- կոնսորցիում ծրագրերի թիվը՝ 5 (վերջնական թիրախը՝ 4):

Բաղադրիչ 3. Ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում

Կրթության բարելավման վարկային ծրագրի ընդհանուր կառավարումը, համակարգումը, իրականացումն ու մոնիթորինգը վերապահված են Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ-ին: ԿԾԿ ԾԻԳ-ը ստեղծվել է 1996թ., ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝ ՀԲ-ի կողմից ֆինանսավորված «Կրթության ֆինանսավորում և կառավարման բարեփոխումներ», «Կրթության որակ և համապատասխանություն» 1- ին և 2-րդ վարկային ծրագրերը իրականացնելու համար: Կրթության բարելավման ծրագրի շրջանակներում ԿԾԿ պարտականությունների տիրույթը ներառում է նաև ֆինանսական միջոցների կառավարումը, վճարումների, հաշվապահական հաշվառման իրականացումը, հաշվետվողականությունը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, ԿԲԾ շրջանակներում իրականացվող դրամաշնորհային ծրագրերի մոնիթորինգը:

ՀՀ կառավարության ԾԻԳ-երի գործունեության վերաբերյալ որոշման համաձայն, ՀՀ վարչապետը ԿԾԿ նշանակում է ԿԾԿ տնօրեն՝ հիմնվելով ընտրության արդյունքների վրա: ԿԾԿ տնօրենը պատասխանատու է աշխատակազմի անդամներին աշխատանքի ընդունման համար: ԿԾԿ աշխատակազմում ընդգրկվող նոր աշխատողները ընտրվում են մրցութային հիմունքներով, իսկ նախորդ ծրագրերի ընթացքում աշխատանքի ընդունված անհատ խորհրդատուների հետ պայմանագրային հարաբերությունները շարունակվում են՝ մեկ աղբյուրից անհատ խորհրդատուների ծառայությունների ձեռք բերմամբ, հիմք ընդունելով ծառայությունների շարունակելիությունը: ԿԲԾ իրականացումն ապահովելու համար ԿԾԿ ԾԻԳ աշխատակազմի համար նախատեսվել է մոտ 30 հաստիք:
Ծրագրի իրականացման արդյունավետ մոնիթորինգն և գնահատմը պահանջում է ԿԾԿ կողմից այդ աշխատանքների կազմակերպում ըստ մոնիթորինգի և գնահատման շրջանակի (ՄԳՇ), որը բաղկացած է երեք մասերից. հիմնական նպատակները, ծրագրերը, մոնիթորինգի և գնահատման առկա կարողությունները, ռեսուրսային պահանջները և իրականացվելիք գործողությունները նկարագրող բաղադրիչից, արդյունքների շրջանակից և մոնիթորինգի ու գնահատման նախագծման աղյուսակներից:

ՄԳԾ նկարագրական բաղադրիչի համաձայն, ծրագրի բոլոր բաղադրիչներն ու ենթաբաղադրիչները պետք է պատշաճ կերպով ենթարկվեն մոնիթորինգի և գնահատվեն, ինչը կապահովի ծրագրի ամբողջական մոնիթորինգն ու գնահատումը: Յուրաքանչյուր բաղադրիչի և ենթաբաղադրիչի շրջանակներում իրականացվող գործողությունները պետք է ընդգրկվեն մոնիթորինգի և գնահատման գործընթացում: Մոնիթորինգը և գնահատումը պետք է մեկնարկի ծրագրի իրականացման սկզբում և շարունակվի ծրագրի իրականացման ողջ ընթացքում, ծառայելով որպես ծրագրի իրականացման ընթացքի և արդյունքների արձանագրության գործիք:

Մոնիթորինգի և գնահատման համար կիրառվում են ԿԾԿ կողմից կազմակերպվող ստուգայցերը, շահակիցների հետ պարբերական հանդիպումները և քննարկումները, ըստ յուրաքանչյուր ենթաբաղադրիչի սահմանված արդյունքների իրագործման գնահատման ուսումնասիրություններ և հետազոտություններ, անհրաժեշտ տվյալների և տեղեկությունների վերլուծություն և այլն:

Մոնիթորինգի և գնահատման գործողությունների համար պահանջվող մարդկային ռեսուրսները ԿԾԿ-ի աշխատակազմն է, նաև՝ արտաքին գնահատում անցկացնելու համար ներգրավվող խորհրդատուները: Մոնիթորինգի և գնահատման գործողությունների իրականացումը պահանջում է սերտ համագործակցություն ծրագրի բոլոր շահակիցների և գործընկերների հետ: Մոնիթորինգի և գնահատման գործողությունների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները հաշվարկվում և ներկայացվում են ծրագրի գնումների պլանում:

3.3. Ամփոփում

Եզրակացություն #1. Կրթության բարելավում՝ վարկային ծրագրի միջանկյալ նպատակների զգալի մասը չի իրականացվել: Սահմանված գործողությունների պլանին և միջանկյալ թիրախների համապատասխան կատարվում են միայն ենթաբաղադրիչ 1.1 և բաղադրիչ 2-ով նախատեսված աշխատանքները:

Եզրակացություն #2. Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացման և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովման ենթաբաղադրիչի միջանկյալ արդյունքային ցուցանիշները գերակատարվել են: Մինչև ծրագրի գործողության վերջնաժամկետը կկատարվեն նաև վերջնական թիրախի իրագործման համար անհրաժեշտ միկրոծրագրերը: Նախատեսվում է ծրագրի արդյունքներով կյանքի կոչել ոչ թե վերջնական թիրախով սահմանված 120, այլ 130 միկրոծրագիր, որոնցում հաճախող երեխաների թիվը կլինի 3500, ինչը 1100-ով ավելին է, քան վերջնական թիրախով սահմանված մակարդակը:

Եզրակացություն #3.1. Ենթաբաղադրիչ 1.2-ի համար սահմանված միջանկյալ թիրախները իրագործված չեն: Չեն հիմնանորոգվել պլանավորված թվով ավագ դպրոցներ: Նորագույն նյութատեխնիկական բազայով և կրթական ռեսուրսներով համալրված ավագ դպրոցների ցանցի ստեղծման գործողությունները ևս զգալիորեն հետ են մնում պլանավորվածից: Ծրագրի կատարման այս փուլում ավելի քան 40 ավագ դպրոց պետք է ունենար կահավորված բնագիտական լաբորատորիաներ, սակայն փաստացի կատարվել են միայն գնման մրցութային փաթեթի կազմման աշխատանքները:

Եզրակացություն #3.2. Ավագ դպրոցների զարգացման աջակցության ենթաբաղադրիչի իրականացման կարևոր միջանկյալ արդյունքներից է ավագ դպրոցներում աշակերտների ներգրավվածության աճը: Այս թիրախի իրագործման մոնիթիրինգի նպատակով տարեկան պարբերականությամբ պետք է իրականացվեին հետազոտություններ, որոնք, սակայն, չեն կատարվել:

Եզրակացություն #3.3. Ծրագրի ենթաբաղադրիչ 1.2-ը կարելի է համարել գլխավորապես չկատարված, իսկ վերջնական թիրախների իրականացման հավանականությունը մեր գնահատմամբ գրեթե զրոյական է:

Եզրակացություն #4.1. Ենթաբաղադրիչ 1.3-ով նախատեսված միջանկյալ արդյունքները չեն կատարվել: Ծրագրի իրականացման ներկա փուլում արդեն իսկ պետք է փորձարկված լիներ դպրոցների տեխնիկական և ծրագրային ապահովման համար կայուն հիմքերի վրա դրված տեխսպասարկման և ծրագրային ապահովման համակարգը, ինչը սակայն չի կատարվել: Նախատեսված էր նաև կրթության կառավարման տեղեկատվական ինտեգրացված համակարգերի օգտագործման ուղղությամբ անհրաժեշտ կարողությունների ձեռքբերման նպատակով վերապատրաստել դպրոցների ուսուցիչների և վարչական աշխատողների: Ծրագրի կատարման ներկա փուլում պետք է վերապատրաստում անցնեին դպրոցների առնվազն 1500 աշխատողներ: Սակայն դեռևս փաստացի կատարվել է միայն 30 վերապատրաստողների վերապատրաստումը:

Եզրակացություն #4.2. Առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման ու լրամշակման մասով ևս միջանկյալ արդյունքները չեն իրագործվել: Նախատեսված էր այս փուլում վերանայել ու լրամշակել առնվազն 6 առարկայական չափորոշիչ, սակայն դեռևս հաջողվել է միայն մշակել ու վերջնական տեսքի բերել համապատասխան տեխնիկական առաջադրանքը:

Եզրակացություն #5. Նորամուծությունների մրցակցային հիմնադրամի զարգացման աջակցության բաղադրիչի շրջանակներում սահմանված միջանկյալ արդյունքները գերակատարվել են: ՆՄՀ ծրագրերի շահառու են 12 բուհեր (վերջնական թիրախը՝ 10), որոնցից 5-ը՝ կոնսորցիումային ծրագրերն են (վերջնական թիրախը՝ 4):

Եզրակացություն #6. Վարկային ծրագրով նախադպրոցական և բուհական մակարդակներում նախատեսված գործողությունների շրջանակներում ստացվելիք արդյունքների շարունակականության ապահովման, շահառու կազմակերպություններում մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ ձեռք բերված փորձը կրթական համապատասխան մակարդակի մյուս հաստատությունների վրա տարածման, կրթության ոլորտի զարգացման խնդիրների լուծմանը նպաստող կայուն վերջնարդյունքների ստացման մասով առկա են որոշակի ռիսկեր:

Եզրակացություն #7. Հանրակրթության երրորդ մակարդակը շարունակում է մնալ խնդրահարույց, դրա

ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը հիմնախնդիրները, որոնց մի մասի լուծման համար թիրախներ էին սահմանվել ԿԲԾ շրջանակներում, շարունակում են մնալ օրակարգային և Հայաստանի կրթական համակարգի ինստիտուցիոնալ ամբողջականության և բարեփոխումների արդյունավետության լուրջ սպառնալիք են հանդիսանում:

Եզրակացություն #8. ԿԲԾ շրջանակներում ստացված արդյունքների համակողմանի գնահատումը պահանջում է ավելի խորը և ընդգրկուն հետազոտության իրականացում՝ վարկային ծրագրերի արդյունավետության վերլուծության արդի մեթոդների կիրառմամբ և Հայաստանի սոցիալ-տնտեսական կայուն զարգացման գերակայություններից բխող վերջնարդյունքների ստացման նախադրյալների ստեղծման վրա ծրագրով նախատեսված գործողությունների ազդեցության գնահատմամբ:

4. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

4.1. Ներածություն

«Կրթության բարելավում» ծրագրի իրագործման վարկային պայմանագիրը ՀՀ կառավարության (ի դեմս՝ ֆինանսների նախարարության) և Համաշխարհային բանկի միջև կնքվել է 2013թ. մայիսին, իսկ բուն գործողությունների իրականացման մեկնարկը տրվել է 2015թ.-ից: Ծրագրի տևողությունը 5 տարի է, այն նախատեսվում է ավարտել 2019թ.: Ֆինանսավորման նախատեսվող ծավալը 37.5 մլն ԱՄՆ դոլար է, որի 20%-ը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ:

Մեր կողմից կատարվել է վարկային ծրագրի գնումների պլանով նախատեսված և փաստացի կատարված գործողությունների, դրանց մրցութային պայմանների ու կնքված պայմանագրերի ուսումնասիրություն, որի հիման վրա հնարավոր է դիտվում պատկերացում կազմել ինչպես գնումների պլանի կատարողականի, այնպես էլ ընդհանուր ծրագրի կատարման մակարդակի և սահմանված թիրախների իրագործելիության հավանականության մասին:

Ծրագրի շրջանակներում իրականացված գնումների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր են հանդիսացել Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ ինտերնետային կայքը, Համաշխարհային բանկի կայքում գնումների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև՝ gnumner.am կայքում Կրթական ծրագրերի կենտրոնին առնչվող կնքված պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Վերը հիշատակված կայքերի ընդհանրական դիտարկմամբ ակնառու է դառնում այն իրողությունը, որ Կրթության բարելավման վարկային ծրագրի շրջանակներում փաստացի կատարված ծախսերի մի փոքր մասն է միայն արտացոլվում գնումների հրապարակային փաստաթղթերի միջոցով:

Ուսումնասիրության արդյունքներն ամփոփվել ու ներկայացվում են ըստ ծրագրի առանձին բաղադրիչների:

4.2. Գնումների պլանը և դրա կատարման ընթացքն ըստ ծրագրի բաղադրիչների

Բաղադրիչ 1. Հանրակրթության որակի բարելավում

Ենթաբաղադրիչ 1.1. Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում

ՀԲ գնումների պլանում այս ենթաբաղադրիչի մասով նախատեսված է միայն մեկ գործողության ֆինանսավորման պայմանագրի կնքում, որը վերաբերում է նշված կետերից վերջինին, այն է՝ մշտադիտարկել և կազմակերպել միկրոծրագրերի ազդեցության գնահատումը:

Գործողության կատարման պայմանագիրը ստորագրվել է 2015թ. հոկտեմբերի 2-ին, «Բեյքեր Թիլի Արմենիա» կազմակերպության հետ: Պայմանագրի արժեքը 148.8 հազար ԱՄՆ դոլար է: Կազմակերպությունը, ի կատարումն պայմանագրով ստանձնած պարտավորությունների, տարեկան կտրվածքով պարբերաբար իրականացնում է նախադպրոցական կրթական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի և դրա վրա ազդող գործոնների հետազոտություն, որի արդյունքները հրապարակվում

են համապատասխան հաշվետվության տեսքով: Հետազոտությունները ի ցույց են դնում միկրոծրագրերի արդյունավետությունը, դրանց շրջանակներում ստեղծված նախադպրոցական հաստատություններում երեխաների զարգացումը տեղի է ունենում համեմատաբար ավելի բարձր տեմպով[39]:

Ենթաբաղադրիչ 1.1-ի մյուս գործողությունների մասով Համաշխարհային բանկի Կրթության բարելավում ծրագրի գնումների պլանում որևէ այլ կետ ներառված չէ: Բացի այդ, ենթաբաղադրիչի շրջանակներում իրականացված միկրոծրագրերի ֆինանսավորման ընթացքի, կատարված գնումների, կնքված պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը մեր կողմից հետազոտված աղբյուրներում բացակայում է:
Ենթաբաղադրիչով նախատեսված գործողությունների կատարման արդյունքների վերաբերյալ Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ պաշտոնական կայքում զետեղված տեղեկատվության հիման վրա կարելի է միայն արձանագրել, որ իրագործվել են ոչ միայն ենթաբաղադրիչի համար սահմանված միջանկյալ, այլ նաև վերջնական թիրախները (աղյուսակ 4.1):

Աղյուսակ 4.1. Ենթաբաղադրիչ 1.1.-ի միջանկյալ թիրախները և դրանց կատարման աստիճանը

Ցուցիչը (ըստ ծրագրի բաղադրիչների)	Միջանկյալ թիրախը	Փաստացի արդյունքը	Թիրախի իրագործման աստիճանը	Վերջնական թիրախը	Վերջնական թիրախը
Միկրոծրագրերի թիվը	60	80	Գերակատար-ված է	120	Իրականացված է
Հաճախող երեխաների թիվը	1200	2430	Գերակատար-ված է	2400	Իրականացված է

Ամփոփում. գնումների պլանով և կնքված պայմանագրերի վերաբերյալ հրապարակված տեղեկատվությամբ հնարավոր է դիտարկել ենթաբաղադրիչ 1.1-ով 1.875 մլն ԱՄՆ դոլարի չափով պլանավորված գործողություններից միայն 148.8 հազար ԱՄՆ դոլարի օգտագործման հանգամանքը:

Ենթաբաղադրիչ 1.2 Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը

Ենթաբաղադրիչի հիմնական նպատակը ավագ դպրոցների համակարգում կրթության որակի և համապատասխանության բարձրացումն է, սահմանված չափանիշներով ընտրված ավագ դպրոցների[40] կարողությունների հզորացումը:

Ենթաբաղադրիչի շրջանակներում 2015թ.-ից Մեծամոր, Արարատ, Մարտունի, Հրազդան և Նոյեմբերյան քաղաքների՝ ընդհանուր թվով 5 ավագ դպրոցներում մեկնարկել են հիմնանորոգման աշխատանքները, որոնք հիմնականում ավարտված են: Հետաքրքրական է, որ ՀԲ գնումների ինչպես սկզբնական, այնպես էլ վերանայված պլանում նախատեսված է միայն երկու՝ Մեծամորի և Արարտի ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքներ իրականացման մրցույթների անցկացումն ու պայմանագրերի կնքումը: Մյուս երեք ավագ դպրոցների հիմնանորոգման մրցույթի հրավերի, մրցույթի անցկացման, պայմանագրերի ստորագրման, աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը ՀԲ գնումների պլանում, նաև՝ ՀԲ պաշտոնական կայքում տեղակայված մրցութային պայմանագրերի վերաբերյալ փաստաթղթերում բացակայում է (աղյուսակ 4.2):

Աղյուսակ 4.2. Կրթության բարելավում վարկային ծրագրի շրջանակներում կնքված, ենթաբաղադրիչ 1.2-ով նախատեսված գործողությունների կատարմանն առնչվող պայմանագրերը, ըստ Համաշխարհային բանկի պաշտոնական կայքի[41]

Գործողության նկարագրությունը	Գնման մեթոդը	Կատարողը (մրցույթի հաղթողը)	Պայմանագրի ստորագրման ամսաթիվը	Գումարը, հազար ԱՄՆ դոլար
Ավագ դպրոցների և ԿՏԱԿ շենքի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական վերահսկողություն	Խորհրդատուի որակավորման վրա հիմնված ընտրություն	Պարապետ	01.08.2016	99.9
Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի թիվ 2 ավագ դպրոցի հիմնանորոգում		Բաղրամյանշին ԲԲԸ	01.08.2016	1926.8

39 Բեյքեր Թիլլի Արմենիա, Նախադպրոցական կրթական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի և դրա վրա ազդող գործոնների 2016թ. հետազոտության արդյունքներ:
Բեյքեր Թիլլի Արմենիա, Նախադպրոցական կրթական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի և դրա վրա ազդող գործոնների 2017թ. հետազոտության արդյունքներ:
40 Սկզբնապես ծրագրի շրջանակներում նախատեսվում էր ֆինանսավորել 17-20 ավագ դպրոցների կարողությունների բարելավման միջոցառումները, վարկային պայմանագրում որպես վերջնական թիրախ սահմանված է 17-ը, սակայն հետագայում հիմնանորոգման ենթակա դպրոցների թիվը կրճատվեց մինչև 12-ը:
41 2018թ. օգոստոսի 15-ի դրությամբ:

Գործողության նկարագրությունը	Գնման մեթոդը	Կատարողը (մրցույթի հաղթողը)	Պայմանագրի ստորագրման ամսաթիվը	Գումարը, հազար ԱՄՆ դոլար
Արարատի ավագ դպրոցի հիմնանորոգում		Բաղրամյանշին ԲԲԸ	01.08.2016	1515.7
5 ավագ դպրոցների նախագծերի վերջնական մշակում	որիրդատուի որակավորման վրա հիմնված ընտրություն	Բաբայան-Լատ Նախագիծ ՍՊԸ Մոդուլ 2015 ՍՊԸ	10.08.2015	170.7
5 ավագ դպրոցների ճարտարապետական և տեխնիկական նախագծերի վերջնական մշակում	որիրդատուի որակավորման վրա հիմնված ընտրություն	Բաբայան-Լատ Նախագիծ ՍՊԸ Մոդուլ 2015 ՍՊԸ	10.08.2015	171.6
6 ավագ դպրոցների ճարտարապետական և տեխնիկական նախագծերի մշակում	Որակի և ծախսի վրա հիմնված ընտրություն	Հորիզոն 95	05.05.2016	219.7
5 ավագ դպրոցներում քաղաքացիական աշխատանքների հեղինակային մոնիտորինգի իրականացում	որիրդատուի որակավորման վրա հիմնված ընտրություն	Բաբայան-Լատ Նախագիծ ՍՊԸ Մոդուլ 2015 ՍՊԸ	02.09.2015	28.8
Ընդամենը				**4133.2**

Կրթության բարելավում ծրագրի շրջանակներում երեք ավագ դպրոցների (Նոյեմբերյան, Մարտունի քաղաքների և Հրազդանի թիվ 1 ավագ դպրոցների) հիմնանորոգման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը վերցվել է ԿԾԿ պաշտոնական կայքից: Ստորև աղյուսակ 4.3-ում ներկայացված է համապատասխան մրցույթի արդյունքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:

Աղյուսակ 4.3. Նոյեմբերյանի, Մարտունու և Հրազդանի թիվ 1 ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքների կատարման մրցույթի մասնակիցները, հաղթողները և արժեքը

Խմբաքանակը	Գնահատված հայտատուներ	Գնահատված հայտի գինը, մլն ՀՀ դրամ	Հաղթող ճանաչված հայտատու	Պայմանագրի արժեքը	
				մլն ՀՀ դրամ	հազար ԱՄՆ դոլար[1]
Խմբաքանակ 1	ՀՁ "Ուկրշին" ԲԲԸ – "Ճանապարհ" ՍՊԸ	455.14	ՀՁ "Ուկրշին" ԲԲԸ – "Ճանապարհ" ՍՊԸ	455.14	931.2
Խմբաքանակ 2	ՀՁ "Գևորգյան և Ներսիսյան" ՍՊԸ – "Ագաթ 777" ՍՊԸ	699.9	ՀՁ "Գևորգյան և Ներսիսյան" ՍՊԸ – "Ագաթ 777" ՍՊԸ	699.9	1432.2
	"Ախուրյանի կոոպշին" ՍՊԸ	729.9			
Խմբաքանակ 3	ՀՁ "Արարատշին" ՍՊԸ – "Զեթ Պրոֆիլ" ՍՊԸ	461.2	ՀՁ "Արարատշին" ՍՊԸ – "Զեթ Պրոֆիլ" ՍՊԸ	461.2	943.7
	Ախուրյանի կոոպշին" ՍՊԸ	509.8			
Ընդամենը				**1616.2**	**3307.1**

Վերը ներկայացված երկու աղյուսակների տվյալների համադրմամբ պետք է արձանագրել, որ բաղադրիչ 1.2-ի շրջանակներում գնումների պլանով նախատեսված գործողությունները ընդգրկում են ընտրված ավագ դպրոցների հիմնանորոգման նախագծերի մշակումը, բուն շինարարական աշխատանքների իրականացումը և դրանց նկատմամբ տեխնիկական հսկողությունը: Կնքված պայմանագրերի գումարային արժեքը 7.44 մլն ԱՄՆ դոլար է:

ՀԲ գնումների պլանով ենթաբաղադրիչ 1.2-ի շրջանակներում նախատեսված է ևս մեկ գործողություն՝ ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և աշխարհագրության լաբորատորիաների սարքավորումների ձեռքբերում ավագ դպրոցների համար: Վարկային պայմանագրով նախատեսված է ծրագրի գործողության երկրորդ տարում նորագույն նյութատեխնիկական բազայով և կրթական ռեսուրսներով համալրել 15 ավագ դպրոց, առաջին երեք տարիների ընթացքում դրանց թիվը հասցնել 40-ի, 4-րդ տարում ավելացնել ևս 20-ը, իսկ վերջնական թիրախը

107 ավագ դպրոցների ռեսուրսային համալրումն է:Պայմանագրի ստորագրման պլանային ժամկետ էր սահմանվել 2017թ. փետրվարի 15-ը, իսկ կատարումը պլանավորված էր 2017թ. օգոստոսի 14-ին:
Այս ուղղությամբ փաստացի կատարված աշխատանքները պլանավորվածից զգալիորեն հետ են մնում: Այսպես, այս ուղղությամբ արվել է հետևյալը՝ մշակվել է գնման ենթակա լաբորատոր սարքավորումների համակազմը՝ ներառյալ դրանց տեխնիկական հատկորոշիչները, մեկ լաբորատորիայի համար նախատեսված սարքավորումների քանակը, ինչպես նաև լաբորատորիաների կահավորման մոդելները (համապատասխան լաբորատորիաները գործարկելու նպատակով պահանջվող կահույք և հարմարանքներ): Նաև՝ մշակվել և հաստատվել է լաբորատոր սարքավորումների գնման մրցութային փաթեթը: Սակայն 2017 և 2018 թթ. ՀՀ պետական բյուջեներում համապատասխան միջոցներ չնախատեսելու հանգամանքով պայմանավորված գնումների կազմակերպման և ֆինանսավորման գործընթացը հետաձգվել է և նախատեսվում է իրականացնել ավելի ուշ: Մեր գնահատմամբ, վերջնական արդյունքների իրագործումը, սահմանված ծավալներով, գրեթե անհավանական է: Առավել իրատեսական ենք համարում հաջորդ վարկային ծրագրերի շրջանակներում այս թիրախի իրագործումը տեղափոխելը:

Ամփոփում.

- ենթաբաղադրիչ 1.2-ի շրջանակներում ծրագրով նախատեսված էր իրականացնել 22.5 մլն ԱՄՆ դոլար ֆինանսավորման ծավալով գործողություններ: Փաստացի կատարվել կամ կատարման վերջնական փուլերում են գտնվում 7.44 մլն ԱՄՆ դոլար պայմանագրային արժեքով գործողություններ (ընդհանուրի 33.1%-ը),

- վարկային պայմանագրի համաձայն, նախատեսվում էր ֆինանսավորել ընդհանուր առմամբ 17 ավագ դպրոցի հիմնանորոգում, սակայն փաստացի կնքվել է 5 ավագ դպրոցի հիմնանորոգման պայմանագիր, որոնցից միայն երկուսի պայմանագրերն են արտացոլված ՀԲ գնումների պլանում,

- չի կատարվել ենթաբաղադրիչ 1.2-ի շրջանակներում գնումների պլանով նախատեսված ավագ դպրոցների համար ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և աշխարհագրության լաբորատորիաների սարքավորումների ձեռքբերման գործողությունը:

Ենթաբաղադրիչ 1.3 Կրթության համակարգում տվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում

Ենթաբաղադրիչ 1.3-ի համար սահմանված են հետևյալ նպատակները՝ բարձրացնել կրթական համակարգում հաղորդակցության արդյունավետությունը ՏՀՏ-ի միջոցով, աջակցել սովորողների գիտելիքների ձեռքբերումների մշտադիտարկմանը և գնահատմանը:

ՀԲ գնումների պլանում այս ենթաբաղադրիչի մասով ներառված են չորս գործողություններ.

1. ԿՏԱԿ շենքի հիմնանորոգում,

2. դպրոցների և համալսարանների ներկայացուցիչների վերապատրաստում կրթական գործընթացնում ՏՀՏ օգտագործման մասով,

3. հիմնական և ավագ դպրոցների համար կրթական գործընթացների ծրագրային ապահովման համակարգի ձևավորում,

4. տեխնիկական աջակցություն ԿՏԱԿ կարողությունների հզորացմանը:

ԿՏԱԿ շենքի հիմնանորոգման մրցույթի արդյունքներով համապատասխան պայմանագիրը կնքվել է 2018թ. մարտի 26-ին (պլանավորված ժամկետից 3 ամիս ուշացումով): Պայմանագրի արժեքը, գնումների պլանով, 644.5 հազար ԱՄՆ դոլար է: Գնումների պլանի համաձայն, հիմնանորոգման աշխատանքների ավարտի ժամկետը 2018թ.դեկտեմբերի 30-ն է, սակայն պայմանագրի կնքման պլանային ժամկետների խախտումները, ամենայն հավանականությամբ, կբերեն նաև աշխատանքների ավարտի պլանային ժամկետների խախտման:

Ինչ վերաբերում է գնումների պլանով նախատեսված, վերը նշված գործողություններից երկրորդին, ապա պետք է արձանագրել, որ գնումների պլանում սահմանված և փաստացի կնքված պայմանագրով նախատեսված գործողությունների նկարագրության մեջ առկա են որոշ տարբերություններ: Գնումների պլանում խոսվում է կրթական գործընթացներում ՏՀՏ օգտագործման մասով դպրոցների և համալսարանների ներկայացուցիչների վերապատրաստման գործողության մասին, մինչդեռ կնքված պայմանագրում գործողությունը ձևակերպված է որպես կրթական գործընթացներում ՏՀՏ օգտագործման կարիքների գնահատում: Ակնհայտ է, որ այս վերջին ձևակերպումը շատ ավելի նեղ է, պարտավորության ավելի փոքր ծավալ է ենթադրում, քան առաջինը:

Գործողության կատարման պայմանագրիը կնքվել է 2016թ. նոյեմբերի 23-ին: Կատարողը կանադական Agence Universitaire De La Francophonie կազմակերպությունն է, պայմանագրի արժեքը՝ 78.3 հազար ԱՄՆ դոլար: Գնումների պլանով գործողության կատարման վերջնաժամկետ էր սահմանվել 2017թ. հուլիսի 6-ը:

Վարկային ծրագրով այս գործողության կատարման արդյունքում ի սկզբանե նախատեսվում էր կրթական գործընթացում ՏՀՏ օգտագործման կարողունակության զարգացման նպատակով, մինչև 2017թ. վերջը, վերապատրաստել 2500 ուսուցիչ և վարչական աշխատող, մինչդեռ փաստացի դեռևս միայն մշակվել են ՏՀՏ վերապատրաստման 6 մոդուլներ և վերապատրաստվել են 30 վերապատրաստողներ: Այսինքն՝ գործողության միջնակյալ թիրախը իրագործված չէ, խնդրահարույց է վերջնական թիրախի (4000 ուսուցիչների և վարչական աշխատողների վերապատրաստում) իրագործելիությունը:

Ենբաղադրիչ 1.3-ի համար գնումների պլանով նախատեսված հաջորդ գործողության՝ (հիմնական և ավագ դպրոցների համար կրթական գործընթացների ծրագրային ապահովման համակարգի ձևավորում) կատարման շրջանակներում 2017թ. հունիսին (գնումների պլանով նախատեսված ժամկետից 2 ամիս ուշացումով) կնքվել է 375.0 հազար ԱՄՆ դոլարի պայմանագիր: Գործողության կատարման պլանային վերջնաժամկետը 2017թ. հոկտեմբերն էր: Պլանային ժամկետում գործողությունը չի կատարվել: Չեն կատարվել նաև միջանկյալ թիրախները: Պլանի համաձայն, համակարգը արդեն իսկ պետք է մշակված, փորձարկված և ՀՀ ողջ տարածքում ներդրման համար պատրաստ լիներ: Միչդեռ հիմա պատրաստ է միայն համակարգի ծրագրային ապահովման նախագծային տարբերակը: ԿԾԿ ԾԻԳ-ի մեկնաբանությամբ, համակարգի լիարժեք ներդրման գործողությունները հետաձգվում են, քանի որ դրանք կապակցված են ԿՏԱԿ վերազինման հետ: Նախատեսվում է, որ ԿՏԱԿ շենքի հիմնանորոգումից և անհրաժեշտ սարքավորումային և ծրագրային վերազինումից հետո համակարգը կներդրվի, ինչը, մեր գնահատմամբ, լավագույն դեպքում կարող է տեղի ունենալ 2019թ. կեսերին, այսինքն՝ գնումների պլանով նախատեսված ժամկետից 2 տարի ուշացումով:

Նույն պատճառով հետաձգվում է նաև գնումների պլանով ենթաբաղադրիչ 1.3-ի համար նախատեսված չորրորդ գործողության կատարումը, այն է՝ տեխնիկական աջակցություն ԿՏԱԿ կարողությունների հզորացմանը: Գործողության կատարումը հետաձգված է, վերջնաժամկետ է սահմանված 2019թ. մայիսը: Այս գործողության մասով գնումների պլանով որևէ պայմանագիր դեռևս ստորագրված չէ և բնականաբար՝ ֆինանսական հատկացում արված չէ:

Ամփոփում.

- ենթաբաղադրիչ 1.3-ի մասով գնումների պլանում նախատեսված են 4 գործողություններ, որոնց կատարման շրջանակներում ստորագրված է 3 պայմանագիր՝ 1097.8 հազար ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով: Այն կազմում է վարկային ծրագրով ենթաբաղադրիչի նախատեսված ամբողջ ֆինանսավորման 43.9%-ը:

- բոլոր գործողությունների մասով գնումների պլանով սահմանված պայմանագրերի ստորագրման նախնական ժամկետները խախտվել են,

- բոլոր գործողությունների մասով ծրագրով սահմանված միջանկյալ թիրախները զգալիորեն թերակատարվել են, վերջնական թիրախների լրիվ ծավալով և պլանային ժամկետներում կատարումը համարում ենք անիրատեսական:

Ենթաբաղադրիչ 1.4 Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով

Ենթաբաղադրիչ 1.4-ի հիմնական նպատակը կրթության որակի բարելավումն է՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով, նաև՝ սովորողների գիտելիքների և հմտությունների բարելավման ապահովումը:
Ծրագրի գնումների պլանում այս ենթաբաղադրիչի շրջանակներում կատարման ենթակա գործողություններից ներառված են հետևյալ երկուսը (աղյուսակ 4.4):

Աղյուսակ 4.4. Ենթաբաղադրիչ 1.4-ի շրջանակներում գնումների պլանով նախատեսված գործողությունները

#	Գործողության նկարագրությունը	Գումարը	Կարգավիճակը	Պայմ. ստորագրմ. պլանային ժամկետը	Կատարման պլանային ժամկետը
1	Ընդհանուր միջնակարգ կրթության առարկայական չափորոշիչների և կրթակարգերի վերանայում	0	Չեղարկվել է	02.10.2017	02.10.2018
2	Ընդհանուր կրթության պետական ծրագրի համատեքստում ընդհանուր միջնակարգ կրթության համար առարկայական չափորոշիչների և կրթական ծրագրերի վերանայում	0	Կատարման ընթացքում է	26.06.2018	26.06.2020

Գործողություններից առաջինը չեղարկվել է, իսկ երկրորդը կատարման ընթացքում է: Կատարման պլանային ժամկետը 2020թ. հունիսն է: Այս ենթաբաղադրիչի մասով գնումների պլանին համապատասխան որևէ պայմանագիր չի կնքվել, վարկային միջոցների հատկացում չի արվել:
Ենթաբաղադրիչի համար վերջնական թիրախ է սահմանված մինչև ծրագրի գործողության ավարտը թվով 10 առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայումն ու լրամշակումը: Ինչպես արձանագրել էինք մեր նախորդ հաշվետվությունում, ենթաբաղադրիչի միջանկյալ թիրախները իրագործված չեն[42], խնդրահարույց է վերջնական թիրախի լրիվ ծավալով և նախատեսված ժամկետներում կատարման հեռանկարը:

Ամփոփում.

ենթաբաղադրիչ 1.4-ի շրջանակներում գնումների պլանով սահմանված գործողությունները կատարված չեն, համապատասխան պայմանագրերը կնքված չեն, ՀԲ գնումների պլանի կատարողականի համաձայն, չի օգտագործվել վարկային ծրագրով այս ենթաբաղադրիչի համար նախատեսված 0.625 մլն ԱՄՆ դոլարը:

Բաղադրիչ 2. Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը

Բաղադրիչ 2-ի համար սահմանված է հետևյալ նպատակը՝ բարձրացնել բարձրագույն կրթության որակը, համապատասխանությունը և մատչելիությունը, բարելավել և արդիականացնել կրթական և ենթակառուցվածքային կարողությունները:

Ենթաբաղադրիչ 2-ի շրջանակներում իրականացվող հիմնական գործողություններն են.

1. ՆՄՀ իրականացման ընթացակարգերի վերամշակում:

2. Բուհերին դրամաշնորհների տրամադրում (նախատեսված է իրականացնել հայտերի ընդունման երկու փուլ):

3. ՆՄՀ իրականացման գործընթացի մոնիթորինգ՝ ներառյալ ՆՄՀ արդյունավետության վերաբերյալ հարցումները ՆՄՀ դրամաշնորհային ծրագրեր իրականացնողների և պոտենցիալ հայտատուների շրջանում:

4. Համագործակցություն մասնավոր սեկտորի և պոտենցիալ դոնորների հետ՝ ՆՄՀ շարունակականության ապահովման նպատակով լրացուցիչ ֆինանսավորման ներգրավման համար:

5. Բուհերի վարչական և այլ համապատասխան աշխատակազմի ներկայացուցիչների համար վերապատրաստումների անցկացում՝ ծրագրերի մշակման, ղեկավարման, մշտադիտարկման և գնահատման, ինչպես նաև գնումների իրականացման ընթացակարգերի ուղղությամբ:

ՆՄՀ շրջանակներում տասներկու դրամաշնորհառու բուհեր իրականացրել են նորարարական զարգացման ծրագրեր: Տասներկու բուհերի թվում են հինգ կոնսորցիում ծրագրեր, այդ թվում՝ չորսը բիզնես-գործընկերների հետ համագործակցությամբ, երկու ոչ պետական բուհերի ծրագրեր, ինչպես նաև մեկ մարզային բուհի ծրագիր:

Դրամաշնորհառու բուհերն են՝

1. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան,
2. Երևանի պետական բժշկական համալսարան,
3. Երևանի պետական համալսարան,
4. Հայաստանի ազգային ագրարային համալսարան,
5. ՀՀ պետական կառավարման ակադեմիա,
6. Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան,
7. Գլաձոր համալսարան,
8. Հյուսիսային համալսարան,
9. Շիրակի պետական համալսարան,
10. Երևանի պետական կոնսերվատորիա,

42 2017թ. վերջին եռամսյակի դրությամբ պետք է վերանայված և լրամշակված լիներ առնվազն 6 առարկայական չափորոշիչ և ծրագիր: Մինչդեռ փաստացի արդյունքները շատ ավելի համեստ են՝ 2017 թվականի ընթացքում տարվել են նախապատրաստական աշխատանքներ հանրակրթության առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման ուղղությամբ, իրականացվել են խորհրդաժողովներ, տարբեր ձևաչափով հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման տարբեր մոտեցումները, աշխատանքների կազմակերպման եղանակները և ձևերը: Քննարկումների հիման վրա որոշվել է, որ ամբողջական մոտեցման ապահովման նպատակով առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայումը անհրաժեշտ է իրականացնել իբրև հանրակրթության պետական ծրագրի մաս: Ամփոփվել և վերջնականացվել է առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման տեխնիկական առաջադրանքը:

11. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի Հայկական պետական ինստիտուտ,
12. Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան:

Իրականացվող ծրագրերի արդյունքում բուհերը հագեցվում են արդիական լաբորատոր սարքավորումներով և տեխնիկայով, ներդնում կրթության ժամանակակից ձևեր և մեթոդներ, հնարավորություն ստանում ուսումնասիրել և փոխառնել միջազգային հաջողված փորձը, բարձրացնել հետագա զարգացման կարողությունները, ստեղծել պայմաններ այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրների գոյացման, ինչպես նաև բուհերում ստեղծվող գիտելիքի առևտրայնացման համար:

Բաղադրիչ 2-ի միջանկյալ և վերջնական թիրախային արդյունքները լրիվությամբ իրականացվել են: ՆՄՀ ծրագրերի շահառու բուհերը 12-ն են (վերջնական թիրախը՝ 10), կոնսորցիում ծրագրերի թիվը՝ 5 (վերջնական թիրախը՝ 4):

ՆՄՀ ծրագրերի շրջանակներում հայտարարված և անցկացված մրցույթների, դրանց արդյունքների հիման վրա կնքված պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվության հիմնական աղբյուր է հանդիսացել ԿԾԿ ԾԻԳ պաշտոնական կայքը: Համաշխարհային բանկի կայքում զետեղված վարկային ծրագրի գնումների պլանում, ստորագրված պայմանագրերում բացակայում է տեղեկատվությունը ՆՄՀ շրջանակներում կատարված գործարքների վերաբերյալ:

Վարկային ծրագրի գնումների պլանի միակ գործողությունը, որն առնչվում է բաղադրիչ 2-ին, ՆՄՀ դրամաշնորհային նախագծերի աուդիտն է: Պայմանագիրը ստորագրվել է 2018թ. մարտին, կատարումը շարունակական է, մինչև 2021թ. սեպտեմբերը: Պայմանագրի արժեքը 24.9 հազար ԱՄՆ դոլար է:

ԿԾԿ կայքում առկա է տեղեկատվություն ծրագրի բաղադրիչ 2-ի շրջանակներում կազմակերպված և անցկացված անհատ խորհրդատուի ընտրության 63 մրցույթի վերաբերյալ: Դիտարկված մրցույթների արդյունքներով կնքված պայմանագրերի ընդհանուր արժեքը 50.6 մլն դրամ է (աղյուսակ 4.5):

Աղյուսակ 4.5. ՆՄՀ ծրագրերի շրջանակներում անհատ խորհրդատուի ընտրության մրցույթների ամփոփ արդյունքները

Կազմակերպության անվանումը	**Կնքված պայմանագրերի թիվը**	**Գումարը, ըստ բոլոր պայմանագրերի, ՀՀ դրամ**	**%, ընդհանուրի մեջ**	**Միջինը ըստ 1 պայմանագրի, ՀՀ դրամ**
Երևանի պետական համալսարան (ԵՊՀ)	1	1500000	3,0	1500000
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա (ԵՊԿ)	1	500 000	1,0	500000
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան (ՀԱՊՀ)	3	2050000	4,1	683333
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ (ՀՖԿՍՊԻ)	1	1037000	2,1	1037000
ՀՀ պետական կառավարման ակադեմիա (ՊԿԱ)	36	28500000	56,3	791667
Հայաստանի պետական մանկավարժական համալսարան (ՀՊՄՀ)	11	9200000	18,2	836364
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան (ՃՇՀԱՀ)	9	5550000	11,0	616667
Շիրակի պետական համալսարան (ՇՊՀ)	1	2240000	4,4	2240000
Ընդամենը	**63**	**50577000**	**100,0**	**802810**

Անհատ խորհրդատուի հետ կնքված մեկ պայմանագրի միջին արժեքը 802.8 հազար դրամ է: Ամենամեծ թվով պայմանագրերն ու պայմանագրերի ընդհանուր արժեքում ամենամեծ մասնաբաժինը ՀՀ պետական կառավարման ակադեմիայինն է, որին հաջորդում են Հայաստանի պետական մանկավարժական համալսարանն ու Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը:



Գծանկար 4.1. ՆՄՀ ծրագրերի մասնակիցների մասնաբաժինը անհատ խորհրդատուի ընտրության մրցույթների արդյունքներով կնքված պայմանագրերի ընդհանուր գումարի կառուցվածքում

Դիտարկված պայմանագրերը հիմնականում կնքվել են նախապես ակցկացված մրցույթների արդյունքների հիման վրա: Միայն երկու պայմանագրի դեպքում է իրականացվել մեկ աղբյուրից ընտրություն:

Չնայած պայմանագրերը հիմնականում կնքվել են մրցութային հիմունքներով, այնուհանդերձ, առանձին դեպքերում աչքի է ընկնում դրանց ֆորմալ բնույթը: Տպավորություն է ստեղծվում, որ միևնույն բուհի ներսում կատարվել է խորհրդատուների ընտրության ներքին մրցույթ, միևնույն մարդիկ մասնակցել և հայտնվել են այնպիսի մրցույթների կարճ ցանկում, որոնց արդյունքում պետք է կատարվեր միմյանցից էականորեն տարբերվող մասնագիտական ոլորտներին պատկանող փորձագետների կամ խորհրդատուների ընտրություն: Օրինակ, ՀՀ Պետական կառավարման ակադեմիայում կազմակերպված երկու տարբեր մրցույթներում (մի դեպքում՝ «նորարարությունների կառավարում», իսկ մյուս դեպքում՝ «մասնագիտական օտար լեզու» առցանց դասընթացը մշակող անհատ խորհրդատուի ընտրության) կարճ ցանկերում ընդգրկված երեք մասնակիցներից երկուսը նույն անձինք են: Ստացվում է, որ նույն անձը ոչ միայն մասնակցել է տարբեր մասնագիտական ոլորտներում (տվյալ դեպքում՝ օտար լեզու և կառավարում) փորձագիտական մակարդակի կարողունակություն և որակավորում պահանջող մրցույթների, այլ նաև՝ հայտնվել դրանց կարճ ցանկում: Բացի այդ, առանձին մրցույթների կարճ ցանկերի ուսումնասիրության արդյունքում նկատելի է դրանցում ընդգրկված անձանց յուրօրինակ «ռոտացիան»: Այսինքն՝ միևնույն անձը մասնակցել է մի քանի մրցույթների և դրանցից մեկում պարտադիր կերպով հաղթող է ճանաչվել: Դեպքերի մեծամասնությունում նույն անձը հաղթել է մրցույթներից միայն մեկում՝ անկախ նրանից, թե քանի մրցույթի է մասնակցել[43]:

Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ կայքում հրապարակված փաստաթղթերում առկա է տեղեկատվություն Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի ծրագրի շրջանակներում կնքված գույքի և սարքավորումների ձեռքբերման թվով 53 պայմանագրերի մասին՝ 571.7 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով (աղյուսակ 4.6):

43 Օրինակ՝ «Գործարար բանակցություններ» առցանց դասընթացի մշակման անհատ խորհրդատուի մրցույթում առավելագույն հնարավոր միավորներ հավաքած (100 միավոր) և բնականաբար՝ հաղթած անձը մասնակցել է նաև գրեթե նույն կարողությունները, մասնագիտական հմտություններն ու ունակությունները պահանջող մեկ այլ մրցույթի, այս անգամ արդեն՝ «Բանակցային գործ» առցանց դասընթացի մշակման անհատ խորհրդատուի ընտրության, որտեղ, սակայն, ստացել է 90 միավոր և չի հաղթել, իսկ հաղթողը ևս նախորդ մրցույթի մասնակիցներից է, որտեղ, սակայն, զբաղեցրել է միայն երրորդ տեղը:

Աղյուսակ 4.6. Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի ծրագրի շրջանակներում կնքված սարքավորումների և այլ գույքի ձեռքբերման պայմանագրերի ամփոփ բնութագրիչները

Կազմակերպության անվանումը	Կնքված պայմանա-գրերի թիվը	Գումարը, ըստ բոլոր պայմանա-գրերի, ՀՀ դրամ	%, ընդհա-նուրի մեջ	Ամենամեծ պայմանագիրը	
				գումարը, հազար դրամ	%, մասնակցի պորտֆելում
Երևանի պետական համալսարան	9	212 888	37,2	117771	55,3
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա	6	75 565	13,2	33960	44,9
Հայաստանի ազգային ագրարային համալսարան	6	90 241	15,8	84958	94,1
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան	5	63061	11,0	24838	39,4
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ	4	21089	3,7	10333	49,0
ՀՀ պետական կառավարման ակադեմիա	10	22852	4,0	14076	61,6
Հայաստանի պետական մանկավարժական համալսարան	3	28483	5,0	20199	70,9
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան	8	43412	7,6	15738	36,3
Շիրակի պետական համալսարան	2	14078	2,5	13108	93,1
Ընդամենը	53	571 669	100,0		

Կնքված պայմանագրերի ընդհանուր գումարի ցուցանիշով առաջատար է ԵՊՀ-ն՝ 212.9 մլն դրամ կամ ընդհանուրի 37 տոկոսը, որի հաջորդում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանը՝ 16% և Երևանի պետական կոնսերվատորիան՝ 13%:



Գծանկար 4.2. Սարքավորումների և այլ գույքի ձեռքբերման մրցույթների շրջանակներում կնքված պայմանագրերի ընդհանուր գումարի բաշխումն ըստ ծրագրի մասնակից բուհերի

Ամենամեծարժեքով պայմանագրի ցուցանիշով ևս առաջատարը ԵՊՀ-ն է: Մանրեաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնի լաբորատոր սարքավորումների ձեռքբերման մրցույթի շրջանակներում կնքված պայմանագրի երկրորդ խմբաքանակով կատարվել է սարքավորումների ձեռքբերում 117.8 մլն դրամի չափով, իսկ առաջին խմբաքանակի հետ միասին պայմանագրի ընդհանուր արժեքը 162.4 մլն դրամ է: Այս

գործարքին բաժին է ընկնում ԵՊՀ կողմից ծրագրի շրջանակներում կնքված բոլոր պայմանագրերի գումարային արժեքի 76.4 տոկոսը:

Դիտարկվող ծրագրում ներգրավված մյուս մասնակիցների պարագայում ևս ամենախոշոր գործարքի մասնաբաժինը բոլոր պայմանագրերի ընդհանուր արժեքում բավականին բարձր է. ՀԱԱՀ-ում՝ 94.1%, ՇՊՀ-ում՝ 93.1%, ՀՊՄՀ-ում՝ 70.9%, ՊԿԱ-ում՝ 61.6% և այլն:

Աղյուսակ 4.7-ում ներկայացված են խոշորագույն մրցույթների հաղթողներն ըստ ծրագրի մասնակիցների:

Աղյուսակ 4.7 . Խոշոր մրցույթների հաղթողներն ըստ ծրագրի մասնակիցների

Ծրագրի մասնակիցը	Խոշորագույն մրցույթի հաղթողը	Խոշորագույն մասնակցի պայմանագրերի քանակը	Պայմանագրերի ընդհանուր արժեքը, մլն դրամ
Երևանի պետական համալսարան	Կոնցեռն Էներգոմաշ ՓԲԸ	3	179,8
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա	Շոու-Մաստեր ՍՊԸ	2	54
Հայաստանի ազգային ագրարային համալսարան	Ջի Բի Քոնսալթինգ ՍՊԸ	1	85
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան	Ռեդինետ ՓԲԸ	2	39,1
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ	Լանս ՍՊԸ	1	10,3
ՀՀ պետական կառավարման ակադեմիա	Բի Լայն ՍՊԸ	1	14,1
Հայաստանի պետական մանկավարժական համալսարան	Կոմպասս ՍՊԸ	1	20,2
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան	Իքս Արթ ՍՊԸ	1	15,7
Շիրակի պետական համալսարան	Էքսպրես շին ՍՊԸ	1	13,1

Կնքված պայմանագրերի գումարային արժեքի մոտ կեսը բաժին է ընկնում լաբորատոր սարքավորումների և նյութերի ձեռքբերմանը: Համամակարգչային սարքավորումների և ծրագրեր ձեռքբերմանն ուղղվել է 80 մլն դրամ կամ ընդհանուրի 14.0 տոկոսը: Գրասենյակային գույքի, կահույքի, գրենական պիտույքների ձեռքբերմանն ուղղվել է մոտ 38 մլն դրամ կամ ընդհանուրի 6.6 տոկոսը (գծանկար 4.3):



Գծանկար 4.3. Կնքված պայմանագրերի կառուցվածքն ըստ խոշորացված խմբերի

Ամփոփում

- ՆՄՀ ծրագրերի շրջանակներում վարկային ռեսուրսների օգտագործումը ՀԲ գնումների պլանում արտացոլված չէ,

- ԿԾԿ ԾԻԳ կայքում հրապարակված է տեղեկատվություն ՆՄՀ ծրագրերի շրջանակներում անհատ խորհրդատուի ընտրության 63 մրցույթի և գույքի ու սարքավորումների ձեռքբերման 53 պայմանագրերի վերաբերյալ՝ 622.2 մլն դրամ ընդհանուր արժեքով, այն դեպքում, երբ վարկային ծրագրով բաղադրիչ 2-ի շրջանակներում նախատեսված է 6.25 մլն ԱՄՆ դոլարի չափով ֆինանսավորման իրականացում,

- անհատ խորհրդատուի ընտրության մրցույթները, առանձին դեպքերում, ֆորմալ բնույթ են կրում, միևնույն անձինք մասնակցել են տարբեր մասնագիտական բնագավառներում փորձագետի որակավորում պահանջող անհատ խորհրդատուի ընտրության մրցույթների և բարձր բալերով հայտնվել մասնակիցների կարճ ցանկում, աչքի է զարնում մասնակիցների միևնույն խմբի ներսում տարբեր մրցույթներում հերթականության սկզբունքով հաղթելու երևույթը,

- ՆՄՀ մասնակցների պայմանագրերի փաթեթում ամենախոշոր պայմանագրի արժեքի մասնաբաժինը, դեպքերի մեծամասնությունում, գերազանցում է 50 տոկոսը:

- ՆՄՀ շրջանակներում կնքված պայմանագրերի հիմնական մասը (արժեքային արտահայտությամբ) վերաբերում է լաբորատոր սարքավորումների ձեռքբերմանը:

Բաղադրիչ 3. Ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում

Ծրագրի կառավարումը, մոնիթորինգը և գնահատումը կատարվում է ԿԾԿ կողմից: Մոնիթորինգի և գնահատման համար կիրառվում են ԿԾԿ կողմից կազմակերպվող ստուգայցերը, շահակիցների հետ պարբերական հանդիպումները և քննարկումները, ըստ յուրաքանչյուր ենթաբաղադրիչի սահմանված արդյունքների իրագործման գնահատման ուսումնասիրություններ և հետազոտություններ, անհրաժեշտ տվյալների և տեղեկությունների վերլուծություն և այլն:

Վարկային ծրագրի մոնիթորինգի և գնահատման շրջանակի (ՄԳՇ) համաձայն, մոնիթորինգի և գնահատման գործողությունների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները հաշվարկվում և ներկայացվում են ծրագրի գնումների պլանում: Այնուհանդերձ, գնումների պլանում մոնիթորինգի և գնահատման գործողությունների արժեքը առանձին չի ներկայացված, այլ ներառված է գործողությունների խոշորացված խմբի ներսում: Ըստ այդմ, ծրագրի կոնկրետ բաղադրիչ 3-ի մասով գնումների պլանում առանձին գործողություն և դրա կատարումն ապահովող պայմանագրի կնքում նախատեսված չէ:

4.3. Ամփոփում և եզրակացություն

Եզրակացություն #1. Ենթաբաղադրիչ 1.1-ի շրջանակներում գնումների պլանով և կնքված պայմանագրերի վերաբերյալ հրապարակված տեղեկատվությամբ դիտարկվում է 1.875 մլն ԱՄՆ դոլարի չափով պլանավորված գործողություններից միայն 148.8 հազար ԱՄՆ դոլարի օգտագործումը:

Եզրակացություն #2. Ենթաբաղադրիչ 1.2-ի շրջանակներում փաստացի կատարվել կամ կատարման վերջնական փուլերում են գտնվում 7.44 մլն ԱՄՆ դոլար պայմանագրային արժեքով գործողություններ (ծրագրով նախատեսված 22.5 մլն ԱՄՆ դոլարի 33.1%-ը); փաստացի կնքվել է 5 ավագ դպրոցի հիմնանորոգման պայմանագիր, որոնցից միայն երկուսի պայմանագրերն են արտացոլված ՀԲ գնումների պլանում; չի կատարվել գնումների պլանով նախատեսված ավագ դպրոցների համար ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և աշխարհագրության լաբորատորիաների սարքավորումների ձեռքբերումը:

Եզրակացություն #3. Ենթաբաղադրիչ 1.3-ի շրջանակներում գնումների պլանում նախատեսված 4 գործողություններից երեքի մասով են կնքվել պայմանագրեր՝ 1097.8 հազար ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով, որը վարկային ծրագրով ենթաբաղադրիչի նախատեսված ամբողջ ֆինանսավորման 43.9%-ն է; ենթաբաղադրիչի բոլոր գործողությունների մասով գնումների պլանով սահմանված պայմանագրերի ստորագրման նախնական ժամկետները խախտվել են:

Եզրակացություն #4. Ենթաբաղադրիչ 1.4-ի շրջանակներում գնումների պլանով սահմանված գործողությունները կատարված չեն, համապատասխան պայմանագրերը կնքված չեն, չի օգտագործվել վարկային ծրագրով այս ենթաբաղադրիչի համար նախատեսված 0.625 մլն ԱՄՆ դոլարը:

Եզրակացություն #5. Բաղադրիչ 2-ի մասով՝ (i) ՆՄՀ ծրագրերի շրջանակներում վարկային ռեսուրսների օգտագործումը ՀԲ գնումների պլանում արտացոլված չէ; (ii) ԿԾԿ ԾԻԳ կայքում հրապարակված է տեղեկատվություն ՆՄՀ ծրագրերի շրջանակներում անհատ խորհրդատուի ընտրության 63 մրցույթի և գույքի ու սարքավորումների ձեռքբերման 53 պայմանագրերի վերաբերյալ՝ 622.2 մլն դրամ ընդհանուր արժեքով, որը կազմում է ծրագրով նախատեսված ընդհանուր ֆինանսավորման շուրջ 21%-ը; (iii) անհատ խորհրդատուի ընտրության մրցույթները, առանձին դեպքերում, ձևային և արհեստական բնույթ են կրում:

Եզրակացություն #6. ՀՀ կառավարության և ՀԲ մինչև կնքված վարկային պայմանագրի շրջանակներում նախատեսված գործողությունների կատարման գնումների պլանը զգալիորեն թերակատարվել է: Հետազոտված աղբյուրներում առկա է տեղեկատվություն մոտ 10 մլն ԱՄՆ դոլար գումարային արժեքով ստորագրված պայմանագրերի վերաբերյալ, մինչդեռ 2015-2018թթ. վարկային միջոցներով փաստացի կատարված և պլանավորված ծախսերը կազմում են 13.4 մլն ԱՄՆ դոլար44: Վարկային ծրագրի պլանային և փաստացի արդյունքների միջև առկա շեղումների վերացումը պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում, մեր գնահատմամբ, իրատեսական չէ:

44 Ըստ համապատասխան տարիների ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի:

5. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

5.1. Ներածություն

Հանրային կառավարման ոլորտում արդյունավետության խնդիրների լուծումը, հանրային ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացումը օրակարգային նշանակություն ունեն: Այս խնդիրների լուծման ուղղությամբ կարևոր քայլ է հանդիսանում արդյունավետության չափման և գնահատման համարժեք գործիքների մշակումը, որոնց կիրառությունը հնարավորություն կտա հանրային ծախսերի կառավարման գործընթացը կառուցել հստակ և իրականությանը համարժեք թիրախների վրա, ինչպես նաև օպերատիվ կերպով դիտարկել առաջադրված թիրախներից շեղումները՝ դրանց արագ արձագանքման, կառավարչական հսկողության գործառնության ընդհանուր արդյունավետության բարձրացման համար:

Ներկայացված են կրթության ոլորտի առանձին մակարդակների համար առաջարկվող արդյունավետության ցուցիչներ՝ ըստ կրթական ծառայության մատուցման գործընթացի հիմնական բաղադրիչների:

Ներկայացված են նաև արդյունավետության ցուցիչների ընդհանրացման, արդյունավետության հիմնական ցուցիչների համար ամփոփ գնահատականների ստացման մեթոդական մոտեցումներ, որոնք, ելակետային տեղեկատվության առկայության պարագայում, կարող են կիրառվել կրթության ոլորտում բյուջետային ծախսումների արդյունավետության ագրեգացված գնահատականներ ստանալու համար:

5.2. Արդյունավետության գնահատման ընդհանուր խնդրադրումը և հիմնական գործիքները

5.2.1. Արդյունավետության գնահատման հայեցակարգային մոտեցումները

Միջազգային պրակտիկայում լայնորեն տարածված մոտեցման համաձայն, կառավարության ծախսերը համարվում են արդյունավետ, եթե բյուջետային միջոցների ծախսման տվյալ մակարդակի պայմաններում երկրի բնակչության համար առավելագույն օգուտ է ապահովվում[45]: Արդյունավետության գնահատման տեսական և գործնական մոտեցումները, առավել հաճախ, հիմնվում են միևնույն ծախսերի պարագայում առավելագույն հնարավոր և փաստացի ստացված արդյունքների համեմատության վրա: Այդ նպատակով, առաջին հերթին հաշվարկվում է արդյունավետության սահմանը, որից փաստացի ստացված արդյունքի մեծ տարբերությունը դիտվում է որպես անարդյունավետության վկայություն, և հակառակը[46]:

Արդյունավետության գնահատման հետազոտություններում առաջամարտիկի համարում ունի Մ.Ֆարելը, ով իր մշակումներում տարանջատեց արդյունավետության երկու տարբեր հասկացություններ՝ տեխնիկական և բաշխողական[47]: Տեխնիկական արդյունավետությունը (technical efficiency), ըստ Ֆարելի մոտեցման, արտահայտում է ծախսերի տվյալ հավաքածուի և մակարդակի պայմաններում առավելագույն թողարկում ապահովելու կարողությունը, իսկ բաշխողական արդյունավետությունը (allocative efficiency) նկարագրում է ռեսուրսների տրված գների և առկա տեխնոլոգիաների պայմաններում ռեսուրսներն օպտիմալ համակցությամբ օգտագործելու ունակությունը: Ընդհանուր առմամբ, տեխնիկական արդյունավետությունը բնութագրում է միջանկյալ արդյունքի (հանրային բարիքի կամ ծառայության) արժեքի և դրա թողարկման վրա ծախսված ռեսուրսների հարաբերակցությունը, իսկ բաշխողական արդյունավետությունը ցույց է տալիս, թե ինչպես են օգտագործվում բյուջետային ռեսուրսները՝ հանրության նախասիրություններին կամ պահանջմունքներին առավելագույնս բավարարող արդյունքի ստացման համար[48]:

Տեխնիկական արդյունավետությունը հաճախ շաղկապվում է նաև արտադրական արդյունավետության (productive efficiency) հետ[49]: Վերջինս նկարագրում է նվազագույն ծախսումներով ֆիքսված արդյունքի ստացումը, այսինքն՝ հանրային բարիքը կամ ծառայությունը արտադրվում է առկա ռեսուրսների առավելագույն հնարավոր խնայողական օգտագործմամբ և բարիքի թողարկման ծավալների ընդլայնումը կարող է տեղի ունենալ միայն ռեսուրսների օգտագործման ավելացմամբ: Այլ ձևակերպմամբ՝ բարիքը թողարկումը գտնվում է տնտեսագիտության տեսությունից հայտնի արտադրական հնարավորությունների կորի վրա: Մյուս կողմից, արտադրական հնարավորությունների կորը բաղկացած է անվերջ կետերից, ինչը նշանակում է, որ տնտեսական արդյունավետության ապահովման

45 Afonso A., Schuknecht L., Tanzi V. Public sector efficiency: evidence for new EU members states and emerging markets.European Central Bank. 2006. NO. 581
46 Herrera S., Pang G. Efficiency of Public Spending in Developing Countries: An Efficiency Frontier Approach: 2005.
47 Farrel M. The measurement of productive efficiency//Journal of the royal statistical society, Series A, 120(III), 1957, pp.253-290.
48 Jackson P. The Political Economy of Bureaucracy. Oxford: Philip Allen, 1982; Diamond J. Establishing a Performance Management Framework for Government / Washington: IMF. Working Paper WP/05/50.
49 On efficiency and effectiveness: some definitions / Productivity Commission. Staff Research Note. May 2013 (http://www.pc.gov.au/research/completed/efficiency-effectiveness/efficiency-effectiveness.pdf).

անսահմանափակ թվով տարբերակներ կան, որոնցից յուրաքանչյուրին համապատասխանում է հանրային

բարիքների կամ ծառայությունների արտադրության որոշակի հավաքածու: Այնուհանդերձ, ոչ բոլոր հավաքածուներն են ապահովում հանրային բարեկեցության միևնույն մակարդակը: Ավելին, գոյություն ունի այնպիսի հավաքածու, որով հնարավոր է ապահովել հասարակության պահանջմունքների բավարարման առավելագույն մակարդակ: Եվ հենց այդ կոնկրետ հավաքածուի թողարկումն էլ նկարագրում է բաշխողական արդյունավետության իրավիճակը:

Բյուջետային ծախսումների արդյունավետության գնահատմանն առնչվող արտասահմանյան աղբյուրներում սկզբնական շրջանում առանձնացվում էին արդյունավետության բնութագրման երկու հենքային մոդելներ՝

1. **Երեք E-երի մոդել (“3Es model”),** որում արդյունավետությունը նկարագրվում է հետևյալ կառուցակարգով. “economy-efficiency-effectiveness”.

2. **“IOO” մոդել**, որի շրջանակներում արդյունավետությունը դիտարկվում է հետևյալ կերպ. “input – output - outcome”.



Ավելի ուշ նկարագրված երկու մոդելները միավորվեցին մեկում (գծանկար 1.1).

Գծանկար 1.1. Արդյունավետության ընդհանրական մոդելը[50]

Մեկ այլ կիրառական մոտեցման շրջանակներում դիտարկվում է բյուջետային ծախսումներով հանրային բարիքի ստացման հետևյալ շղթան՝

1. Բյուջետային ծախս.
2. Ռեսուրսի ձեռքբերում.
3. Ծրագրի, միջոցառման, գործընթացի իրականացում.
4. Միջանկյալ արդյունքի ստացում, օրինակ՝ բյուջետային ծառայության տեսքով.
5. Վերջնական արդյունքի ստացում՝ հանրային պահանջմունքը բավարարող բարիքի կամ ծառայության տեսքով:

Նկարագրված շղթայի տարբեր օղակների հարաբերակցությամբ կարելի է դուրս բերել արդյունավետության տարբեր բնութագրիչներ: Ըստ այդմ, արդյունավետությունը կարելի է դիտարկել հետևյալ հարթություններում.

- ռեսուրսային արդյունավետություն. գնահատվում է ռեսուրսի և այն ձեռք բերելու համար կատարված բյուջետային ծախսումների մեծության հարաբերությամբ (այսինքն՝ փուլ 2/փուլ 1),

50 Աղբյուրը՝ Noman Z. Performance Budgeting in the United Kingdom / OECD Journal on Budgeting. 2008. Vol. 8. № 1 (http://www.oecd.org/unitedkingdom/43411005.pdf).

- տնտեսական արդյունավետություն. գնահատվում է բյուջետային ծառայության տեսքով ստացված միջանկյալ արդյունքի (փուլ 4) և կատարված բյուջետային ծախսումների (փուլ 1) հարաբերությամբ,
- սոցիալական արդյունավետություն. գնահատվում է վերջնական արդյունքի (փուլ 5) և բյուջետային ծառայության տեսքով ստացված միջանկյալ արդյունքի (փուլ 4) հարաբերությամբ,
- սոցիալ-տնտեսական արդյունավետություն. բնութագրվում է վերջնական արդյունքի (փուլ 5) և բյուջետային ծախսումների (փուլ 1) հարաբերությամբ,
- արդյունավետություն՝ ըստ ակնկալվող արդյունքի ապահովման. գնահատվում է փաստացի ստացված վերջնական արդյունքի (փուլ 5) և դրա նախատեսված կամ պլանային մակարդակի հարաբերակցությամբ:

Ընդհանրապես, բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման՝ միջազգային պրակտիկայում գործող ամենատարբեր մոտեցումների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել դրանց հետևյալ երկու հիմնական՝ արդյունքային և ծախսային մոդելները (աղյուսակ 5.1).

Աղյուսակ 5.1. Հանրային ծառայության գնահատման մոդելների համեմատական վերլուծությունը

Մոդելի գնահատման չափանիշները	**Մոդելի անվանումը**	
	Ծախսային մոդել (նախահաշվային ֆինանսավորում)	**Արդյունքային մոդել**
Գնահատման օբյեկտը	Հետազոտվում է հատկացված բյուջետային միջոցների յուրացման արդյունավետությունը	Հետազոտվում է կրթության ոլորտում առաջադրված նպատակների և խնդիրների իրականացումը
Գործունեության համար անհրաժեշտ բյուջետային միջոցների ծավալի որոշումը	Բյուջետային հատկացումների անհրաժեշտ ծավալի գնահատման հիմնական չափանիշները. եկամուտների և ծախսերի նախահաշվի նախագիծը, նախորդ ժամանակահատվածի ծախսերի մեծությունը, գնաճի մակարդակը	Բյուջետային միջոցների ծավալը հատկացվում է ակնկալվող արդյունքներին համապատասխան (ցանկալի արդյունքի միավորի հաշվարկային գնից ելնելով)
Արդյունավետության գնահատման բնույթը	Կատարված ծախսերի և հատկացված բյուջետային միջոցների համապատասխանության գնահատում	Ստացված արդյունքի և պլանավորված ցուցանիշների համապատասխանության գնահատում
Գնահատումային ցուցանիշների ստացման հիմնական ուղղությունը	Եկամուտների և ծախսերի հաստատված նախահաշվի և դրա կատարման համապատասխանության ցուցանիշներ, ինչպես նաև բյուջետային միջոցների ոչ նպատակային օգտագործման հայտնաբերված փաստեր	Քանակական և որակական հանձնարարությունների (որոնց իրագործման համար արվել են բյուջետային հատկացումները) կատարման ցուցանիշներ

Բյուջետային ծախսերի արդյունավետության ընկալումների բազմաշերտությունն ու բազմատարբերակայնությունն իր դրոշմն է թողնում արդյունավետության գնահատման մեթոդական մոտեցումների մշակման գործընթացների վրա: Կրթության ոլորտում իրականացվող ծախսերի արդյունավետությունը չի կարող չափվել որևէ առանձին ցուցանիշով, քանի որ այն բնորոշվում է որպես տարատեսակ գործոնների բարդ փոխազդեցության արդյունք: Բոլոր այս գործոնները ազդում են կառավարչական որոշումների կայացման և իրագործման վրա:

5.2.2. Արդյունավետության գնահատման համակարգը

Արդյունավետության գնահատման համակարգերը ըստ էության կառավարման համակարգեր են, որոնք ժամանակի կանոնավոր միջակայքերում հետևում են նախապես ընտրված կատարողականի չափերին՝ նպատակ ունենալով գնահատելու կազմակերպական որոշումների կայացումը, կատարումը և հաշվետվողականությունը[51]: Արդյունավետության գնահատման համակարգերը ներառում են երեք առանցքային բաղադրիչներ՝ տվյալների հավաքում և մշակում, վերլուծություն, գործողություն:

Արդյունավետության չափումն օգտագործվում է գործառնությունների ընթացիկ վիճակն ու սահմանված նպատակների հետ դրա համապատասխանության աստիճանը գնահատելու համար[52]: Արդյունավետության չափումը համակարգի կոնկրետ վիճակի կամ համակարգում տեղի ունեցող կոնկրետ գործառնության պատկերավոր նկարագրության և մշտադիտարկման կարևոր գործիք է հանդիսանում: Այն նաև հնարավորություն է տալիս վիզուալիզացնել կազմակերպական վարքագիծն ու օգնում է կազմակերպությանը՝ հասնել իր ռազմավարական նպատակներին: Արդյունավետության չափումը բնութագրում է նաև կազմակերպության կառավարիչների ու աշխատակիցների վարքագիծը, ինչը հնարավորություն է տալիս բարելավել բիզնես գործընթացները, խթանել դրանցում ժողովրդավարական նորմերի կիրառությունն ու թափանցիկությունը, բարձրացնել սահմանափակ

51 T. H. Poister, Measuring Performance in Public and Nonprofit Organizations, 1st ed. San Francisco: Jossey-Bass, p. 316, (2003).
52 Bhatti, M. I., Awan, H. M., & Razaq, Z. 2014. The key performance indicators (KPIs) and their impact on overall organizational performance. Journal of Quality & Quantity, vol. 48, no. 6, pp. 3127-3143.

ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը[53]:

5.2.3. Արդյունավետության ցուցիչների սահմանումը

Արդյունավետության գնահատումը կատարվում է արդյունավետության ցուցիչների միջոցով: **Արդյունավետության ցուցիչը**[54] փոփոխական է, որը քանակապես արտահայտում է գործընթացի կամ համակարգի արդյունավետությունը՝ տրված թիրախային նպատակի նկատմամբ[55]: Արդյունավետության ցուցիչները առանցքային դերակատարում ունեն կառավարչական որոշումների կատարման տեղեկատվական հենքն ու հիմնավորվածություններն ապահովելու գործում[56]: Կատարողականի գնահատման համակարգը պետք է կենտրոնանա գործընթացների և ոչ թե ամբողջ կազմակերպության կամ կազմակերպական միավորների վրա[57]:

Արդյունավետության ցուցիչները, ըստ էության, քանակական բնութագրիչներ են, որոնք հետազոտվող ոլորտների վերաբերյալ տեղեկատվություն և վիճակագրություն են տրամադրում, հնարավորություն են տալիս իրականացնել դրանց ստատիկ և դինամիկ համեմատություններ՝ հիմնվելով ընդհանրական չափորոշիչների վրա և տեղեկատվություն են տալիս սահմանված նպատակների իրագործման աստիճանի վերաբերյալ[58]: Արդյունավետության ցուցիչների օգտակարության կարևոր նախապայման է հանդիսանում գնահատվող երևույթի կամ ծառայության նպատակի, թիրախների ու խնդիրների հստակ նկարագրությունը[59]:

Արդյունավետության ցուցիչները պետք է բավարարեն հետևյալ երկու կարևոր բնութագրիչների.

1. տեսականորեն սահմանված և բացատրված լինեն, հստակորեն նկարագրեն գնահատվող երևույթի այս կամ այն դիտակետը,

2. կոշտ լինեն ելակետային տեղեկատվության սահմանափակումների նկատմամբ[60]:

Արդյունավետության ցուցիչների կիրառելիության և նպատակահարմարության վճռական բնութագրիչ կամ հատկանիշ է հանդիսանում գնահատվող կազմակերպության կամ ոլորտի առաջընթացի առանցքային գործոններն արտացոլելու և նկարագրելու կարողությունը[61]:

Ընդհանուր առմամբ, արդյունավետության ցուցիչները դասակարգվում են քանակականի և որակականի[62]:

Քանակական ցուցիչներ.

- մուտքի ցուցիչներ (input), որոնք արտացոլում են ծրագրերում, գործունեության մեծ կամ մատուցվող ծառանություններում ներգրավված մարդկային, ֆինանսական և այլ նյութական ռեսուրսները,
- արդյունքի ցուցիչներ (output) – նկարագրում են ստեղծված ապրանքների կամ ծառայությունների քանակը,
- ազդեցության ցուցիչներ (impact) – արտացոլում են նախագծի կամ ծրագրի ամփոփ և երկարաժամկետ ազդեցությունը:
- Որակական ցուցիչներ.
- վերջնարդյունքի ցուցիչներ (outcome) - բնութագրում են ծրագրի, գործողության կամ ծառայության որակը, արտացոլում են շահառուների վրա դրանց ուղղակի, կարճաժամկետ ազդեցությունը,
- գործընթացի ցուցիչներ (process) –ներառում են ծրագրերի, գործողությունների կամ ծառայությունների մատուցման (իրականացման) համար օգտագործված միջոցները,
- ազդեցության ցուցիչներ – նկարագրում են ռազմավարական նպատակների իրագործման ուղղությամբ

53 Pavlov, A., Mura, M., Franco-Santos, M., & Bourne, M. 2017. Modelling the impact of perormance management practices on firm performance: interaction with human resource management practices. Production Planning & Control, vol. 28, no. 5, pp. 431-443.
54 Մասնագիտական գրականությունում հանդիպում են խնդրո առարկա երևույթի տարբեր բնորոշումներ՝ կատարողականի ցուցիչ, կատարողականի ցուցանիշ և այլն: Սույն հաշվետվությունում առավել ճշգրիտ է դիտվում արդյունավետության ցուցիչ եզրույթի օգտագործումը, միաժամանակ չբացառելով նաև նշված մյուս եզրույթների՝ որպես համարժեքների կիրառությունը:
55 Lohman, C., Fortuin, L., & Wouters, M. (2004). Designing a performance measurement system: A case study.
56 Gunasekaran, A., & Kobu, B. 2007. Performance measures and metrics in logistics and sup-ply chain management: a review of recent literature (1995–2004) for research and applications. International journal of production research, vol. 45, no. 12, pp. 2819-2840.
Stricker, N., Echsler Minguillon, F., & Lanza, G. 2017. Selecting key performance indicators for production with a linear programming approach. International Journal of Production Research, pp. 1-13.
Papakiriakopoulos, D. 2006. Performance measurement in supply chain networks. Manag-ing Dynamic Networks, pp. 211-237.
57 Kueng, P. (2000). Process performance measurement system: a tool to support process-based organizations.
58 D. Chalmers, "Defining quality indicators in the context of quality models," (2008).
59 K. Rowe, "Analysing and Reporting Performance Indicator Data: Caress' the data and user beware!," ACER, 2004.
60 C. Propper and D. Wilson, "The Use and Usefulness of Performance Measures in the Public Sector," Oxford Rev. Econ. Policy, vol. 19, no. 2, pp. 250–267, (2003).
A. Bonaccorsi, C. Daraio, B. Lepori, and S. Slipers.ter, "Indicators on individual higher education institutions: addressing data problems and comparability issues," Res. Eval., vol. 16, no. 2, pp. 66–78, (2007).
61 C.-S. Wu and R. J.-C. Cheng, "A study on Key Performance Indicators (KPIs) for Basic Education in Taiwan," in International Conference: Innovative Research in a Changing and Challenging World, , no. December, (2012).
62 D. Chalmers, "Defining quality indicators in the context of quality models," (2008).

այնպիսի առաջընթացը, որը ոչ նյութական բնույթ ունի և համեմատաբար պակաս շոշափելի է:

5.2.4. Արդյունավետության ցուցիչների առավելությունները և թերությունները63.

Արդյունավետության ցուցիչներն ունեն ինչպես զգալի առավելություններ, այնպես էլ առանձին էական թերություններ և սահմանափակումներ, որոնք անպայմանորեն պետք է հաշվի առնվեն կամայական համակարգի կամ երևույթի արդյունավետության գնահատումներում:

Արդյունավետության ցուցիչների առավելություններից են.

- արդյունավետության ցուցիչները արտացոլում են գնահատվող համակարգի կամ հաստատությունը ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև՝ գործունեության արդյունավետությունը[64],
- հնարավորություն են տալիս հասկանալ համակարգի կամ հաստատության ընթացիկ վիճակը, գնահատել կատարվելիք աշխատանքը, իրականացնել արդյունավետ նպատակադրում և գերակայությունների թիրախային սահմանում[65],
- թույլ են տալիս առավել արդյունավետ կերպով կառավարել ծրագրերն ու գործառնությունները,
- տեղեկատվության կարևոր աղբյուր և փաստարկ են հանդիսանում ներդրումների և այլ ֆինանսական ռեսուրսների ներգրավման հարցերում, աջակցում են ռեսուրսների՝ արդյունավետության վրա հիմնված բաշխումների իրականացմանը[66],
- տեղեկատվություն են ապահովում համեմատական վերլուծությունների, դատողությունների և ռացիոնալ որոշումների կայացման համար[67],
- հնարավորություն են տալիս հստակեցնել կամայական խնդրի վերհանման և համակողմանի նկարագրության համար անհրաժեշտ հարցադրումների շրջանակը,
- հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմել համակարգի, ոլորտի կամ էլ առանձին ինստիտուցիոնալ միավորի զարգացման միտումների և ուղղվածության մասին:

Արդյունավետության ցուցիչների թերությունների և սահմանափակումների շարքում հիշատակության արժանի են՝

- արդյունավետության ցուցիչներով օբյեկտիվ իրողության լիարժեք արտացոլման կարողությունը կարող է սահմանափակ լինել[68],
- դրանք օգտակար և կիրառելի չեն, երբ դուրս են բերվում իրենց շրջանակից կամ ընդհանուր համատեքստից[69],
- հաճախ տեղեկատվության ստացումը հիմնվում է ոչ թե անհրաժեշտ, այլ պարզապես մատչելի տվյալների դուրսբերման վրա[70],
- ցուցիչների օգտագործումը կապված է որոշ տեխնիկական և քաղաքական խնդիրների հետ: Տեխնիկական խնդիրների առկայությունը առնչվում է մուտքի և վերջնարդյունքի միջև կապի բնութագրման դժվարությունների հետ, իսկ քաղաքական սահմանափակումները պայմանավորված են այն հանգամանքով, որ շահառուներն ունեն տարբեր գերակայություններ և դրանից ելնելով՝ յուրաքանչյուր առանձին ցուցիչի կարող են տալ այնպիսի կշիռ, որը չի համապատասխանում դրա հարաբերական կարևորությանն, այլ պարզապես բխում է կոնկրետ շահառուի ցանկությունի կամ շահերից[71]:

5.2.5. Արդյունավետության ցուցիչների բազմության ընտրությունը

Արդյունավետության ցուցիչների ընտրությունը բարդ խնդիր է: Գործնականում հաճախ այն տպավորությունն է ստեղծվում, որ արդյունավետության այս կամ այն ցուցիչի ընտրության հիմնական չափանիշը պահանջվող

63 Danijela Markic.(2014).A Review on the Use of Performance Indicators in the Public Sector. TEM Journal, 3(1), 22-28.
64 R. L. Morrill, "The Use of Indicators in the Strategic Management of Universities," OECD High. Educ. Manag., vol. 12, no. 1, (2000).
65 T. H. Poister, Measuring Performance in Public and Nonprofit Organizations, 1st ed. San Francisco: Jossey-Bass, p. 316, (2003).
C.-S. Wu and R. J.-C. Cheng, "A study on Key Performance Indicators (KPIs) for Basic Education in Taiwan," in International Conference: Innovative Research in a Changing and Challenging World, , no. December, (2012).
66 G. Pugh, G. Coates, and N. Adnett, "Performance Indicators and Widening Participation in UK Higher Education," High. Educ. Q., vol. 59, no. 1, pp. 19–39, (2005).
67 C. S. Sarrico, M. J. Rosa, P. N. Teixeira, and M. F. Cardoso, "Assessing Quality and Evaluating Performance in Higher Education: Worlds Apart or Complementary Views?," Minerva, vol. 48, no. 1, pp. 35–54, (2010).
68 K. Rowe, "Analysing and Reporting Performance Indicator Data: Caress' the data and user beware!," ACER, (2004).
69 T. H. Poister, Measuring Performance in Public and Nonprofit Organizations, 1st ed. San Francisco: Jossey-Bass, p. 316, (2003).
70 K. Rowe, "Analysing and Reporting Performance Indicator Data: Caress' the data and user beware!," ACER, (2004).
71 C. S. Sarrico, M. J. Rosa, P. N. Teixeira, and M. F. Cardoso, "Assessing Quality and Evaluating Performance in Higher Education: Worlds Apart or Complementary Views?," Minerva, vol. 48, no. 1, pp. 35–54, (2010).

տվյալի ֆիզիկական առկայությունն է: Մի կողմից սա տրամաբանական է, քանի որ տվյալը կարող է և պետք է հավաքագրվի խելամիտ ջանքերի գործադրման արդյունքում: Մյուս կողմից, սակայն, հարմարավետ և մատչելի ցուցիչների ընտրությունը հնարավորություն է տալիս սահմանել թիրախներ, սակայն դրանք գործնականում լինում են գնահատվող երևույթի տեսանկյունից ոչ համարժեք և ոչ օբյեկտիվ: Ուստի արդյունավետության ցուցիչների ընտրությունը պետք է հիմնված լինի հստակ չափանիշների կատարման վրա:

Արդյունավետության ցուցիչների ընտրության գործընթացը բաղկացած է երեք փուլերից.

1. առաջին փուլը վերլուծական է, որի ընթացքում իդենտիֆիկացվում են այն մարտահրավերները, որոնք հատուկ ուշադրություն են պահանջում և պետք է դիտարկվեն,

2. երկրորդ փուլն ավելի առարկայական է, դրա ընթացքում սահմանվում են արդյունավետության ցուցիչները և կապակցվում են առաջին փուլում վերհանված մարտահրավերներին,

3. երրորդ փուլում ընտրված ցուցիչները ստանդարտացվում և ներկայացվում են հաշվառման, հաշվարկման և գնահատման առումով հարմար տեսքով (այլ կերպ՝ փաստաթղթավորվում են):

Արդյունավետության ցուցիչների ընտրության գործընթացը գործնական իրականացման և առարկայացման տեսանկյունից բավականաչափ բարդ է, ունի իր առանձնահատկությունները և դրանցով պայմանավորված՝ արդյունավետ կիրառության հարցում կարող է առաջ բերել որոշ մտահոգություններ: Մասնավորապես՝

- ցուցիչների ընտրության, կշիռների որոշման և ընդհանրացման հարցերում առկա է հայեցողականության և մանիպուլյացիաների իրականացման լայն տիրույթ,
- ցուցիչների համակարգի մշակման և ներդրման բարդություններով պայմանավորված՝ գործընթացը շահառուներին կողմից կարող է դիտվել որպես համակարգային բարեփոխումների ճանապարհին ավելորդ բեռ,
- ցուցիչների գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքումն ու մշակումը պահանջում են զգալի ժամանակ, նյութական զգալի ծախսումներ և ջանքեր,
- արդյունավետության ցուցիչները հաճախ չեն արտացոլում կոնկրետ հաստատության կամ պատասխանատու կառույցի գործողությունների կապը ստացված վերջնարդյունքի հետ,
- ոչ ճշգրիտ կերպով մշակված և ներդրված ցուցիչները կարող են հանգեցնել կեղծ թիրախների ձևավորման, որոնց իրագործումը կարող է ոչ խաթարել սկզբնական գաղափարի կենսագործումը:

5.2.6. Արդյունավետության հիմնական ցուցիչների սահմանումը

Արդյունավետության գնահատման ցուցանիշների համակարգի մշակման հիմնական բարդություններից մեկը պայմանավորված է ցուցանիշների սկզբնական բազմությունից առավել էականների ընտրության հետ: Վերջինները իրենցից ներկայացնում են արդյունավետության այնպիսի ցուցիչներ, որոնք նկարագրում են կազմակերպության, ոլորտի կամ գնահատվող այլ համակարգի ավելացված արժեքի ստեղծման առանցքային գոտիները: Ընդ որում, դրանք պետք է արտացոլեն ավելացված արժեքի ստեղծումը ոչ միայն կազմակերպության, այլ նաև սպառողների համար[72]: Այս ցուցիչներն էլ հենց կոչվում են արդյունավետության հիմնական ցուցիչներ (ԱՀՑ):

ԱՀՑ-ները կենտրոնանում են կազմակերպության գործունեության այնպիսի ասպեկտների վրա, որոնք առավել նշանակալի են կազմակերպության ընթացիկ և ապագա հաջողությունների համար: ԱՀՑ-ները հաշվարկվում և դիտարկվում են պարբերաբար, կայուն պարբերականությամբ: Եվ եթե դրանք հետ են մնում թիրախից, համակարգերը կամ գործընթացները պետք է ձևափոխությունների ենթարկվեն: Յուրաքանչյուր ԱՀՑ պետք է ներառի հետևյալ բաղադրիչները.

1. ցուցիչի ընթացիկ արդյունքը,

2. թիրախը, որի համար սահմանվել է ցուցիչը,

72 Franceschini, F., Galetto, M., & Maisano, D. 2007. Management by measurement: Design-ing key indicators and performance measurement systems. Berlin: Springer Science & Busi-ness Media.
Bai, C., & Sarkis, J. 2014. Determining and applying sustainable supplier key performance indicators. Supply Chain Management: An International Journal, vol. 19, no. 3, pp. 275-291.
Bose, R. 2006, Understanding management data systems for enterprise performance man-agement. Industrial Management & Data Systems, vol. 106, no. 1, pp. 43 – 59.
Gunasekaran, A., & Kobu, B. 2007. Performance measures and metrics in logistics and sup-ply chain management: a review of recent literature (1995–2004) for research and applica-tions. International journal of production research, vol. 45, no. 12, pp. 2819-2840.

3. ընթացիկ և թիրախային մակարդակների տարբերությունը,

4. ազդանշանային արժեքներ կամ բենչմարքներ:

ԱՀՑ-ների կիրառման փորձը վկայում է, որ դրանք պետք է լինեն.

1. չափելի (քանակապես արտահայտված),

2. վստահելի,

3. ներկայացուցչական,

4. հեշտ և պարզ եզրահանգումներ ձևավորող,

5. ժամանակային միտումները բնութագրող,

6. կազմակերպության ներքին և արտաքին միջավայրում արձանագրվող փոփոխությունները նկարագրող,

7. տվյալների արագ և հեշտ թարմացման հնարավորություն ստեղծող,

8. գծային,

9. կողմնորոշված դեպի բարելավումները (այսինքն՝ դրանք պետք է ուղղված լինեն բարելավումների գնահատմանը և ոչ թե հարմարեցվեն նախապես մշակված պլաններին):

Նկարագրված բաղադրիչների կամ հատկությունների օպտիմալ համակցությունը մեծապես կախված է նրանից, թե դրանցով վերհանվող տեղեկատվություն ինչ նպատակների համար և ո՞ր ուղղություններով է օգտագործվելու:

5.2.7. Արդյունավետության ցուցիչների օգտագործումը հանրային կառավարման ոլորտում

Հանրային հատվածում արդյունավետության ցուցիչների օգտագործման անհրաժեշտությունը պայմանավորված է հանրային կառավարման տարբեր ոլորտներում գործող սուբյեկտների հաշվետվողականության աստիճանի բարձրացման, քանակական և որակական բնութագրիչների համադրման գործունեության արդյունավետության համակողմանի գնահատման խնդիրների լուծման կարևորությամբ:

Հանրային կառավարման ոլորտում արդյունավետության ցուցիչների կիրառությունը հնարավորություն է տալիս՝ կառավարել և բարելավել կատարողականը,

- իրականացնել մշտադիտարկում, քաղաքականության սահմանում, թիրախների սահմանում, գնահատում և փոփոխություն,
- իրականացնել համեմատական բենչմարքինգ,
- ուժեղացնել որոշումների կայացման և իրագործման գործընթացների տեղեկատվական ապահովումը,
- իրականացնել ռեսուրների արդյունավետ բաշխում և բյուջետավորում,
- ապահովել որակի բարելավում,
- հաշվետվություն մշակել նախասահմանված նպատակների իրականացման ընթացքի ու կատարման աստիճանի վերաբերյալ,
- բարձրացնել հանրության հետ հարաբերությունների և հաղորդակցության արդյունավետությունն ու թիրախայնությունը,
- գնահատել հանրային ծառայությունների մատուցման արդյունավետությունը,
- հատակեցնել արդյունավետ գործունեության ապահովմանն առավելագույն նպաստն ունեցած աշխատակիցների շրջանակը և բարձրացնել խրախուսման համակարգերի թիրախայնությունը:

5.2.8. Արդյունավետության ցուցիչների կիրառությունը կրթության ոլորտում

Արդյունավետության ցուցիչների կիրառմամբ արդյունավետության գնահատման մոդելները կարևոր կիրառություն ունեն կրթության ոլորտում: Արդյունավետության գնահատման մոդելների կիրառությունը հնարավորություն է

տալիս բարձրացնել կրթական ծառայություն մատուցող – շահառուներ կապի արդյունավետությունը, կրթական հաստատությունների հաշվետվողականությունը: Մյուս կողմից, հաշվի առնելով կրթական ծառայությունների համակարգում պոտենցիալ շահառուների բավականաչափ լայն շրջանակը, ակնհայտ է դառնում, որ արդյունավետության գնահատման ցուցիչները ևս պետք է բազմազան, տարաբնույթ և տարատեսակ լինեն: Կրթության ոլորտում արդյունավետության ցուցիչների կիրառությունը, որպես կանոն, հետապնդում է երկու հիմնական նպատակ. ա/ դրանք հնարավորություն են տալիս կանխատեսել կրթական գործառնությունների վերջնարդյունքները և բ/ միաժանանակ այդ ցուցիչները նկարագրում են կրթական համակարգի կարևոր բնութագրիչները:

Ներկայումս կրթության ոլորտում արդյունավետության ցուցիչների կիրառությունը հնարավորություն է տալիս՝

- չափել սովորողների ուսման վերջնարդյունքները,
- ընդլայնել կրթական համակարգում ներգրավվածությունը և կիրառել արդարացի մուտքի քաղաքականություն (սովորողները հնարավորություն են ստանում ընտրել ավելի թիրախային ուսումնական հաստատություն),
- իրականացնել կատարողականի և արդյունավետության վրա հիմնված ուսումնական հաստատությունների վարկանիշավորում,
- իրականացնել կրթական հաստատությունների և դրանցում իրականացվող հիմնական գործառնությունների (ուսուցում, հետազոտություն, գիտելիքի փոխանցում) մշտադիտարկում և գնահատում,
- իրականացնել արդյունքների վրա հիմնված բյուջետավորում, ֆինանսավորում և հաշվետվողականություն:

5.2.9. Կրթության ոլորտում արդյունավետության ցուցիչների հիմնական տիպերը

Կրթության ոլորտում օգտագործում է արդյունավետության ցուցիչների տիպերի լայն շրջանակ: Դրանց շարքում առավել լայն կիրառություն ունեն հետևյալները.

- ռեսուրսների տրամադրման և օգտագործման ցուցիչները,
- կրթական հաստատություններ սովորողների մուտքի հարաբերական ցուցանիշները՝ նախադպրոցական, տարրական, միջնակարգ և երրորդ մակարդակներում ներգրավվածության հարաբերական մակարդակները, կրթական ծառայություններից օգտվելու անհավասարության բնութագրիչները,
- մասնակցության ցուցանիշները կրթական բոլոր մակարդակներում, մասնակցության խոչընդոտները, դպրոցից դուրս մնացած երեխաների նկարագիրը,
- կրթությանն ուղղվող ՀՆԱ մասնաբաժինը,
- կրթական մակարդակներից յուրաքանչյուրում հարաբերական ծախսերը՝ մեկ շնչի հաշվով,
- դասարանների չափերը, ուսուցիչ/աշակերտ հարաբերակցությունը,
- ուսուցիչների վերապատրաստումը, մասնակցությունը մասնագիտական զարգացման ծրագրերին,
- կրթական առաջընթացի ցուցիչները և սովորողների առաջընթացի վրա ազդող գործոնների գնահատականները,
- հատուկ կարիք ունեցող սովորողներին կրթական ծառայությունների մատուցման քանակի և որակի ցուցիչները:

5.3. ՀՀ կրթության ոլորտում արդյունավետության հիմնական ցուցիչների առաջարկվող համակարգը և դրա բաղադրիչները

5.3.1. ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում արդյունավետության գնահատման ցուցիչների առաջարկվող համակարգը

Բարձրագույն կրթության ոլորտում արդյունավետության գնահատման տեսանկյունից նպատակահարմար է բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացվող բոլոր գործառնությունները ի սկզբանե տարանջատել երկու խոշոր խմբերի՝

- կրթական և հետազոտական բնույթի գործառնություններ,
- կառավարչական բնույթի գործառնություններ:

Կրթական և հետազոտական բնույթի գործառնություններն, ըստ էության, նկարագրում են բարձրագույն կրթության ծառայությունների բովանդակությունը, իսկ կառավարչական գործառնությունները՝ այդ ծառայությունների մատուցման կազմակերպումը: Բարձրագույն կրթության համակարգի արդյունավետ գործարկումը պահանջում է նշված երկու բաղադրիչների ամբողջական գնահատման գործիքակազմի մշակում և կիրառում:

Կրթական և հետազոտական բնույթի գործառնությունները, իրենց հերթին, կարելի է դասակարգել կրթականի և հետազոտականի, իսկ կառավարչական բնույթի գործառնություններում նպատակահարմար է հիմնական շեշտադրումը կատարել երկու առանցքային ուղղություններով՝ մարդկային ռեսուրս և ֆինանսներ:

Ստորև ներկայացված են հիշատակված ուղղություններից յուրաքանչյուրում գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշները՝ դասակարգված ըստ մուտքի, արդյունքի և հետևանքի ցուցիչների:

5.3.1.1. Կրթական և հետազոտական բնույթի գործառնություններ Հետազոտական գործունեության արդյունավետության ցուցիչներ

Հետազոտական տիրույթում գործունեության գնահատման համար անհրաժեշտ է հիմնական ուշադրությունը դարձնել հետևյալ բաղադրիչներին և ուղղություններին

- հետազոտական անձնակազմ,
- հետազոտական գործունեության տարեկան ծախսեր,
- մասնավոր աղբյուրներից (այդ թվում՝ արտասահմանյան) և պետական բյուջեի միջոցներից ներգրավված հետազոտական դրամաշնորհներ,
- հետազոտական արդյունքի (նաև՝ հետևանքի) մակարդակը և համեմատական գնահատականը:
- Հետազոտական գործունեության արդյունավետության գնահատման նպատակով կարելի է օգտագործել հետևյալ ցուցիչները.

Մուտքի ցուցիչներ.

- գիտական հետազոտություններում ներգրավված անձանց (կրթական հաստատությունների աշխատակիցների, սովորողների, հրավիրյալ հետազոտողների) թվի հարաբերակցությունը սովորողների թվաքանակի նկատմամբ[73],
- արտաքին դրամաշնորհների իրականացնող, արտաքին դրամաշնորհային ծրագրերում ընդգրկված հետազոտողների թիվը,
- ընդունված (հաղթած) դրամաշնորհային հայտերի տեսակարար կշիռը ներկայացրած հայտերի ընդհանուր թվում: Այստեղ նաև նպատակահարմար է դասակարգել դրամաշնորհային հայտերը ներհանրապետականի և արտասահմանյանի, վերջինն էլ դասակարգել ըստ կրթական համակարգի զարգացման աստիճանի: Օրինակ՝ արտասահման ներկայացված դրամաշնորհային հայտերը կարելի է դասակարգել հետևյալ երեք խմբերում՝ ՏՀԶԿ երկրների կրթական համակարգեր, ԵԱՏՄ կրթական համակարգեր, այլ երկրների կրթական համակարգեր: Նպատակահարմարար է յուրաքանչյուր խմբի համար, փորձագիտական եղանակով, սահմանել հարաբերական կարևորությունն արտացոլող կշռային

73 Այստեղ պետք է հաշվի առնել հետազոտություններում ներգրավվածության ինտենսիվությունը՝ որը բնութագրվում է աշխատաժամանակի կառուցվածքում հետազոտական աշխատանքի մասնաբաժնով: Այս գործոնով մուտքի ցուցնաիշը պետք է ճշգրտվի:

գործակիցներ և դրանց կիրառմամբ ստանալ մուտքի ինտեգրալային ցուցանիշ:

- արտասահմանյան կրթական հաստատությունների, հիմնադրամների, կրթական ծառայություններ մատուցող այլ կառույցների հետ գործընկերային հարաբերությունների ինտենսիվությունը (գործընկերություն և փոխգործակցություն ենթադրող պայմանագրերի ընդհանուր թիվը, որը ևս, նախորդ մուտքային ցուցանիշի օրինակով, կարելի է հաշվարկել ինտեգրալային ցուցանիշի կիրառմամբ, որում հաշվի կառնվեն գործընկեր երկրների կրթական համակարգերի զարգացման մակարդակներում առկա տարբերությունները):

Արդյունքի ցուցիչներ.

- գիտական հրապարակումների թվաքանակը. հրապարակումները ևս պետք է դասակարգել ըստ դրա հետազոտական արժեքի: Որպես վերջինի գնահատական կարելի է դիտարկել գիտական պարբերականի ճանաչելիությունը կամ վարկանիշը: Այս հանգամանքն արտացոլելու համար ևս կարող է նպատակահարմար դիտվել կառուցել ինտեգրալային ցուցանիշ, որում բաղադրիչների կշիռները կորոշվեն հետազոտության հրապարակման վայրի, հրատարակչի կամ պարբերականը թողարկող գիտական հաստատության՝ համապատասխան ոլորտում զբաղեցրած դիրքից ելնելով,
- հաշվետու տարում գիտական աստիճան ստացած անձանց թվաքանակը. հաշվի առնելով այն իրողությունը, որ տարբեր ոլորտներում գիտական աստիճան ստացող անձանց մասնակցությունը հետազոտական գործընթացներին տեղի է ունենում տարբեր ինտենսիվությամբ, ուստի այս ցուցանիշի պարագայում ևս հարկ է կառուցել ինտեգրալային ցուցիչ, որում ելակետային ցուցանիշ կհանդիսանան հաշվետու տարում գիտական աստիճան ստացածների թվաքանակները՝ ըստ առանձին ոլորտներին, իսկ կշիռները կհաշվարկվեն ոլորտներից յուրաքանչյուրում նորաթուխ գիտնականների հետազոտական ակտիվության՝ նախորդ տարիների արդյունքների և փորձագիտական դիտարկումների հիման վրա ստացված գնահատականներից ելնելով,
- մտավոր սեփականության օգտագործման ինտենսիվությունը. այն կարելի է չափել հաշվետու տարվա ընթացքում կրթական և հետազոտական հաստատություններում ստեղծված նորարարական կազմակերպությունների, ընկերությունների թվով, նաև՝ հետազոտական արդյունքների համար տրված արտոնագրերի և պատենտների թվաքանակի ցուցանիշներով[74]:
- գիտակրթական հաստատությունների շրջանավարտների կողմից հիմնված ընկերությունների թիվը. այս ցուցանիշը ընդհանուր պատկերացում է տալիս գիտելիքից կամ հետազոտական կարողությունից կոնկրետ տնտեսական օգուտի ստացման մասին[75]:

Հետևանքի ցուցիչներ.

- գիտական և հետազոտական արդյունքին հղումների քանակը,
- անդամակցությունը արտասահմանյան կրթական հաստատությունների հետազոտական խորհուրդներում, արտասահմանյան պարբերականների խմբագրական խորհուրդներում (այստեղ ևս նպատակահարմար է դիտվում գնահատականը կառուցել ոչ թե անդամակցության պարզ թվաքանակից ելնելով, այլ օգտագործել ինտեգրալային ցուցիչ, որում առավել հեղինակավոր միջազգային բուհերի հետազոտական, մասնագիտական խորհուրդներում, և կոնկրետ ոլորտներում ճանաչում ունեցող պարբերականների խմբագրական կամ փորձագիտական խորհուրդներում մասնակցության նշանակալիությունը կշեշտվի՝ համեմատաբար ավելի բարձր կշռային գործակցի կիրառմամբ),
- հետազոտական աշխատանքների համար շնորհված միջազգային մրցանակների, պարգևների, պատվոգրերի թիվը,
- հետազոտական գործունեության արտաքին փորձագիտական գնահատականը, ստացված միջազգային պրակտիկայում լայն կիրառություն ունեցող մեթոդներից որևէ մեկով:

74 Այս ցուցանիշներով, ըստ էության, փորձ է արվում գնահատել մտավոր սեփականության արդյունքների առևտրայնացման մակարդակը: Այս տեսանկյունից դրանց ամբողջական և լիարժեք պատկեր չեն տալիս: Ընդհանուր առմամբ, ցուցիչի կատարելագործումը պետք է տեղի ունենա մտավոր սեփականության օգտագործումից ստացվող տնտեսական օգուտի չափը գնահատող ցուցանիշների համակարգի մշակման ուղղությամբ:
75 Մյուս կողմից, ցուցանիշի հաշվարկը էական բարդություններով կարող է ուղեկցվել: Շատ դժվար կլինի այն գնահատել: Նաև՝ պարզել, թե ստացած հմտության կամ գիտելիքի որ մասն է օգտագործվել ընկերությունը հիմնելիս կամ զարգացնելիս:

5.3.1.2. Կրթական գործունեության արդյունավետության ցուցիչներ

Մուտքի ցուցիչներ.

- բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունվածների տեսակարար կշիռը համապատասխան տարիքային խմբի բնակչության թվում,
- բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվածների հարաբերակցությունը ավագ դպրոցի շրջանավարտների նկատմամբ,
- հայաստանյան բուհեր ընդունված օտարերկյա ուսանողների թվաքանակը և նրանց տեսակարար կշիռը բուհ ընդունվածների ընդհանուր կառուցվածքում: Ըստ որում, այստեղ ևս կարելի է մշակել և կիրառել ընդհանրական ցուցիչ, որում ավելի մեծ կշիռներ կտրվեն կրթական համակարգի զարգացման համեմատաբար ավելի բարձր մակարդակ ունեցող երկրներից եկած ուսանողներին, նաև՝ ոչ հայկական էթնիկ ծագում ունեցող ուսանողներին,
- բարձրագույն կրթության երկրորդ աստիճան ընդունվածների տեսակարար կշիռը առաջին աստիճան ավարտածների թվաքանակում,
- բարձրագույն կրթության երկրորդ աստիճան ընդունված օտարերկրյա ուսանողների թվաքանակը և նրանց տեսակարար կշիռը նույն աստիճանն ընդունված բոլոր ուսանողների կառուցվածքում,
- բարձրագույն կրթության առաջին և երկրորդ աստիճանների կրթական ծրագրերի թիվը,
- բարձրագույն կրթության առաջին և երկրորդ աստիճանների կրթական ծրագրերում սովորողների համակենտրոնացման աստիճանը (Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը),
- արտասահմանյան կրթական հաստատությունների հետ համատեղ բարձրագույն կրթության առաջին և երկրորդ աստիճանների կրթական ծրագրերի թիվը, դրանցում սովորող ուսանողների թվաքանակը և տեսակարար կշիռը՝ ուսանողների ընդհանուր թվի նկատմամբ,
- կրթական ծառայությունների մատուցման մեջ ներգրավված պրոֆեսորադասախոսական անձնակազմի՝ կրթական գործընթացներում մասնակցության ինտենսիվությունը: Կարելի է չափել պրոֆեսորադասախոսական անձնակազմի մեկ ներկայացուցչի հաշվով միջին ժամային ծանրաբեռնվածությունը՝ արտահայտված աշխատանքային դրույքով,
- ուսանող/դասախոս հարաբերակցությունը,
- կրթական ծառայության մատուցման ծախսերի կառուցվածքում պրոֆեսորադասախողական անձնակազմի աշխատանքի վարձատրության ծախսերի հարաբերակցությունը ոչ աշխատավարձային ծախսերի (վերապատրաստումներ, սարքավորումներ, ՏՀՏ ներդրում ուսումնական գործընթացում, գրադարանային ծառայություններ, սովորողների հետ ուղղակիորեն առնչվող այլ ծախսեր),
- ուսումնառության գործընթացում սովորողների համար մատչելի (բաժանորդագրության կամ այլ եղանակով) միջազգային պարբերականների թիվը,
- կրթական նյութերի և ռեսուրսների առկայությունն ու բազմազանությունը,
- հետազոտական, ուսուցողական և այլ բնույթի ենթակառույցների, լաբորատորիաների առկայությունը և համարժեքությունը կրթական ու հետազոտական կարիքներին,
- կրթական ծառայություններ մատուցող անձնակազմի (պրոֆեսորադասախոսական անձնակազմ) թվաքանակի հարաբերակցությունը սովորողների թվի նկատմամբ,
- կրթական գործընթացներն ապահովող օժանդակ անձնակազմի որակավորումն ու մասնագիտական համարժեքությունը,
- կրթական ոլորտում առանձնահատուկ ձեռքբերումների համար մրցանակներ ունեցող աշխատողների թվի հարաբերակցությունը ուսուցանող անձնակազմի ընդհանուր թվաքանակի նկատմամբ,
- արտաքին համատեղությամբ աշխատող, գիտական աստիճան և կոչում ունեցող աշխատողների հարաբերակցությունը պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընդհանուր թվի նկատմամբ,
- օտարերկրյա բուհերն ու կրթական այլ հաստատությունները ներկայացնող դասախոսների հարաբերակցությունը կրթական համակարգում աշխատողների ընդհանուր թվի նկատմամբ,
- օտարերկրյա բուհ-երում կրթական աստիճան ստացած դասախոսների թվի հարաբերակցությունն ընդհանուրի նկատմամբ,

- արտասահմանում վերապատրաստում անցած դասախոսների թվի հարաբերակցությունն ընդհանուրի նկատմամբ:

Արդյունքի և հետևանքի ցուցիչներ.

- կրթական հաստատությունների շրջանավարտների թվաքանակը,
- կրթական և առարկայական ծրագրերի վերանայման, կատարելագործման ինտենսիվությունը,
- միջազգային կրթական և փոխանակության ծրագրերի ընդհանուր թիվը,
- երկրում կազմակերպված միջազգային գիտաժողովների ընդհանուր թիվը,
- կրթական համակարգում սովորողների արդյունքները՝ ըստ ստանդարտացված և մասնագիտական քննությունների,
- կրթական հաստատությունների շրջանավարտների բավարարվածությունը ստացած կրթական ծառայություններով: Այս ցուցանիշը նպատակահարմար է գնահատել կրթական հաստատությունների շրջանավարտների ընտրանքային հետազոտության արդյունքների վրա հիմնվելով: Հետազոտությունները պետք է ապահովեն ընտրանքի պատշաճ ծավալ և անցկացվեն պարբերական սկզբունքով, տարեկան հաճախականությամբ,
- կրթական հաստատությունն ավարտելուն հաջորդող մեկ տարված ընթացքում աշխատանքի անցած շրջանավարտների տեսակարար կշիռն ընդհանուրի նկատմամբ,
- ավարտելուն հաջորդող մեկ տարված ընթացքում աշխատանքի անցած դիպլոմավորված մասնագետների աշխատանքային առաջին տարվա միջին աշխատավարձի հարաբերությունը հանրապետությունում աշխատանքի վարձատրության միջին մակարդակի նկատմամբ, ըստ առանձին ոլորտների,
- կրթական հաստատությունը ավարտելուց մեկ տարվա ընթացքում աշխատանք գտած շրջանավարտների մասնագիտական կարողությունների և հմտությունների գնահատականը գործատուների կողմից:
  Այս ցուցանիշի հաշվարկման համար անհրաժեշտ է որոշակի պարբերականությամբ իրականացնել սոցիոլոգիական հարցումներ:

5.3.1.3. Կառավարչական բնույթի գործառնություններ

Ֆինանսական ցուցիչներ.

- հետազոտական գործունեությունից ստացված եկամտի մեծությունը և տեսակարար կշիռը կրթական հաստատության եկամտի ընդհանուր կառուցվածքում (ներառյալ եկամուտները հետազոտական դրամաշնորհներից, ոչ դրամաշնորհային պայմանագրերից, հետազոտական արդյունքի առևտրայնացումից (արտոնագրերից, պատենտներից, լիցենզիաներից և այլն)),
- պետական բյուջեից ստացվող հատկացումների տեսակարար կշիռը կրթական հաստատությունների ընդհանուր եկամուտների կառուցվածքում,
- այլ աղբյուրներից (սովորողների վարձավճարներից և պետական բյուջեից արվող հատկացումների բացի) ստացված եկամուտների տեսակարար կշիռը կրթական հաստատության ընդամենը եկամուտների կառուցվածքում,
- անուղղակի և օժանդակ ծախսերի հարաբերակցությունը կրթական հաստատության ծախսերի ընդհանուր կառուցվածքում,
- վարչական ծախսերի մեծությունը մեկ ուսանողի հաշվով,
- հիմնական միջոցների պահպանման ծախսերը մեկ ուսանողի հաշվով,
- հիմնական միջոցներում և ենթակառույցներում կատարված ծախսերի հարաբերակցությունը ընդհանուր ծախսերի նկատմամբ:

Մարդկային կապիտալի ցուցիչներ.

- լրիվ դրույքով աշխատողների տեսակարար կշիռն աշխատողների ընդհանուր կառուցվածքում,
- գիտական աստիճան ունեցող աշխատակիցների տեսակարար կշիռը պրոֆեսորադասախոսական կազմում (այստեղ կարելի է կիրառել ինտեգրալային ցուցիչ՝ գիտական աստիճան ունեցողներին դասակարգելով ըստ ՀՀ-ում և արտասահմանում գիտական աստիճանը ստացածների, վերջին խումբը, իր հերթին, բաժանելով ըստ զարգացման բարձր, միջին և ցածր մակարդակ ունեցող կրթական համակարգերում գիտական աստիճանը ստացածների, և ըստ առանձնացված խմբերի նշանակալիության մակարդակի, սահմանել համապատասխան կշռային գործակիցներ),
- պրոֆեսորադասախոսական կազմի սեռային ասիմետրիայի մակարդակը,
- պրոֆեսորադասախոսական կազմի ընդհանրական գնահատականն ըստ տարիքային խմբերի բաշխվածության մակարդակի,
- պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի հարաբերակցության գործակիցը,
- անձնակազմի ուսուցման և վերապատրաստման ծախսերը՝ մեկ աշխատողի հաշվով
- անձնակազմի ուսուցման և վերապատրաստման ծախսերը՝ կրթական հաստատության ընդհանուր ծախսերի կառուցվածքում,
- ընթացիկ տարում վերապատրաստում անցած վարչական աշխատողների թվաքանակը և տեսակարար կշիռը վարչական աշխատողների ընդհանուր թվում,
- մրցութային և մրցակցային նշանակումների տեսակարար կշիռը նշանակումների ընդհանուր կառուցվածքում,
- աշխատակիցների կատարողականի գնահատման համակարգ ունեցող, կատարողականի հիման վրա ծառայողական առաջխաղացման և պարգևատրումների չափի դասակարգման մեխանիզմներ կիրառող կրթական ծառայություններ մատուցող հաստատությունների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ,
- կատարողականի ցուցիչների կիրառմամբ գործունեության արդյունավետության գնահատման համակարգ ներդրած կրթական հաստատությունների տեսակարարար կշիռն ընդհանուրի մեջ,
- բիզնես գործընթացների և առօրեական գործառնությունների ավտոմատացման համակարգեր ներդրած կրթական հաստատությունների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ:

5.3.2. Հանրակրթության ոլորտի արդյունավետության ցուցիչների առաջարկվող համակարգը

Մեր կողմից մշակվել է նաև հանրակրթության ոլորտում արդյունավետության ցուցիչների համակարգ: Ցուցիչները ներկայացված են ըստ հետևյալ խմբերի.

- դպրոցներ,
- հագեցվածություն,
- ֆինանսներ,
- աշակերտներ,
- ընդգրկվածություն,
- ուսուցիչներ,
- արդյունքներ:

Ստորև ներկայացված են արդյունավետության ցուցիչների բաղադրիչները՝ ըստ դիտարկված խմբերի:

1. դպրոցներ

- դպրոցների թվաքանակն ըստ հանրակրթության մակարդակների,
- աշակերտների թվաքանակը մեկ դպրոցի հաշվով, ըստ դպրոցների խմբերի,
- դպրոցների շենքային պայմանները (միջին վիճակագրական դպրոցի շենքի մակերեսը): Ցուցանիշը կարելի է հաշվարկել առանձին-առանձին՝ ըստ քաղաքային և գյուղական համայնքների: Նաև՝ շենքի մակերեսի ցուցանիշով դպրոցները դասակարգելով, օրինակ, երեք խմբերի (փոքր, միջին, մեծ) կարելի

է հաշվարկել խմբերից յուրաքանչյուրում մեկ դպրոցի շենքի միջին մակերեսը, նաև՝ աշակերտների թվաքանակը՝ մեկ դպրոցի հաշվով:

2. հագեցվածություն.

- դպրոցների հագեցվածությունը համակարգիչներով (համակարգիչների թվաքանակի 100 սովորողի հաշվով),
- համակարգիչների նորացման ինտենսիվությունը,
- դպրոցների հագեցվածությունը էլեկտրոնային գրատախտակներով,
- դպրոցների հագեցվածությունը արդիական կրթական այլ սարքավորումներով,
- դպրոցների հագեցվածությունը արդիական լաբորատորիաներով,
- դպրոցներում համակարգչային ծրագրային փաթեթների և այլ software կիրառմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման ինտենսիվությունը:

3. ֆինանսներ.

- դպրոցների ծախսը մեկ աշակերտի հաշվով,
- աշխատավարձի գծով ծախսերի մեծությունը մեկ աշակերտի հաշվով,
- վարչական և սպասարկող անձնակազմի աշխատանքի վարձատրության ծախսերը մեկ աշակերտի հաշվով,
- շենքի պահպանման ծախսերը մեկ աշակերտի հաշվով,
- կրթական սարքավորումների ձեռքբերման և պահպանման ծախսերը մեկ աշակերտի հաշվով,
- նվիրատվությունների տեսակարար կշիռը դպրոցի ընդամենը եկամուտների նկատմամբ
- ուսուցչական անձնակազմի միջին աշխատավարձը:

4. աշակերտներ.

- աշակերտների թիվը տարրական դպրոցի մեկ դասարանում,
- աշակերտների թիվը հիմնական դպրոցի մեկ դասարանում,
- աշակերտների թիվը ավագ դպրոցի մեկ դասարանում,
- կարելի է սահմանել հանրակրթության երեք մակարդակներից յուրաքաչյուրում մեկ դասարանի հաշվով աշակերտների խմբի նպատակահարմար (օպտիմալ) միջակայքը և որպես արդյունավետության ցուցիչ դիտարկել այդ միջակայքում գտնվող աշակերտների թվով դասարանների (նաև՝դրանցում սովորողների թվի) հարաբերակցությունն ընդհանուրի նկատմամբ,
- գերբեռնված դասարաններում աշակերտների թվի հարաբերությունն ընդհանուրի նկատմամբ,
- գերբեռնված դասարանների թվի հարաբերությունն ընդհանուրի նկատմամբ,
- թերբեռնված դասարանների թվի հարաբերությունն ընդհանուրի նկատմամբ,
- թերբեռնված դասարաններում սովորող աշակերտների թվի հարաբերությունն ընդհանուրի նկատմամբ:

5. ընդգրկվածություն.

- աշակերտների ընդգրկվածությունը տարրական դասարաններում (% համապատասխան տարիքի երեխաների թվի նկատմամբ),
- աշակերտների ընդգրկվածությունը հիմնական դպրոցում,
- ընդգրկվածությունն ավագ դպրոցում
- երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում,
- ուսումնական տարվա ընթացքում դպրոցից տարբեր պատճառներով դուրս եկող աշակերտների տեսակարար կշիռն աշակերտների ընդհանուր թվում, ըստ հանրակրթության մակարդակների, նաև՝ դպրոցից դուրս գալու հիմնական պատճառների,
- հատուկ կարիքներ ունեցող աշակերտների թիվը և տեսակարար կշիռն աշակերտների ընդհանուր թվում,
- հատուկ կարիք ունեցող երեխաների համար ուսումնառության պատշաճ պայմաններ ապահովելու համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ կարողություններ ունեցող դպրոցների թվաքանակը և տեսակարար կշիռը դպրոցների ընդհանուր թվում:
- Այս խմբի ցուցանիշները նպատակահարմար է հաշվարկել առանձին-առանձին ըստ գյուղական և

քաղաքային համայնքների դպրոցների, սահմանամերձ համայնքների դպրոցների:

6. ուսուցիչներ.

- ուսուցիչների միջին տարիքը, ըստ հանրակրթության տարբեր մակարդակների,
- ուսուցիչների սեռային հարաբերակցության գործակիցը,
- 1 ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը, ըստ առանձին մասնագիտությունների և հանրակրության մակարդակների,
- գիտական աստիճան ունեցող ուսուցիչների տեսակարար կշիռը,
- գիտական կոչում ունեցող ուսուցիչների տեսակարար կշիռը,
- մասնագիտական վերապատրաստում անցած ուսուցիչների տեսակարար կշիռը (կարելի է գնահատել տարբեր ցուցանիշներ՝ ըստ վերապատրաստման ինտենսիվության, տևողության, վերապատրաստումն իրականացրած հաստատության),
- ուսուցիչ/աշակերտ հարաբերակցությունը, ըստ հանրակրության մակարդակների, քաղաքային և գյուղական (առանձին՝ նաև սահմանամերձ) համայնքների դպրոցներում,
- ուսուցչական կազմի թվաքանակի հարաբերակցությունը վարչական և օժանդակ անձնակազմի թվաքանակի նկատմամբ,
- ուսուցիչների որակավորման և մասնագիտական կարողությունների գնահատման համակարգ ներդրած դպրոցների թիվը,
- նախորդ կետում նշված դպրոցներում ուսուցիչների որակավորման և մասնագիտական կարողությունների միջին գնահատականի փոփոխության տարեկան տեմպը,
- մեկ դրույքը գերազանցող ծանրաբեռնվածությամբ աշխատող ուսուցիչների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ,
- կես դրույք ծանրաբեռնվածությամբ աշխատող ուսուցիչների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ,
- քառորդ դրույք ծանրաբեռնվածությամբ աշխատող ուսուցիչների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ,

7. արդյունքներ

- գիտելիքի ստուգման միասնական (ներհայաստանյան) ստուգատես-քննություններից աշակերտների ստացած միջին գնահատականը (ըստ քաղաքային և գյուղական համայնքների դպրոցների, հանրակրթության տարբեր մակարդակների),
- կրկնուսույցի մոտ պարապող աշակերտների թիվը և տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ,
- դպրոցական ավարտական քննությունների միջին գնահատականը (դասակարգված ըստ քաղաքային և գյուղական համայնքների դպրոցների) և տարեկան փոփոխության տեմպը,
- բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելության միասնական քննությունների միջին գնահատականը (ըստ առանձին առարկաների) և դրա տարեկան փոփոխության տեմպը,
- բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվածների հարաբերակցությունը ավագ դպրոցների շրջանավարտների նկատմամբ,
- միջազգային օլիմպիադաներում մրցանակային տեղեր զբաղեցրած աշակերտների թիվը և տեսակարար կշիռը,
- միջազգային օլիմպիադաներում մրցանակակիրներ տված դպրոցների թիվը և տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ:

5.4. Արդյունավետության ցուցիչների ընդհանրացման մոտեցումները

5.4.1. Ցուցանիշների ինտեգրման անհրաժեշտությունը և ընդհանուր խնդրադրումը

Արդյունավետության ցուցիչների լայն շրջանակի առկայությունը թիրախային կառավարչական որոշումների կայացման հարցում որոշ դժվարություններ է ստեղծում: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է դիտվում արդյունավետության մասնակի ցուցիչները ինտեգրել մեկ միասնական կամ մի քանի խմբային ցուցիչներում, որոնք էլ, ըստ էության, կհանդիսանան արդյունավետության հիմնական ցուցիչների գնահատականները կամ արժեքները: Ստորև ներկայացված են այս խնդրի լուծման ուղղությամբ մեր մոտեցումները:

Առավել ընդհանուր մոտեցմամբ, ինտեգրալային ցուցիչը, որը բնութագրում է առանձին տարածքների շրջակա միջավայրի վիճակը, կարելի է դիտարկել որպես որոշակի կշռային գործակիցներով առանձին ցուցանիշների գծային կոմբինացիա:

Ինտեգրալային ցուցիչների մեջ տեղեկատվության ընդհանրացման ժամանակ հիմնական խնդիրը կշռային գործակիցների ընտրությունն է: Պարզագույն էգալիտար մոտեցումը ենթադրում է բոլոր ելակետային ցուցանիշների համար հավասարաչափ կշիռների օգտագործում: Բացի այդ, կշիռները կարող են սահմանվել փորձագիտական գնահատման եղանակով՝ ցուցանիշների նշանակությունից ելնելով: Նշված մոտեցումները, որոշակի իմաստով, սուբյեկտիվ են, քանի որ հիմնվում են փորձագետների կամ հետազոտողի կարծիքի վրա:

Գոյություն ունի նաև սկզբունքորեն այլ, այսպես կոչված՝ «սուբյեկտիվիստական» մոտեցում, որը հիմնված է գործոնային վերլուծության գաղափարախոսության վրա:

Օբյեկտիվիստական մոտեցման դրական կողմերի թվում կարելի է նշել ինտեգրալային ցուցիչների համակարգի կառուցման գործընթացից աշխատատար, կոնկրետ առարկայական ոլորտներում հատուկ գիտելիք պահանջող ոչ միանշանակ փորձագիտական ընթացակարգերի բացառումը: Սակայն այս առավելությունները միաժամանակ կարող են դասվել նաև թերությունների թվին, քանի որ ելակետային ցուցանիշներից յուրաքանչյուրի որակավորված փորձագիտական նշանակալիության գնահատումը, դրանց գիտականորեն հիմնավորված նորմատիվ արժեքների սահմանումը մեծացնում են ստացվող արդյունքների գործնական արժեքը:

Տեղեկատվության ագրեգացման գործընթացը իրագործվում է հետևյալ կերպ.

- առաջին մակարդակում, ըստ առանձնացված խնդիրների, սահմանվում են ցուցանիշների կշիռները՝ ըստ յուրաքանչյուր խնդրի համաթիվ կառուցելու համար,
- երկրորդ մակարդակում կշռվում են միջանկյալ ինտեգրալային ցուցիչները և որոշվում է ինտեգրալ ցուցիչները ըստ առանձնացված ոլորտների,
- երրորդ մակարդակում կշռվում են երկրորդ մակարդակի ինտեգրալային ցուցիչները և սահմանվում է միասնական ինտեգրալային ցուցիչ:

5.4.2. Արդյունավետության գնահատումը համաթվային մոտեցմամբ

Սույն մոտեցման շրջանակներում արդյունավետության համալիր գնահատականը կառուցվում է հետևյալ կերպ՝ հետազոտողների կողմից ընտրվում են ոլորտում ստեղծված արդյունքն առավել համարժեք կերպով արտացոլող ցուցանիշներ, դրանք նորմավորվում են, այսինքն՝ բերվում են հարաբերական, բնեղեն չափում չունեցող ցուցանիշների, այնուհետև որպես ընդհանրական գնահատական հաշվարկվում է դրանց հանրագումարը, պարզ կամ էլ կշռված միջինը[76]:

Նկարագրված մոտեցման պարզությամբ հանդերձ, այն ոչ բոլոր հետազոտողների կողմից է անվերապահորեն ընդունվում: Մասնավորապես, որպես թերություն կամ խոցելի կողմ նշվում է, որ չնայած սկզբնական ցուցանիշների նորմավորումը հնարավորություն է տալիս դրանք բերել միևնույն չափողականության՝ այդ կերպ լուծելով տարբեր չափողականություն ունեցող ցուցանիշները նույն հարթություն բերելու խնդիրը: Այնուհանդերձ, այս կերպ լուծվում է խնդրի տեխնիկական ասպեկտը, միևնույն ժամանակ տարբեր իմաստներ, նշանակություն, գործածման ուղղվածություն ունեցող ցուցանիշների մեկտեղման արդյունքում ստացված ընդհանրական ցուցանիշի մեկնաբանության առումով լուրջ խնդիր է ի հայտ գալիս: Այսինքն՝ առկա է ի սկզբանե անհամատեղելի ցուցանիշների արհեստականորեն միավորման արդյունքում իմաստազուրկ և տնտեսագիտական տրամաբանության չենթարկվող գնահատականի ստացման ռիսկը:

Որպես սույն խնդրի լուծման տարբերակ առավել հաճախ առաջարկվում է կառուցել ոչ թե մեկ համաթիվ՝ ըստ հետազոտվող բոլոր ուղղությունների և ոլորտների, այլ տարբեր ոլորտային համաթվեր, որոնցից յուրաքանչյուրում ներառված կլինեն իմաստով և նշանակությամբ իրար մոտ ցուցանիշներ: Այս պարագայում, ստացված ոլորտային համաթվերը կունենան հստակ տրամաբանություն և իմաստ:

Նկարագրված մոտեցման մեկ այլ հիմնական թերություն է հանդիսանում ելակետային ցուցանիշների հավաքածուի ընտրության հարցում առկա սուբյեկտիվության մեծ աստիճանը: Ընդհանրական համաթվի բաղադրիչ ցուցանիշների կազմի սուբյեկտիվ, հստակորեն չտրամաբանված փոփոխությամբ կարելի է հասնել հետազոտողի համար ընդունելի կամայական արդյունքի: Ուստի համաթվի կառուցման մեթոդաբանությունում լուրջ տեղ պետք է հատկացվի մեկնարկային ցուցանիշների ընտրության գիտականորեն հիմնավորված մեթոդի հստակեցմանը:

76 Տարբեր հետազոտություններում տարբեր կերպ է կատարվում ընդհանրացումը: Համենայն դեպս, հետազոտողն ընտրում է ընդհանրական գնահատականի դուրսբերման եղանակներից որևէ մեկը:

5.4.3 Արդյունավետության գնահատման էկոնոմետրիկական մեթոդները

Արդյունավետության ընդհանրական գնահատականների կառուցումը հենվում է այն տրամաբանության վրա, որ արդյունավետությունը պայմանավորված է հետազոտվող ոլորտի վերջնարդյունքի առանձին բաղադրիչների թողարկման արդյունավետության: Յուրաքանչյուր ուղղության արդյունավետության մակարդակը կամ էլ այն պայմանավորող հենքային գործոնները բնութագրվում են ամենատարբեր ցուցանիշներով, որոնց միջև, ակնհայտորեն, առկա է փոխկապվածություն: Ուստի տրամաբանական է դիտվում այդ ցուցանիշների փոխկապվածության հետազոտման և գնահատման խնդրի առաջադրումը, դրա լուծման համար վիճակագրական ու էկոնոմետրիկ մեթոդների և մոդելների կիրառումը:

Այս համատեքստում կարելի է առանձնացնել արդյունավետության հետազոտման ու գնահատման երկու հիմնական մոտեցումներ.

1. Հետազոտության առարկա են հանդիսանում արդյունավետության տարբեր ասպեկտները, արդյունքի ստեղծման տարբեր փուլերը նկարագրող ցուցանիշների միջև պատճառահետևանքային կապերը, որոնց վերհանման արդյունքում կառուցվում են համապատասխան էկոնոմետրիկ մոդելներ:

2. Հետազոտության առարկա են հանդիսանում արդյունքի ստեղծմանը բնորոշ կառուցվածքային և այլ տիպի օրինաչափությունները, որոնք վերհանվում ու մոդելավորվում են՝ առանց արդյունավետության գործոնների և ցուցանիշների միջև առկա պատճառահետևանքային կապերի խորքային վերլուծության: Այս մոտեցումը իրագործվում է, մասնավորապես, կլաստերային և գործոնային վերլուծության գործիքակազմի կիրառմամբ:

Առաջին մոտեցման թերություն է հանդիսանում այն, որ հնարավոր չէ դիտարկել, վերլուծել արդյունավետության վրա ներգործող բոլոր գործոնները: Բացի այդ, որոշ էական գործոններ էլ կարող են ընդհանրապես չներառվել մոդելներում՝ հետազոտողի կողմից դրանց ոչ բավարար ուսումնասիրման կամ էլ ռեգիոնալ զարգացման վրա դրանց ազդեցությանն առնչվող տեսական դատողությունների ոչ լիարժեքության պատճառով: Ի հավելումն նշվածի, էկոնոմետրիկ մոդելները մեծ թվով վիճակագրական տվյալների հավաքագրում և վերլուծություն են ենթադրում: Մեր իրողությունների պայմաններում, երբ վիճակագրական ցուցանիշների ժամանակային շարքերը համեմատաբար կարճ են և տարածքային միավորներն էլ մեծ թիվ չեն կազմում, այդ իսկ պատճառով վիճակագրական դիտարկումների թիվը հաճախ բավարար չի լինում լիարժեք բազմաչափ էկոնոմետրիկ մոդելի կառուցման և պարամետրական գնահատման համար:

Երկրորդ մոտեցման շրջանակներում կիրառվող մեթոդները և գործիքները հնարավորություն են տալիս էականորեն կրճատել արդյունավետության ցուցանիշների չափողականությունը՝ դրանց բնութագրող լատենտային գործոնների բացահայտման միջոցով: Բացի այդ, հետազոտվող օբյեկտների չափողականության կրճատման համար լայն կիրառություն ունեն կլաստերացման մեթոդները, որոնք հնարավորություն են ընձեռնում իրականացնել օբյեկտների օպտիմալ դասակարգում (կլաստերացում)՝ ըստ մեծ թվով հետազոտվող ցուցանիշների: Նշվածով հանդերձ, սույն մոտեցման թերություն կարելի է համարել դիտարկվող ցուցանիշների միջև առկա կապերի խորքային վերլուծության և գնահատման իրականացման էական սահմանափակումները:

Այս համատեքստում, մեր մոտեցմամբ, լավագույն արդյունք կարող է ապահովել նկարագրված մոտեցումների համադրությունը: Այսինքն՝ ընտրվում են արդյունավետության մակարդակը բնութագրող մեծ թվով ցուցանիշներ, որոնց չափողականությունը նվազեցվում է երկրորդ մոտեցման գործադրմամբ, և վերհանված առավել էական ցուցանիշների կամ գործոնների հիման վրա իրականացվում է արդյունավետության էկոնոմետրիկ մոդելների կառուցում:

5.4.4. Արդյունավետության ցուցիչների ընդհանրացումը գործոնային վերլուծության գործիքակազմի կիրառմամբ

Գործոնային վերլուծությունը հնարավորություն է տալիս վերհանել դիտարկվող օբյեկտների ներկայացված ցուցանիշներում առկա թաքնված (լատենտային) բնութագրիչները (գործոնները): Լատենտային գործոնների և ելակետային ցուցանիշների կապը ներկայացվում է գործոնային ծանրաբեռնվածությունների միջոցով, որոնք, կարելի է դիտարկել նաև որպես արդյունքային չափանիշի ձևավորման գործընթացում մասնակի, ելակետային ցուցանիշների ներգրավվածության աստիճանի, դրանց հարաբերական կարևորության գնահատականներ:

Գործոնային վերլուծության հավասարումն ունի հետևյալ տեսքը.

$$x_i = \sum_{j=1}^{m} \alpha_j f_j + e_i, \qquad i = \overline{1,k};\ j = \overline{1,m}$$

որտեղ՝

x_i - դիտարկվող փոփոխականներն են (ելակետային հայտանիշները, համաթվերը),

f_i - չդիտարկվող (անբացահայտ, լատենտային) գործոններն են,

α_{ij} -գործոնային ծանրաբեռնվածություններն են,

e_i - պատահական սխալն է:

Գործոնային ծանրաբեռնվածությունները, ըստ էության, համընկնում են ելակետային ցուցանիշների և լատենտային գործոնների միջև կոռելացիայի գործակիցների հետ:

Գործոնների որոնման առավել տարածված մեթոդներից է գլխավոր բաղադրիչների մեթոդը: Այն գործոնների հաջորդական որոնման մեթոդ է: Սկզբում որոշվում է առաջին գործոնը, որը բացատրում է դիսպերսիայի մեծագույն մասը, այնուհետև՝ նրանից անկախ երկրորդ գործոնը, որը բացատրում է մնացորդային դիսպերսիայի մեծագույն մասը և այդպես շարունակ:

Գլխավոր բաղադրիչների առավելագույն հնարավոր թիվը հավասար է փոփոխականների թվին: Այլ ձևակերպմամբ, եթե ցանկանում ենք 100%-ով նկարագրել m փոփոխականների արժեքները, ապա դրա համար անհրաժեշտ կլինեն նույն՝ m թվով գլխավոր բաղադրիչներ: Նկատենք, որ դիտարկվող ելակետային փոփոխականների օպտիմալ նկարագրության համար անհրաժեշտ է կառուցել գլխավոր բաղադրիչներ այնքան ժամանակ, քանի դեռ դրանց սեփական արժեքները մեծ են 1-ից: Այդ իսկ պատճառով, օրինակ, SPSS ծրագրային փաթեթում գործոնների կառուցման ընթացակարգը շարունակվում է, քանի դեռ յուրաքանչյուր հաջորդ գլխավոր բաղադրիչի սեփական արժեքը շարունակում է 1-ից մեծ լինել: Հավելենք, որ ստացված գործոնների ավելի լավ մեկնաբանության համար դրանց նկատմամբ կիրառվում է շրջման ընթացակարգը, որի արդյունքում ձևավորվում է բաղադրիչների շրջված մատրիցը:

Գործոնային վերլուծության արդյունքներից հետազոտությունում առաջադրված խնդրի լուծման տեսանկյունից կարևորություն են ներկայացնում ընդհանրությունների (Communalities) գնահատականները: Դրանք ցույց է տալիս, թե վերլուծության մեջ ներառված փոփոխականների դիսպերսիայի ո՞ր մասն է բացատրում առաջարկվող գործոնային մոդելը:

Ընդհանրությունների գնահատականները կարելի է մեկնաբանել նաև որպես հետազոտվող մոդելային կառուցվածքում, համակարգում յուրաքանչյուր ելակետային ցուցանիշի, համաթվի մասնակցության, ներգրավվածության աստիճան: Որքան այն մոտ է 1-ի, այնքան տվյալ ցուցանիշի մասնակցությունը կառուցված համակարգում կարելի է համարել բարձր կամ նշանակալի: Եվ հակառակը՝ համեմատաբար փոքր արժեքները դիտարկվող համակարգում ելակետային համաթվերի թույլ կամ ոչ նշանակալի դերակատարության արտացոլում են հանդիսանում:

Վերը նկարագրված տրամաբանությամբ առաջնորդվելով, նորմավորելով ընդհանրությունների գնահատականների թվային արժեքները, դրանց հիման վրա կարելի է դուրս բերել ելակետային ցուցանիշների՝ ընդհանրական համաթվում հարաբերական կարևորությունը արտացոլող կշռային գործակիցները: Վերջինները, ըստ էության կարտահայտեն արդյունավետության տվյալ խմբի ներսում ցուցիչներից յուրաքանչյուրի կարևորությունը: Դրանց օգտագործմամբ կարելի է կառուցել արդյունավետության ցուցիչների խմբերից յուրաքանչյուրի համար ընդհանրական գնահատականներ կամ էլ, այլ ձևակերպմամբ՝ արդյունավետության հիմնական ցուցիչներ (KPI-ներ):

5.5. Ամփոփում

Արդյունք #1. *Հետազոտությունում ուսումնասիրվեցին արդյունավետության գնահատման խնդրի լուծման համատեքստում արդյունավետության ցուցիչների կիրառության կարևորությունն ու անհրաժեշտությունը:*

Արդյունք #2. *Ցույց տրվեցին այն պայմանները, որոնց պետք է բավարարեն թիրախային և նպատակային արդյունավետության ցուցիչները:*

Արդյունք #3. *Ներկայացվեցին արդյունավետության ցուցիչներ՝ ըստ կրթության ոլորտի առանձին մակարդակների:*

Արդյունք #4. *Շեշտելով արդյունավետության ցուցիչների ընդհանրացման անհրաժեշտությունը, ներկայացված է մեթոդական մոտեցում, որի կիրառմամբ, ելակետային ցուցանիշների առկայության պարագայում, հնարավոր կլինի իրականացնել արդյունավետության հիմնական ցուցիչների գնահատականների դուրսբերում:*

6. ԱՄՓՈՓԻՉ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Ամփոփիչ եզրակացություններ

1. Վերջին տասնամյակում չնայած կրթական ծառայությունների ծավալը (դրամային արտահայտությամբ) ՀՀ-ում աճի միտում է ցուցաբերում (միջին տարեկան անվանական աճը կազմել է մոտ 5%), սակայն աճի տեմպն ավելի ցածր է, քան ծառայությունների ընդհանուր հատվածի աճը: Արդյունքում՝ ծառայությունների ընդհանուր հատվածում կրթական ծառայությունների մասնաբաժինը տարեցտարի նվազում է:

2. Կրթական ծառայությունների տարածքային համակենտրոնացման մակարդակը ՀՀ-ում խիստ բարձր է, ըստ որում՝ ավելի բարձր, քան ծառայությունների հատվածում ընդհանրապես: Կրթական ծառայությունների մատուցումը կենտրոնացած է գլխավորապես Երևանում, 2003թ.-ից ի վեր հանրապետության 10 մարզերի մասնաբաժինը կրթական ծառայությունների կառուցվածքում չի գերազանցել 16%-ը: Ըստ որում, իրավիճակի փոփոխման միտումներ մեր հետազոտությունները չեն արձանագրել: Այս պարագայում հարկ է արձանագրել, որ տարածքային համաչափ զարգացման քաղաքականության ուղենիշերը, առնվազն՝ կրթության մասով, չեն իրագործվել:

3. ՀՀ տնային տնտեսությունները կրթական ծառայություններին ուղղում են իրենց ծախսերի աննշան մասը (1.5%), ընդ որում՝ ներկայիս մակարդակը նախորդ տարիների համեմատ 2-3 անգամ պակաս է: Չնայած համադրելի երկրներում իրավիճակը հիմնականում ավելի բարվոք չէ, այնուհանդերձ կրթության ոլորտում տնային տնտեսությունների ներդրումների խիստ ցածր մակարդակը, մի կողմից պայմանավորված լինելով օբյեկտիվ իրողություններով (մասնավորապես՝ սպառողական ծախսերի կառուցվածքում պարենային ծախսերի առաջնահերթությամբ), մյուս կողմից՝ մարդկային կապիտալի զարգացման գերակայության թուլացման և հեռանկարում՝ ինովացիոն հենքի վրա տնտեսության մրցունակության բարձրացման մոդելին անցման անհնարինության հետ կապված լրջագույն մտահոգություններ է առաջ բերում:

4. Սպառողական ծախսերի կառուցվածքում կրթական ծախսերի մասնաբաժինն ըստ տնային տնտեսությունների եկամտային խմբերի էականորեն տարբերվում է. առավել բարձր եկամտային խմբում (քվանտիլում) գտնվող տնային տնտեսությունները կրթական ծախսերին ուղղում են ընդհանուր ծախսերի 2.0 տոկոսը, այն դեպքում, երբ առավել ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների խումբը՝ ընդամենը 0.2%: Ընթացիկ տասնամյակում տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքում կրթության ծախսերի մասնաբաժինը որակապես ցածր է նախորդ տասնամյակի մակարդակներից: Ցածր եկամտային խմբում գտնվող տնային տնտեսությունները, զրկված լինելով կրթությունում ներդրում կատարելու հնարավորությունից, կարող են օգտվել մարդկային կապիտալի զարգացման խիստ սահմանափակ գործիքներից և դրանով իսկ՝ մեծ է հավանականությունը, որ նրանք չեն կարողանա ինքնուրույն դուրս գալ աղքատության պարույրից:

5. Միջազգային փորձը վկայում է, որ նախադպրոցական կրթության հասանելիության ապահովումը և նախակրթարաններում երեխաների ընդգրկվածության աստիճանի բարձրացումը կարելի է դիտարկել որպես կրթական համակարգի արդյունավետությունը պայմանավորող նշանակալի գործոն: Մինչդեռ մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում դեռևս բացակայում է նախադպրոցական կրթության կարևորության լիարժեք ըմբռնումը: Մեր գնահատմամբ, մեզանում ՆԴՀ-ները ոչ այնքան նախադպրոցական կրթության և դաստիարակության հաստատություններ են, որքան պարզապես մանկահասակ երեխային թողնելու ապահով վայր: Համենայն դեպս, ծնողների շրջանում առավելապես գերիշխողն է այս մտայնությունը:
Չնայած այն հանգամանքին, որ ՆԴՀ-ներում երեխաների ընդգրկվածությունը տարեցտարի աճում է, սակայն այն դեռևս շարունակում է մնալ համեմատաբար ցածր մակարդակի վրա: Համապատասխան տարիքի երեխաների 69%-ը ՆԴՀ չի հաճախում, ընդ որում, գյուղական համայնքներում նախադպրոցական հաստատություններ չի հաճախում երեխաների շուրջ 80%-ը: ՆԴՀ-ներում երեխաների ընդգրկվածությունը էականորեն տարբեր է նաև ըստ տնային տնտեսությունների աղքատության մակարդակի:

6. Նախադպրոցական կրթության արդյունավետությունը զսպող նշանակալի գործոններից է ՆԴՀ խմբերի ծանրաբեռնվածությունը: Մեր դիտարկումների համաձայն, հանրապետությունում նկատելի է ՆԴՀ մեկ խմբում երեխաների միջին թվաքանակի աճի միտումը: 2017-ին այն կազմել է 26, այն դեպքում, երբ 2006-ին 21 էր: ՆԴՀ խմբերի խոշորացումը, մեր մոտեցմամբ, չի կարող նպաստել երեխաների նախադպրոցական կրթության արդյունավետության բարձրացմանը: Առանձին երկրների փորձը ցույց է տալիս, որ նախադպրոցական կրթության արդյունավետության ապահովման համար կարևոր է պահպանել մեկ խմբում երեխաների նպահակահարմար թվաքանակի սահմանաչափերը, որոնք ըստ տարիքային խմբերի կազմում են 10-15 երեխա՝ մեկ խմբում: ՆԴՀ-ներում մեկ մանկավարժի հաշվով երեխաների թվաքանակի ցուցանիշը վերջին տարիներին էական փոփոխությունների չի արձանագրել: Երևանում այն 16 է, իսկ մարզերում՝ 12.7:

7. Հանրակրթության ավագ մակարդակի կրթությունն իրականացվում է 12-ամյա միջնակարգ դպրոցների ավագ դասարաններում և առանձին գործող ավագ դպրոցների ցանցի միջոցով: Մեր գնահատումներն ու վերլուծությունները ցույց են տալիս, որ հանրապետության հանրակրթության համակարգում ավագ դպրոցը լիարժեքորեն չի կատարում իր առաքելությունը, չի ապահովում հիմնական դպրոցի և կրթական համակարգի՝ հանրակրթական դպրոցին հաջորդող մակարդակի միջև կապը, չի նպաստում աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը, հիմնական դպրոցի համեմատությամբ չի ապահովում գիտելիքի ավելի բարձր մակարդակ: Մի կողմից, ավագ դպրոցը չի լուծում այն հիմնական խնդիրը, որի համար ի սկզբանե ձևավորվեց հանրակրթության այս մակարդակը, ավագ դպրոցում սովորելը հատկապես աղքատ ընտանիքների համար նշանակալի ֆինանսական բեռ է ենթադրում, այս և մի շարք այլ պատճառներով տարեցտարի նվազում է ավագ դպրոցում ընդգրկվածության աստիճանը, իսկ մյուս կողմից էլ՝ հիմնական դպրոցն ավարտելուց հետո հանրակրթության համակարգից դուրս եկող պատանիներն ու աղջիկները, որպես կանոն, դադարում են զբաղվել իրենց կրթությամբ: Այս հանգամանքը չափազանց մտահոգիչ է, մասնավորապես՝ մարդկային կապիտալի զարգացման ներուժային հնարավորությունների օգտագործման արդյունավետության բարձրացման համատեքստում:

8. Մեր հետազոտության արդյունքներից բխում է, որ ավագ դպրոցում սովորելը բավականին ծախսատար է, ընդ որում՝ շատ ավելի ծախսատար, քան հանրակրթության առաջին երկու մակարդակներում: Սա կարելի է համարել ավագ դպրոցում ընդգրկվածության ցուցանիշի՝ ըստ տնային տնտեսության աղքատության մակարդակի էական տարբերության պատճառներից մեկը: Ոչ աղքատ տնային տնտեսությունների պարագայում ավագ դպրոցում ընդգրկվածությունը շուրջ 70 տոկոս է, մինչդեռ աղքատ տնային տնտեսությունների դեպքում՝ միայն 54 տոկոս: Ավագ դպրոցում սովորող ունեցող ոչ աղքատ տնային տնտեսությունները մեկ սովորողի հաշվով ամսական միջինում ծախսում են 7400 դրամ, իսկ աղքատ և ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունները՝ 2.5-3.5 անգամ պակաս: Ավելին, ոչ աղքատ տնային տնտեսությունների կողմից կատարվող ծախսի շուրջ կեսն ուղղվում է մասնավոր դասերին, ինչը, թերևս, անխուսափելի է համարվում կրթական համակարգի հաջորդ մակարդակ աշակերտի սահուն անցումն ապահովելու համար: Այս հանգամանքը, սակայն, ի սկզբանե, հակասում է ավագ դպրոցի հիմնադրման գաղափարաբանությանն ու հայեցակարգային դրույթներին, նաև՝ ի ցույց է դնում կրթական այս փուլում մատուցվող ծառայությունների ոչ բավարար արդյունավետության փաստը:

9. Մեր ուսումնասիրությունների կարևոր ուղղություններից մեկը բարձրագույն կրթության համակարգում առկա իրավիճակի և միտումների համակողմանի հետազոտությունն է: Ստացված արդյունքները ի ցույց են դնում բուհերի թվի և դրանցում սովորողների թվաքանակի կրճատման, բարձրագույն կրթության տարածքային գերկենտրոնացման միտումները, բնագիտական և տեխնիկական մասնագիտությունների ոչ բավարար պահանջվածության հանգամանքը, ՀՀ ԲՈՒՀ-երի տարածաշրջանային և միջազգային մրցունակության անբավարար մակարդակը: Այս իրավիճակը հայաստանյան բուհերի համար լրջագույն բարեփոխումների նախաձեռնման կարևոր մարտահրավեր հանդիսանալով, կարող է խթանել բարձրագույն կրթության համակարգի առողջացումը, սակայն ցավալիորեն իրողությունը այլ է: Հայրենական ԲՈՒՀ-երի մեծամասնությունը, կրթական ծառայությունների շուկայում իրենց մրցակցային դիրքերը նախընտրում են բարելավել ոչ թե մատուցվող ծառայությունների որակի բարձրացման, այլ ընդունելության կանոնների էլ ավելի պարզեցման, ուսումնական գործընթացում գիտելիքի ստուգման ընթացակարգերի ոչ ֆորմալ հեշտացման, դիմորդների ամենալայն (հաճախ՝ նախնական պատրաստվածության խիստ անբավարար մակարդակով օժտված) շրջանակի համար մատուցվող ծառայությունները հասանելի դարձնելու եղանակով, պոտենցիալ ուսանողների ընտրության գլխավոր չափանիշ է դառնում նրա վճարունակությունը, ինչի պատճառով բուհական կրթական ծառայությունները հատկապես ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների համար դառնում են գրեթե անհասանելի (ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների անդամների ընդգրկվածությունը բարձրագույն կրթական հաստատություններում 17% է կամ ոչ աղքատ տնային տնտսությունների համեմատությամբ՝ 3 անգամ ցածր): Արդյունքում համակարգում առկա լճացման դրսևորումները կայուն բնույթ են ստանում, խարխլվում են ԲՈՒՀ-աշխատաշուկա կապերը, ուսումնական ծրագրերը դառնում են պարզունակ, անհետաքրքիր, գործատուների պահանջներին չհամապատասխանող, խափանվում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի սերնդափոխությունը, ուսանողների մոտ վերանում է սովորելու մոտիվացիան, ընկնում է կրթական ծառայությունների ներքին և արտաքին մրցունակության մակարդակը: Օտարերկրյա ուսանողների թվաքանակը ՀՀ ԲՈՒՀ-երում վերջին մի քանի տարիներին

աճի աննշան միտումներ է ցուցաբերում, սակայն ուսանողների ընդհանուր կառուցվածքում օտարերկրյա ուսանողների տեսակարար կշիռը դիտարկվող ողջ ժամանակահատվածի ընթացքում չի գերազանցել 5.0% մակարդակը:
Կրթության գլոբալ մրցունակության կարևոր գնահատական է Գլոբալ մրցունակության **ինդեքսի Հմտություններ** բաղադրիչը: Այս ցուցիչով Հայաստանը 67.6 միավորով աշխարհում 55-րդն է: Ընդ որում, սա մեզ համար ավելի բարձր մակարդակ է, քան ՀՀ գնահատականը մրցունակության մի շարք այլ բնութագրիչներով (մակրոտնտեսական կայունություն՝ 89-րդ տեղ, ֆինանսական համակարգ՝ 87-րդ տեղ, ենթակառուցվածքներ՝ 74-րդ տեղ, ինստիտուտներ՝ 67-րդ տեղ): Այնուհանդերձ, հմտությունների մակարդակով Հայաստանը զգալիորեն հետ է մնում մեծ թվով զարգացող երկրներից, նաև՝ Վրաստանից, ՌԴ-ից և Ադրբեջանից: Ավելին, երկրի կրթական հաստատությունների շրջանավարտների գործնական գիտելիքներն ու կարողությունները բնութագրող ցուցանիշով Հայաստանը շատ ավելի հետ է, քան հմտությունների ընդհանրական գնահատականով և նույն երկրների շարքում 89-րդն է: ՀՀ-ում համեմատաբար ավելի բարձր է որակյալ աշխատանքային ռեսուրսներ ստեղծելու ներուժը. ինդեքսի **Ապագա աշխատուժ** բաղադրիչով Հայաստանը 60-րդ տեղում է: Ստացվում է, որ աշխատանքային ռեսուրսի ներուժային համեմատաբար բարձր մակարդակի առկայության պայմաններում կրթական համակարգն ի վիճակի չէ տալ համապատասխան արդյունք՝ պահանջվող հմտություն և կարողություններ ունեցող շրջանավարտների տեսքով:

10. Ուսումնասիրության արդյունքներով լրջագույն խնդիրներ ու բացթողումներ են հայտնաբերվել կրթության բյուջետային ֆինանսավորման տիրույթում: Բյուջետային ծախսերի կառուցվածքում կրթության մասնաբաժինը 2006-ից սկսած նվազման կայուն միտումներ է ցուցաբերում և վերջին տարիներին գտնվում է 8-9 տոկոսի շրջակայքում, ինչը շատ ավելի ցածր է, քան զարգացած և նույնիսկ՝ զարգացող տնտեսությունների մեծամասնությունում: Կրթության ոլորտի բյուջետային ֆինանսավորումը ՀՆԱ նկատմամբ ևս խիստ ցածր է՝ վերջին տարիներին միջինում 2.4%, իսկ 2019թ. պետական բյուջեի նախագծով ծրագրված է 2.1%: Ըստ որում, ՀՀ 2014-25թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով սույն ցուցանիշի համար 2017թ. թիրախային մակարդակը չի իրագործվել, նույն միտումների պահպանման պարագայում անիրատեսական է նաև 2021 և 2025 թվականների համար սահմանված թիրախային մակարդակների հասանելիությունը:

11. 2009-2011թթ-ից սկսած, բոլոր եռամյա հատվածների համար նախադպրոցական, տարրական և միջնակարգ ընդհանուր կրթության ֆինանսավորման մասով սահմանված ծրագրային մակարդակները թերակատարվել են: Վերջին 10 տարիների ընթացքում կրթական նշված մակարդակներում ֆինանսավորման փաստացի ծավալն ավելացել է ընդամենը 15 տոկոսով: Ընդ որում, 2018թ. պետական բյուջեով նախատեսված ֆինանսավորումն ավելի ցածր է, քան նախորդ տարիների ՊՄԺԾԾ-ների մեծ մասով (օրինակ՝ 2014-2016թթ., 2015-2017թթ., 2016-2018թթ. ծրագրերը) եռամյա ժամանակահատվածի վերջի համար ծրագրված մակարդակը: Նույնը կարելի է ասել նաև նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրերի ֆինանսավորման, որոշակիորեն՝ նաև բարձրագույն կրթության բյուջետային ֆինանսավորման ծրագրման մասով:
Մեր գնահատմամբ, կրթության ոլորտում ծախսային գերակայությունների հռչակումը և դրանց կենսագործման նպատակով ծրագրվող գործողությունները որևէ աղերս չունեն փաստացի իրականության հետ: Ավելին, մեր դիտարկմամբ, առնվազն կրթության ոլորտում ծախսերի եռամյա ծրագրումը ոչ թե ոլորտի զարգացման գերակայություններին համապատասխան ֆինանսական հենքի ձևավորման, այլ շահառուների առանձին խմբերին և հասարակությանն ընդհանրապես լավատեսական ազդակներ հաղորդելու նպատակ է հետապնդել: Խնդիրն այն է, որ հետագայում այդ ազդակները ոչ թե առարկայական ամրագրում են ստացել, այլ փոխարինվել են նոր լավատեսական ազդակներով: Դրանով իսկ ձևավորվել է նախապես սահմանված թիրախների իրագործման նկատմամբ ոչ բավարար պատասխանատվության, ծրագրային նպատակների թերակատարումը արտաքին գործոնների վրա բարեհաջող կերպով բարդելու գործելաոճ:

12. Մեր հետազոտությունները ի ցույց են դնում բյուջետային ծախսերի կառուցվածքում գերակայությունների աստիճանական փոփոխության միտումը, մասնավորապես՝ ի վնաս կրթության ֆինանսավորման: Այսպես, վերջին մի քանի տարիներին կրթության բյուջետային ֆինանսավորման հարաբերակցությունը հանրային ծառայությունների հոդվածով կատարվող ծախսերին կազմել է 40-50%, իսկ 2019թ. ծրագրային ցուցանիշներով սույն հարաբերակցությունը 45.4% է: Մինչդեռ 10 տարի առաջ իրավիճակը տրամագծորեն հակառակն էր: Նույն կերպ, սոցիալական բնույթի ծախսերի (սոցիալական պաշտպանություն, առողջապահություն և կրթություն) կառուցվածքում ևս կրթության մասնաբաժինը չնայած դանդաղ, բայցևայնպես կայուն տեմպերով նվազում է: Կարծում ենք, որ կրթության ոլորտի մասով բյուջետային գերակայությունների նմանատիպ փոփոխությունները, որոնք, ի մասնավորի, ներկայացված են այս և նախորդ կետերում, հասարակության և քաղաքականություն իրականացնողների համար լուրջ մտահոգության առիթ պետք է հանդիսանան:

13. Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող Համաշխարհային զարգացման ցուցիչների (world development indicators) հիման վրա մեր կողմից կատարված միջերկրային համադրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում կրթական բոլոր երեք մակարդակներում մեկ սովորողի հաշվով բյուջետային

ծախսերը՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ նկատմամբ, անհամեմատ ավելի ցածր են, քան զարգացած տնտեսություններում, նաև՝ որոշակիորեն ցածր են դիտարկված զարգացող տնտեսությունների համապատասխան մակարդակներից: Ընդ որում, ֆինանսավորման տարբերություններն առավել ակնառու են կրթական առաջին և երրորդ մակարդակներում (ընդհուպ մինչև 3-4 անգամ), իսկ կրթական երկրորդ մակարդակում Հայաստանի հարաբերական ցուցանիշը ԿԱԵ և ԵՄ երկրների համապատասխան մակարդակից ցածր է միայն 40-50 տոկոսով:

14. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ հանրակրթական դպրոցների բյուջետային ֆինանսավորման չափի հաշվարկներում օգտագործվող լրացուցիչ գործակիցներից դիտարկվող ժամանակահատվածում նկատելի փոփոխությունների է ենթարկվել միայն ավագ դպրոցների համար կիրառվող լրացուցիչ գործակիցը: Ընդ որում, հետաքրքրական է դրա վայրիվերումների ուղղվածությունը. 2016-ին թռիչքային աճ՝ 1.14-ից մինչև 1.61, իսկ 2018թ. բյուջեով նախատեսված է նույնքան կտրուկ անկում, որի արդյունքում գործակիցը վերադարձել է իր նախորդ մակարդակին՝ 1.14: Եթե 2016-2017թթ. ավագ դպրոցների համար բարձր լրացուցիչ գործակիցների կիրառումը համարենք դրանց կայացման խթանմանն ուղղված լրացուցիչ լիցքի հաղորդում, ապա ստացվում է, որ 2018-ից սկսած այդ խթանի կարիքն արդեն չկա: Իսկ դա էլ, իր հերթին, կարող է նշանակել, որ կամ ավագ դպրոցները լրացուցիչ խթանման կարիք չունեն, քանի որ արդեն լիարժեքորեն կայացել են, կամ էլ՝ նույնիսկ այսօրինակ խթանը չի կարող օգնել դրանց կայացմանը, հետևաբար՝ ավելորդ բյուջետային միջոցներ վատնելու անհրաժեշտությունը բացակայում է:

15. ՀՀ կրթության ոլորտում միջին ամսական անվանական աշխատավարձը վերջին տարիներին աճում է ավելի դանդաղ տեմպով, քան տնտեսությունում միջին աշխատավարձը: Արդյունքում, կրթության ոլորտում միջին աշխատավարձի հարաբերակությունը տնտեսությունում միջին ամսական անվանական աշխատավարձի նկատմամբ կազմում է միայն 0.64: Ավելին, կրթության ոլորտում միջին անվանական աշխատավարձի հարաբերակցությունը պետական կառավարում հատվածում նույն ցուցանիշի նկատմամբ ավելի ցածր է՝ 0.52, իսկ ֆինանսական և ապահովագրական գործունեության հատվածում միջին աշխատավարձի նկատմամբ՝ էլ ավելի ցածր. 0.29:
Մյուս կողմից, համեմատական վերլուծությունը՝ համադրելի երկրների նկատմամբ, ցույց է տալիս, որ ՀՀ կրթության ոլորտում միջին ամսական անվանական աշխատավարձը, ԱՄՆ դոլարով արտահայտված, գրեթե նույնքան է, ինչ Վրաստանում և նկատելիորեն բարձր է Մոլդովայի և Ուկրաինայի նույն ցուցանիշից: Երկրում միջին անվանական աշխատավարձի համեմատությամբ կրթության ոլորտում աշխատանքի վարձատրությունը Հայաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում նշանակալիորեն չի տարբերվում, իսկ Վրաստանում շատ ավելի ցածր է:

16. Հետազոտության արդյունքներից բխում է, որ Հայաստանում կրթությունը աղքատությունից խուսափելու նշանակալի գործոն կարող է դիտվել: Այսպես, բարձրագույն կրթություն ունեցող անձանց աղքատության մակարդակը շուրջ երկու անգամ ցածր է հանրապետության միջինից: Մյուս կողմից, աղքատության միջին հանրապետական մակարդակին մոտ է միջնակարգ մասնագիտական կրթությամբ անձանց շրջանում աղքատության ցուցանիշը: Սա կարող է նշանակել, որ Հայաստանում միջին մասնագիտական կրթությունն աղքատությունից խուսափելու նշանակալի գործոն կամ երաշխիք չի հանդիսանում, ինչն էլ կրթական համակարգի այս օղակի նկատմամբ հանրության ցածր վստահության պատճառներից կարելի է համարել:

17. Ընդհանուր առմամբ, կրթության ոլորտի քանակական բնութագրիչների ընդհանրական վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ հետճգնաժամային ժամանակահատվածում՝ 2009թ. հետո, շոշափելի են անբարենպաստ զարգացումները, որոնք տարեցտարի խորացման միտումներ են ցուցաբերում: Կրթության բյուջետային ֆինանսավորման հարաբերական ցուցանիշները որակական տեղաշարժ չեն գրանցել: Կրթությունը լիարժեքորեն չի կատարում իր հիմնական առաքելությունը՝ մարդկային կապիտալի զարգացում, դրա արդյունավետ օգտագործում՝ բնակչության կյանքի որակի բարձրացման և մարդկային կայուն զարգացման նպատակով:

18. ՀՀ կրթության ոլորտում վարկային ծրագրերի շրջանակներում բյուջետային ֆինանսավորումն աճի միտումներ է գրանցում: Կրթության բյուջետային ֆինանսավորման կառուցվածքում վարկային միջոցների մասնաբաժինը 2008-2018թթ ավելացել է երկու անգամ՝ հասնելով 4.7 տոկոսի: 2019-2021թթ. ՊՄԺԾԾ-ով նախատեսվում է կրթության ոլորտում վարկային ծրագրերով ֆինանսավորել 12.0-ից մինչև 13.3 մլրդ դրամի ծախս, որից 9.5 մլրդ դրամը՝ ԱԶԲ աջակցությամբ իրականացվող Դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի, իսկ մնացած մասը՝ ՀԲ աջակցությամբ իրականացվող Կրթության բարելավման ծրագրի շրջանակներում: Կրթության բյուջետային ֆինանսավորման կառուցվածքում վարկային ծրագրերի մասնաբաժինը 2019թ. կկազմի 9.5%, 2020-ին՝ 8.3%, 2021թ.՝ 6.8%:Վերջին տարիներին նկատելի է վարկային միջոցներով կատարվող ծախսերի կառուցվածքում ընթացիկ ծախսերի կրճատման և հիմնական միջոցների վրա ծախսերի ավելացման միտումը: Կապիտալ բնույթի ծախսերի կառուցվածքում աստիճանաբար գերակշռում են շենքերի և շինությունների շինարարության և կապիտալ վերանորոգման ծախսերը:

19. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավում» վարկային ծրագրի արդյունքների դիտարկումը ցույց է տալիս, որ միջանկյալ նպատակների զգալի մասը չի իրականացվել: Սահմանված գործողությունների պլանին և միջանկյալ թիրախների համապատասխան կատարվում են միայն ենթաբաղադրիչ 1.1 և բաղադրիչ 2-ով նախատեսված աշխատանքները:

- Ենթաբաղադրիչ 1.2-ի համար սահմանված միջանկյալ թիրախները իրագործված չեն: Չեն հիմնանորոգվել պլանավորված թվով ավագ դպրոցներ: Նորագույն նյութատեխնիկական բազայով և կրթական ռեսուրսներով համալրված ավագ դպրոցների ցանցի ստեղծման գործողությունները ևս զգալիորեն հետ են մնում պլանավորվածից: Ծրագրի կատարման այս փուլում ավելի քան 40 ավագ դպրոց պետք է ունենար կահավորված բնագիտական լաբորատորիաներ, սակայն փաստացի կատարվել են միայն գնման մրցութային փաթեթի կազմման աշխատանքները: Ավագ դպրոցների զարգացման աջակցության ենթաբաղադրիչի իրականացման կարևոր միջանկյալ արդյունքներից է ավագ դպրոցներում աշակերտների ներգրավվածության աճը: Այս թիրախի իրագործման մոնիթիրինգի նպատակով տարեկան պարբերականությամբ պետք է իրականացվեին հետազոտություններ, որոնք, սակայն, չեն կատարվել: Արդյունքում, ծրագրի ենթաբաղադրիչ 1.2-ը կարելի է համարել գլխավորապես չկատարված, իսկ վերջնական թիրախների իրականացման հավանականությունը մեր գնահատմամբ գրեթե զրոյական է:

- Ենթաբաղադրիչ 1.3-ով նախատեսված միջանկյալ արդյունքները չեն կատարվել: Ծրագրի իրականացման ներկա փուլում արդեն իսկ պետք է փորձարկված լիներ դպրոցների տեխնիկական և ծրագրային ապահովման համար կայուն հիմքերի վրա դրված տեխսպասարկման և ծրագրային ապահովման համակարգը, ինչը սակայն չի կատարվել: Նախատեսված էր նաև կրթության կառավարման տեղեկատվական ինտեգրացված համակարգերի օգտագործման ուղղությամբ անհրաժեշտ կարողությունների ձեռքբերման նպատակով վերապատրաստել դպրոցների ուսուցիչների և վարչական աշխատողների: Ծրագրի կատարման ներկա փուլում պետք է վերապատրաստում անցնեին դպրոցների առնվազն 1500 աշխատողներ: Սակայն դեռևս փաստացի կատարվել է միայն 30 վերապատրաստողների վերապատրաստումը:

- Առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման ու լրամշակման մասով ևս միջանկյալ արդյունքները չեն իրագործվել: Նախատեսված էր այս փուլում վերանայել ու լրամշակել առնվազն 6 առարկայական չափորոշիչ, սակայն դեռևս հաջողվել է միայն մշակել ու վերջնական տեսքի բերել համապատասխան տեխնիկական առաջադրանքը:Նորամուծությունների մրցակցային հիմնադրամի զարգացման աջակցության բաղադրիչի շրջանակներում սահմանված միջանկյալ արդյունքները գերակատարվել են: ՆՄՀ ծրագրերի շահառու են 12 բուհեր (վերջնական թիրախը՝ 10), որոնցից 5-ը՝ կոնսորցիումային ծրագրերն են (վերջնական թիրախը՝ 4):

  Ընդհանուր առմամբ, ծրագրի իրականացման ներկա փուլում հիմնականում կատարվել են նախադպրոցական և բուհական մակարդակներում նախատեսված գործողությունները, ապահովվել են դրանց միջանկյալ արդյունքները, մեծ է վերջնական թիրախների իրականացման հավանականությունը: Մյուս կողմից, նշված բաղադրիչների շրջանակներում ստացվելիք արդյունքների շարունակականության ապահովման, շահառու կազմակերպություններում մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ ձեռք բերված փորձը կրթական համապատասխան մակարդակի մյուս հաստատությունների վրա տարածման, կրթության ոլորտի զարգացման խնդիրների լուծմանը նպաստող կայուն վերջնարդյունքների ստացման մասով առկա են որոշակի ռիսկեր:

20. ՀՀ կառավարության և ՀԲ մինչև կնքված «Կրթության բարելավում» վարկային պայմանագրի շրջանակներում նախատեսված գործողությունների կատարման գնումների պլանը զգալիորեն թերակատարվել է: Մեր կողմից հետազոտված հրապարակային աղբյուրներում առկա է տեղեկատվություն մոտ 10 մլն ԱՄՆ դոլար գումարային արժեքով ստորագրված պայմանագրերի վերաբերյալ, մինչդեռ 2015-2018թթ. վարկային միջոցներով փաստացի կատարված և պլանավորված ծախսերը կազմում են 13.4 մլն ԱՄՆ դոլար: Վարկային ծրագրի պլանային և փաստացի արդյունքների միջև առկա շեղումների վերացումը պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում, մեր գնահատմամբ, իրատեսական չէ:

  <u>Ենթաբաղադրիչ 1.1.</u> Գնումների պլանով և կնքված պայմանագրերի վերաբերյալ հրապարակված տեղեկատվությամբ դիտարկվում է 1.875 մլն ԱՄՆ դոլարի չափով պլանավորված գործողություններից միայն 148.8 հազար ԱՄՆ դոլարի օգտագործումը:

  <u>Ենթաբաղադրիչ 1.2.</u> Փաստացի կատարվել կամ կատարման վերջնական փուլերում են գտնվում 7.44 մլն ԱՄՆ դոլար պայմանագրային արժեքով գործողություններ (ծրագրով նախատեսված 22.5 մլն ԱՄՆ դոլարի 33.1%-ը), փաստացի կնքվել է 5 ավագ դպրոցի հիմնանորոգման պայմանագիր, որոնցից միայն երկուսի պայմանագրերն են արտացոլված ՀԲ գնումների պլանում, չի կատարվել գնումների պլանով նախատեսված ավագ դպրոցների համար ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և աշխարհագրության լաբորատորիաների սարքավորումների ձեռքբերումը:

Ենթաբաղադրիչ 1.3. գնումների պլանում նախատեսված 4 գործողություններից երեքի մասով են կնքվել պայմանագրեր՝ 1097.8 հազար ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով, որը վարկային ծրագրով ենթաբաղադրիչի նախատեսված ամբողջ ֆինանսավորման 43.9%-ն է, բոլոր գործողությունների մասով գնումների պլանով սահմանված պայմանագրերի ստորագրման նախնական ժամկետները խախտվել են:

Ենթաբաղադրիչ 1.4. Գնումների պլանով սահմանված գործողությունները կատարված չեն, համապատասխան պայմանագրերը կնքված չեն, չի օգտագործվել վարկային ծրագրով այս ենթաբաղադրիչի համար նախատեսված 0.625 մլն ԱՄՆ դոլարը:

Բաղադրիչ 2. ՆՄՀ ծրագրերի շրջանակներում վարկային ռեսուրսների օգտագործումը ՀԲ գնումների պլանում արտացոլված չէ; ԿԾԿ ԾԻԳ կայքում հրապարակված է տեղեկատվություն ՆՄՀ ծրագրերի շրջանակներում անհատ խորհրդատուի ընտրության 63 մրցույթի և գույքի ու սարքավորումների ձեռքբերման 53 պայմանագրերի վերաբերյալ՝ 622.2 մլն դրամ ընդհանուր արժեքով, որը կազմում է ծրագրով նախատեսված ընդհանուր ֆինանսավորման շուրջ 21%-ը; անհատ խորհրդատուի ընտրության մրցույթները, առանձին դեպքերում, ձևային և արհեստական բնույթ են կրում:

21. Արդյունավետության ցուցիչների կիրառմամբ արդյունավետության գնահատման մոդելները կարևոր կիրառություն ունեն կրթության ոլորտում: Արդյունավետության գնահատման մոդելների կիրառությունը հնարավորություն է տալիս չափել սովորողների ուսման վերջնարդյունքները, ընդլայնել կրթական համակարգում ներգրավվածությունը և կիրառել արդարացի մուտքի քաղաքականություն (սովորողները հնարավորություն են ստանում ընտրել ավելի թիրախային ուսումնական հաստատություն), իրականացնել կատարողականի և արդյունավետության վրա հիմնված ուսումնական հաստատությունների վարկանիշավորում, իրականացնել կրթական հաստատությունների և դրանցում իրականացվող հիմնական գործառնությունների (ուսուցում, հետազոտություն, գիտելիքի փոխանցում) մշտադիտարկում և գնահատում, ապահովել արդյունքների վրա հիմնված բյուջետավորում, ֆինանսավորում և հաշվետվողականություն:

Մեր կողմից ներկայացվել են արդյունավետության ցուցիչների համակարգեր հանրակրթության և բարձրագույն կրթության մակարդակների համար: Հանրակրթության արդյունավետության ցուցիչները ներկայացված են ըստ 7 խմբերի՝ դպրոցներ, հագեցվածություն, ֆինանսներ, աշակերտներ, ընդգրկվածություն, ուսուցիչներ, արդյունքներ: Բարձրագույն կրթության արդյունավետության ցուցիչների հիմնական ենթահամակարգերն են՝ կրթական գործառնություններ, հետազոտական գործառնություններ, ֆինանսներ, մարդկային կապիտալ:

6.2. ՀՀ կրթության ոլորտում առանձին խնդիրների լուծման մեր տեսլականը, նախաձեռնություններն ու առաջարկությունները

Կրթության ոլորտում բյուջետային ծախսերի ավելացման ներուժային հնարավորությունները

ՀՀ-ում ստվերային տնտեսական գործունեության մասշտաբները միջազգային կառույցների և անհատ փորձագետների գնահատականներով կազմում են պաշտոնական ՀՆԱ-ի 35-50 տոկոսը, մինչդեռ Ազգային վիճակագրական կոմիտեի կողմից ՀՆԱ հաշվարկում ստվերային տնտեսության ավելի համեստ գնահատականներ են դրվում: ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների ավելացման զգալի ներուժային հնարավորություններ կան: Հիմնական հարկատեսակների արդյունավետ դրույքաչափերը ավելի ցածր են, քան անվանական (հարկային օրենսգրքով սահմանված) դրույքաչափերը: Այս տարբերությունը առավել շոշափելի է շահութահարկի մասով, էական է նաև եկամտային հարկի պարագայում: Մեր հաշվարկներով, ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի արդյունավետ դրույքաչափերի ավելացումը համապատասխանաբար 1; 4 և 2 տոկոսային կետով (դա լիովին հնարավոր է ապահովել կարճաժամկետ հատվածում) թույլ կտա այս երեք հարկատեսակներից պետական բյուջեի հարկային եկամուտները ավելացնել **25 տոկոսով**, ինչը 2018թ. համար կկազմի առնվազն **230 մլրդ** դրամ: ՀՀ բյուջետային գերակայությունների հիմքում դրված տրամաբանությանը չի հակասում այս հավելյալ եկամտի **20-25 տոկոսը** կրթության ոլորտին ուղղելը: Այս պարագայում կրթության ոլորտի բյուջետային ծախսերը կավելանան **46-57 մլրդ** դրամով, ինչը հնարավորություն կտա զգալիորեն ուժեղացնել կրթության որակի բարձրացմանը միտված միջոցառումների ֆինանսական հենքը:

Առանցքային դիտարկում

Անհրաժեշտ է վերանայել ՀՀ պետական բյուջեի ծախսային գերակայությունները, մասնավորապես՝ բյուջետային ծախսերի կառուցվածքում կրթության ծախսերի մասնաբաժնի ավելացման ուղղությամբ: Վերջին 10 տարիների ընթացքում ՀՀ-ում այս ցուցանիշը նվազել է՝ 12.8 տոկոսից հասնելով 8.7 տոկոսի: Համեմատության համար նշենք, որ Համաշխարհային բանկի դասակարգմամբ միջինից ցածր եկամտով երկրների խմբում (այս խմբին է պատկանում նաև Հայաստանը) համախմբված բյուջեի ծախսերի առնվազն 14 տոկոսը բաժին է ընկնում կրթությանը: ՀՀ-ում կրթության ոլորտի բարեփոխումների արդյունավետ կենսագործումը երաշխավորելու համար անհրաժեշտ ենք

համարում առաջիկա 4-5 տարիների ընթացքում կրթության ոլորտի բյուջետային ծախսեր / ՀՀ պետական բյուջեի ծախսեր հարաբերակցության աճը՝ մինչև առնվազն 12 տոկոսի մակարդակը:
ՀՀ կրթության ոլորտում առանցքային խնդիրներից մեկը սովորելու և դասավանդելու, կրթություն ստանալու և ինքնակատարելագործվելու, մասնագիտական կարողությունները զարգացնելու շահադրդման խիստ ցածր մակարդակն է: Այս խնդրի լուծման առաջնային անհրաժեշտ պայմանը կրթության ոլորտում զբաղվածների աշխատանքի վարձատրության մակարդակի որակական աճն է: Անհրաժեշտ է դիտվում որպես կրթության ոլորտում միջին աշխատավարձի ուղենիշ կամ համեմատության հենք դիտարկել ՀՀ-ում աշխատանքի վարձատրության միջին մակարդակը: Ներկայումս ՀՀ կրթության ոլորտում միջին ամսական անվանական աշխատավարձի հարաբերակցությունը տնտեսությունում միջին ամսական անվանական աշխատավարձի նկատմամբ կազմում է ընդամենը 70%: ՀՀ կրթության ոլորտում աշխատանքի վարձատրության մակարդակը ՀՀ-ում միջին ամսական անվանական աշխատավարձին հասցնելու համար անհրաժեշտ է շուրջ 80 մլրդ դրամ: Առաջիկա 5 տարիներին այս թիրախին հասնելու համար տարեկան կպահանջվի ապահովել կրթության ոլորտում աշխատանքի վարձատրության առաջանցիկ աճ՝ այդ նպատակին ուղղելով տարեկան մոտ 16 մլրդ դրամ:

Հանրակրթության բարելավման առաջարկություններ

1. Առաջիկա երեք տարիների ընթացքում հանրակրթական դպրոցների ուսուցիչների աշխատավարձը ավելացնել տարեկան 25 տոկոսով, ինչը թույլ կտա այդ նույն ժամանակահատվածում գրեթե կրկնապատկել ուսուցիչների աշխատավարձը: Այդ նպատակով առաջին տարում կպահանջվի 11.6 մլրդ դրամ, երկրորդում՝ 14.5 մլրդ դրամ, երրորդում՝ 18.2 մլրդ դրամ (ընդամենը՝ 44.3 մլրդ դրամ):

2. Վերանայել հանրակրթական դպրոցների բյուջետային ֆինանսավորման չափի հաշվարկներում օգտագործվող լրացուցիչ գործակիցները: Բարձր լեռնային բնակավայրերի դպրոցների համար կիրառել 1.3 գործակիցը, լեռնային բնակավայրերի դպրոցների համար՝ 1.1, միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 1.2; ավագ դպրոցների համար՝ 1.6 գործակիցները:

3. Սահմանել հանրակրթական դպրոցների արդյունավետության գնահատման մոտեցումներ, որոնք կհիմնվեն կրթական ծառայությունների որակի, մարդկային կապիտալի, սոցիալական կապիտալի, բյուջետային արդյունավետության գնահատականների ընդհանրացման վրա: Դրանց հիման վրա կատարել հանրակրթական ուսումնական հաստատությունների վարկանիշավորում, որից ելնելով՝ կիրառել ֆինանսավորման տարբերակված մոտեցում:

4. Ներդնել հանրակրթական ուսումնական հաստատություններով սովորողների գիտելիքի ստուգման արդի մեթոդներ, որոնցում հիմնական շեշտը կդրվի ստեղծարար մտածողության, տրամաբանական կարողությունների ադեկվատ գնահատման վրա: Բացի այդ, զարգացնել հանրակրթության համակարգում աշակերտների ինքնակրթության մեխանիզմները, նախադրյալներ ստեղծել ցկյանս կրթության սկզբունքների արմատավորման համար:

5. Հայաստանի հանրակրթության համակարգում ավագ դպրոցը լիարժեքորեն չի կատարում իր առաքելությունը: Անհրաժեշտ է վերանայել ավագ դպրոցի հայեցակարգը, բարելավել առարկայական ծրագրերը, ապահովել կրթական հաջորդ մակարդակների հետ ավագ դպրոցում մատուցվող դասընթացների վերջնարդյունքների հստակ և տրամաբանական կապը: Օրինակ՝ բարձրագույն մասնագիտական կրթության առաջին աստիճանում (բակալավրիատում) ընդհանուր բնույթի ոչ մասնագիտական դասընթացների մի մասը կարելի է տեղափոխել ավագ դպրոց:

Բարձրագույն մասնագիտական կրթության բարելավման առաջարկներ

1. Ներդնել ԲՈՒՀ-երում դասավանդողների և ընդհանրապես՝ ԲՈՒՀ-երի աշխատակազմի գործունեության կատարողականի վրա հիմնված գնահատման մեխանիզմներ, սահմանել արդյունքների վրա հիմնված պարգևատրումների ճկուն համակարգ, բացառել կեղծ մարդասիրության և ամբոխահաճության սկզբունքներից ելնելով կիրառվող համահավասարեցման պրակտիկան:

2. Աստիճանաբար նվազեցնել, իսկ միջնաժամկետ հեռանկարում՝ բացառել դասավանդող դասախոսի մասնակցությունը ուսանողների գիտելիքի ստուգման գործընթացին: Ինստիտուցիոնալացնել գիտելիքի ստուգումը, ներդնել այսպես կոչված «կույր գնահատման» համակարգեր:

3. Բարելավել մագիստրոսական կրթությունը, մագիստրոսական մասնագիտացումները, դրանց կրթական ծրագրերը, ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը մշակել կոնկրետ մասնագիտական ոլորտի կազմակերպությունների առկա և ապագա կարիքները հաշվի առնելով, բացառելով բակալավրիական կրթական ծրագրերի հետ հնարավոր կրկնությունները, ապահովելով մասնագիտական գիտելիքի, կարողությունների և հմտությունների՝ կրթական նախորդ աստիճանի համեմատությամբ նկատելիորեն ավելի բարձր մակարդակ, ինչը հնարավորություն կտա տարբերակում մտցնել նաև նույն մասնագիտության

բակալավրի և մագիստրոսի աստիճան ունեցող մասնագետների վարձատրության մակարդակներում: Այս պարագայում մագիստրոսական կրթությունը կդառնա իսկապես պահանջված և կդադարի ձևային բնույթ կրել, ինչպես, ցավոք, հիմա է:

4. Անհրաժեշտ է փոփոխություններ մտցնել ԲՈՒՀ-երի կառավարման խորհուրդների ձևավորման մոտեցումներում, ներդնել իրական շահառուների ընտրության և դրանց ներկայացուցիչների ներգրավման գործուն մեխանիզմներ, խթանել մասնագիտական, փորձագիտական հանրույթի ինքնակառավարման մարմինների մասնակցությունը բուհ-երի խորհուրդներին,

5. բարձրագույն կրթության մասնագիտական ծրագրերի կատարելագործման համատեքստում.

   - խթանել կրթական նոր տեխնոլոգիաների ներդրումը, կրթական գործընթացներում ինտերակտիվ, ցանցային մեթոդների և տեխնոլոգիաների կիրառությունը, նորագույն կրթական տեխնոլոգիաների գործադրման ակտիվությունը և կարողությունները դիտարկել որպես դասավանդողների մասնագիտական մակարդակի գնահատման կարևոր բաղադրիչ,
   - կրթական ծրագրերը ազատել կամ հնարավորինս թեթևացնել ընդհանուր բնույթի առարկաներից, որոնց մասնագիտական բնույթ չեն կրում, և չնայած միտված են ուսանողի ընդհանուր զարգացմանը, սակայն ըստ էության, ինքնանպատակ են, հանրակրթության մակարդակներում դասավանդվող առարկաների կրկնություն են հանդիսանում, չեն ապահովում այնպիսի վերջնարդյունքներ, որոնք կայուն հիմք կհանդիսանան մասնագիտական դասընթացների համար,
   - անհրաժեշտ է մշակել և կիրառել գիտելիքի գնահատման ճկուն մեթոդներ, որոնցում կխտացվեն գիտելիքի թեսթային, բանավոր և գրավոր գնահատման առավելությունները, ինչպես նաև՝ կներառվեն ուսանողի ստեղծարար կարողությունների, վերլուծական հմտությունների գնահատման բաղադրիչներ,
   - կրթական ծրագրերում անհրաժեշտ է հիմնական շեշտադրումը տեսական գիտելիքից աստիճանաբար տեղափոխել գործնական հմտությունների և կարողությունների ձևավորման վրա:

6. ԲՈՒՀ-երի որակի ապահովման գնահատման ընթացակարգերը հիմնականում ձևային բնույթ են կրում, դրանցով արձանագրվում է այս կամ այն բաղադրիչի ձևային առկայության փաստը՝ պատշաճ ուշադրություն չդարձնելով դրանց գործարկման արդյունավետության հանգամանքին: Արդ, անհրաժեշտ է մշակել և ներդնել բուհ-երի որակի գնահատման, նաև՝ հավաստագրման նոր մոտեցումներ, որոնց հիմքում կդրվի հաստատության փաստացի կամ ակնկալվող արդյունավետությունը, մատուցվող կրթական ծառայությունների ներքին, տարածաշրջանային և միջազգային մրցունակությունը:

7. Կարևորվում է ԲՈՒՀ-երի վարկանիշավորման ադեկվատ մոտեցումների ներդրումը, որոնց հիմքում կդրվեն ԲՈՒՀ-ի արդյունավետության, մրցունակության, ներուժի, հանրային հեղինակության և վստահության, փորձագիտական հանրույթի գնահատականները: Վարկանիշային գնահատականները պետք է կողմնորոշիչ հանդիսանան ինչպես տարբեր ձևաչափերով գործընկերային հարաբերությունների հաստատման նպատակահարմարության, այնպես էլ բյուջետային ֆինանսավորման հավելյալ հոսքերի տրամադրման վերաբերյալ որոշումների կայացման համար:

Կարևորվում է ՀՀ կրթության ոլորտում բյուջետային ծախսերի արդյունավետության համալիր գնահատումը

Կրթության ոլորտում բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատումներում կիրառվող հիմնական մեթոդներն ու մոդելները ունեն ինչպես շոշափելի առավելություններ, այնպես էլ զգալի թերություններ: Մեր կողմից նախատեսվում է մշակել ՀՀ կրթության ոլորտում բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման սինթետիկ մոտեցում, որը հանդիսանում է միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող RoSI (School Matter's Return on Spending Index from Standard & Poor's) և EEI (Efficiency/Effectiveness Index) մեթոդների յուրօրինակ համադրություն: Նպատակահարմար է որպես արդյունքային հայտանիշ դիտարկել ագրեգացված ցուցանիշ, որի բաղադրիչները կհանդիսանան կրթության բյուջետային ֆինանսավորման առանձին թիրախային ուղղություններում նպատակների կենսագործման մակարդակի մասնակի գնահատականները, իսկ դրանց կշռային գործակիցները կհաշվարկվեն գործոնային վերլուծության գործիքակազմի կիրառմամբ:

Որպես կրթության ոլորտի ընդհանրական արդյունքի բաղադրիչ գնահատականներ նպատակահարմար է օգտագործել հանրապետության կրթական համակարգի առանձին ենթահամակարգերում իրավիճակը բնութագրող մասնակի քանակական ցուցիչները, որոնք միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվում են բյուջետային ծախսումների արդյունավետության գնահատումներում: Այդ ցուցանիշներից են, մասնավորապես՝

- կրթական համակարգի առանձին մակարդակներում սովորողների ընդգրկվածության հարաբերական ցուցանիշները և չափանմուշային երկրներից դրանց հեռավորությունները,
- կրթական համակարգի առանձին մակարդակներում մատուցվող ծառայությունների որակից շահառուների բավարարվածության սուբյեկտիվ գնահատականները,
- կրթական գործընթացի տարբեր փուլերում անցկացված ստուգումների, քննությունների արդյունքային գնահատականները, դրանց բաշխվածության օրինաչափությունների հետազոտության արդյունքները,
- կրթական հաստատությունների շրջանավարտների մրցունակության գնահատականները,
- սոցիալ-տնտեսական զարգացման ցուցիչները, որոնք կարող են դիտարկվել որպես կրթական ծախսերի սոցիալական արդյունավետության բնութագրիչներ:

Նկարագրված մոտեցմամբ կարելի է մշակել ՀՀ կրթության ոլորտում բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման մեթոդ, դրա հիման վրա կատարել ծախսերի արդյունավետության և նպատակայնության վերլուծություն:

Հավելված. Ծրագրի իրագործման արդյունքային և միջանկյալ ցուցիչների թիրախային մակարդակներն ու դրանց փաստացի իրականացման աստիճանը

Ցուցիչը (ըստ ծրագրի բաղադրիչների)	Միջանկյալ թիրախը	Փաստացի արդյունքը	Թիրախի իրագործման աստիճանը	Վերջնական թիրախը	Վերջնական թիրախի իրականացման հավանականությունը
Ենթաբաղադրիչ 1.1 Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում					
Միկրոծրագրերի թիվը	60	80	Գերակատարված է	120	Իրականացված է
Հաճախող երեխաների թիվը	1200	2430	Գերակատարված է	2400	Իրականացված է
Մասնակից խմբում ՎԶԳ միջին գնահատականը	Մասնակից խմբում ՎԶԳ միջին գնահատականը պետք է ավելի բարձր լինի, քան ստուգիչ խմբում, ընդ որում՝ այդ տարբերությունը պետք է լինի վիճակագրորեն նշանակալի	Մասնակից խմբում ՎԶԳ միջին գնահատականը նշանակալիորեն բարձր է, քան ստուգիչ խմբում:	Ամբողջությամբ կատարված է	Մասնակից խմբում ՎԶԳ միջին գնահատականը պետք է ավելի բարձր լինի, քան ստուգիչ խմբում, ընդ որում՝ այդ տարբերությունը պետք է լինի վիճակագրորեն նշանակալի	Բարձր
Ենթաբաղադրիչ 1.2. Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը					
Վերանորոգված ավագ դպրոցներ, համաձայն ՀՀ շինարարական և անվտանգության չափանիշների	8	5 ավագ դպրոցներ նախատեսվում է շահագործման հանձնել առաջիկա ամիսներին	Կատարված է մասամբ	17	Վերջնական թիրախը ծրագրով նախապես սահմանված ժամկետներում չի իրագործվելու
Նորագույն նյութատեխ-նիկական բազայով և կրթական ռեսուրսներով համալրված ավագ դպրոցների ցանցի ստեղծում	40	0	Չի կատարվել	107	Խիստ ցածր
Ավագ դպրոցում սովորողների ընդգրկվածության աճ	Տարեկան պարբերականությամբ կատարել հետազոտություններ՝ պարզելու համար, թե արդյո՞ք ծրագրի շրջանակներում աջակցություն ստացող ավագ դպրոցներում աշակերտների հաճախելիության մակարդակը նշանակալիորեն տարբերվում է մյուս ավագ դպրոցներում հաճախելիությունից:	Ոչ մի հետազոտություն չի կատրավել	Թիրախը չի իրագործվել	Տարեկան պարբերականությամբ կատարված հետազոտություններով ցույց տալ, որ ծրագրի շրջանակներում աջակցություն ստացող ավագ դպրոցներում աշակերտների հաճախելիության մակարդակը նշանակալիորեն բարձր է մյուս ավագ դպրոցներում հաճախելիությունից:	Խիստ ցածր
Ենթաբաղադրիչ 1.3. Կրթության համակարգում փվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում					
Դպրոցների տեխնիկական և ծրագրային ապահովման համար կայուն հիմքերի վրա դրված տեխսպա-սարկման և ծրագրային ապահովման կառուցվածքի (համակարգի) գործարկում	Համակարգը նախագծված և փորձարկված է	Մշակվել ծրագրային ապահովման փորձնական տարբերակը, ներդրումը հետաձգվում է	Թիրախը չի իրագործվել	Համակարգը լրիվությամբ աշխատունակ է և գործում է ՀՀ ողջ տարածքում	Խիստ ցածր
Վերապատրաստված աշխատողների թվաքանակը	2500	Մշակված են վերապատրաստման մոդուլները, ընտրվել են 30 վերապատրաստողներ	Թիրախը չի իրագործվել	4000	Խիստ ցածր

Ցուցիչը (ըստ ծրագրի բաղադրիչների)	Միջանկյալ թիրախը	Փաստացի արդյունքը	Թիրախի իրագործման աստիճանը	Վերջնական թիրախը	Վերջնական թիրախի իրականացման հավանականությունը
Ենթաբաղադրիչ 1.4. Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով					
Վերանայված և լրամշակված առարկայական չափորոշիչների ու ծրագրեր	6	Վերջնական տեսքի է բերվել առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման տեխնիկական առաջադրանքը	Թիրախը չի իրագործվել	10	Ցածր
Բաղադրիչ 2. Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը					
ՆՄՀ ծրագրերի շուրջ 10 շահառու բուհեր	10	12	Միջանկյալ թիրախը իրագործվել է	10	Վերջնական թիրախը գերակատարված է
Պետական-մասնավոր համագործակցության բարելավում բարձրագույն կրթության ոլորտում՝ կոնսորցիում ծրագրերի թիվը հասցնելով 4-ի	4	5	Միջանկյալ թիրախը իրագրոծվել է	4	Վերջնական թիրախն արդեն իսկ գերակատարված է

Նշումների համար

NCPPR

Նշումների համար

NCPPR

Նշումների համար

NCPPR